

25.794

Վ . Խ Ի Ժ Ն Յ Ա Կ Ո Վ

**Ս Ո Վ Ո Ր Ե Ց Ե Ք**  
**Ք Ն Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**Կ Ա Տ Ա Ր Ե Լ**



334  
Խ-51

1926

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ա Յ Կ Ո Ո Պ Ի

05 JAN 2010

334

h-51

Վ. Վ. ԽԻՃՆՅԱԿՈՎ

**ՍՈՎՈՐԵՑԵՔ**  
**ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ**

ՀԱՄԱՌՈՏ ԶԵՌՆԱՐԿ ԿՈՊՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱՏՈՒԳԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԹԱՐԳՍ. Գ. ՆՍՋՍՐՅՍՆԻ

Հրատարակություն «Հայկոպ»-ի և «Հայգյուղկոպ»-ի

ՅԵՐԵՎԱՆ

1926

### ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Կոոպերատիվների առողջացման համար տարվող կամպանիան շատ լայն ծավալ է ընդունել: Այդ կամպանիայի ընթացքում կոոպերատիվ աշխատանքի բոլոր հիվանդագին ու թույլ կողմերը յերեվան են բերված:

Կոոպերատիվներում կատարվող չարաշահությունների, վատնումների, յուրացումների ու անտնտես գործունեության մասին մամուլի մեջ հրատարակվել են բազմաթիվ փաստական տվյալներ: Այդ տվյալները, վոր կոոպերացիայի հետազոտության արդյունքն են, հնարավորություն են տալիս նշելու այն ուղիները վորոնցով կոոպերատիվ ցանցը դեպի առողջացում ու ամրացում պիտի գնա: Առողջացումը պիտի կատարվի նախ՝ կենտրոնների դեկավարությունը լավացնելով սկզբնական կոոպերատիվների վերաբերմամբ, ապա՝ կոոպերատիվ աշխատանքների վորակական ընտրության ու շոկումի միջոցով և յերկրորդ՝ կոոպերատիվ ապարատի բարելավմամբ ու նրա կապն ամրացնելով, ինչպես գյուղի բոլոր հասարակական հիմնարկությունների հետ, նույնպես և ազգաբնակչության լայն մասսաների հետ:

Լայն մասսաների հետ կապված չլինելը սկզբնական կոոպերատիվների կյանքում առաջացրել է շատ անառողջ յերեւոյթներ: Կոոպերատիվ կազմակերպությունները համարյա թե ամենուրեք ապրել են «իրենց սեփական կյանքով»: Տեղական ազգաբնակչությունը ակտիվ մասնակցություն չի ունեցել կոոպերատիվի կյանքում. չի յեղել հասարակական վերահսկողություն: Յեւ դրա հետեանքն այն է յեղել, վոր մի փոքրիկ խումբ մարդիկ կոոպերատիվի գործերը տարել են այնպես, ինչպես ուղեցել են: Իսկ այսօրությունից առաջացել են գողություն, չարաշահություն, ծուլություն, անպատասխանություն, վատնումներ և այլն:

Վերստուգիչ հանձնաժողովները վատ են աշխատել՝ համարյա ամեն տեղ ծածկելով այն յայտառակությունները, վոր կոոպերատիվներում կատարվել են: Մինչդեռ՝ վերստուգիչ հանձնաժողովների դերը կոոպերատիվների առողջացման ու ամրացման գործում հսկայական է: Հենց դրա համար՝ վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքներին ներկայումս հատուկ ուշադրություն է դարձված: Հանձնաժողովների ընտրության ժամանակ



3721-53

նակ հատուկ ուշք պիտի դարձնել ընտրվողների վորակի վրա: Միայն այդ պայմանով է, վոր վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքը տրված կըլինի յուր բարձրության վրա: Աշխատողների ընտրությունը— մանավանդ սկզբնական ցանցում— ներկայումս կենտրոնական խնդիր է կոոպերատիվների համար: Յերկրորդ պայմանը, վոր վերստուգիչ հանձնաժողովների գործունեության հաջողությունը կարող է ապահովել— դա ազգաբնակչության հետ ամենասերտ կապ հաստատելն ու նրան կոոպերատիվ շինարարության ակտիվ մասնակից դարձնելն է: Չի կարելի քննությունը ձեռնարկելն կատարելով բավականանալ: Կան այնպիսի կոոպերատիվներ, վորոնց գործերը ձեռնարկ անարդյունք «կարգին զրության մեջ են», վորոնք վատնումներ ու յուրացումներ չունեն, սակայն, չընայած այդ բոլորին, կոոպերատիվը առաջ չի գնում: Պատահում է, վոր կոոպերատիվում նստած են շատ ազնիվ մարդիկ, սակայն գործերը վատ են գնում, հասարակական տնտեսությունը քայքայվում է: Այդ պատճառով վերստուգիչ հանձնաժողովների գործը միայն ձեռնարկ քննությունը չէ: Նրանք պիտի կոոպերատիվ աշխատանքի հիմնական բոլոր խնդիրներն ընդգրկեն: **ՈՎԲԵՐ ԵՑ** **Կոոպերացման լեճքարկվում** (հասարակական վճիռ խավերը). **Խնչպես է կոոպերատիվը բավարարում յուր անդամներին ու կողմնակիներին.** **Խնչ սնեստակաց ցվածումներ է անում նա.** **Խնչ ոգուս է թալիս յուր անդամներին.** **Խնչպես է կապված ազգաբնակչության հետ—** **անա այս և նման հարցերը պարզաբանելով է, վոր վերստուգիչ հանձնաժողովի նշանակությունը կոոպերատիվ շինարարության մեջ յուր լուրջ բովանդակությունն է ստանում: Յեվ նրա այդ աշխատանքին պետք է ակտիվ կերպով գործակցեն ու ոգնեն ազգաբնակչության լայն խավերը:**

Մենք նորից ընդգծում ենք, վոր կոոպերացիայի առողջացման գործում վերստուգիչ հանձնաժողովների դերը հսկայական է: Միայն թե՛ նրանց աշխատանքները պիտի համապատասխան բարձրության վրա դրվեն: Հենց այդ պատճառով ամեն մի քայլ վոր այս ուղղությամբ արվում է՝ պետք է վողջունել: Այս մըտքով Վ. Վ. Խիժնյակովի այս գիրքը կարող է մեծ ոգուտ տալ: Սա մի գործնական ձեռնարկ է սկզբնական կոոպերատիվների վերստուգիչ հանձնաժողովների համար: Յեվ յեթե ի նկատի առնենք, վոր հատկապես սկզբնական կոոպերատիվ ցանցում շատ սուր է զգացվում փորձված ու գիտակից աշխատողների պակասը՝ ապա այս գրքի հրատարակությունը մեր կարծիքով ավելի քան անհրաժեշտ է և կատարվում է ժամանակին:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոոպերատիվներում ներկայումս հաճախ յերևան յեկող վատնումներն ու յուրացումները, ապրանքների անխնամ պահելու հետևանքով առաջացող պակասորդները, գործերի անկարգ զրությունը և այլն—ցույց են տալիս, վոր կոոպերատիվի գործերը լավ հիմքերի վրա չեն դրված: Այդ բոլոր յերևույթները վկայում են վոչ միայն այն, թե կոոպերատիվ վարչության մեջ անազնիվ մարդիկ են նստած, կամ այնպիսի մարդիք, վորոնք կոոպերատիվի միջոցները խնայել չգիտեն, այլ և ցույց են տալիս, վոր կոոպերատիվներում վերստուգիչ հանձնաժողովի կողմից հսկողության գործը թույլ է տարվում:

Համենայն դեպս՝ այդ փաստերը վկայում են, վոր կոոպերատիվի գործը վատ է դրված, վոր բացակայում են պայմաններ, վորոնք պիտի անհրաժեշտորեն պահպանվեն՝ գործին կանոնավոր ընթացք տալու համար:

Այդ պայմանները ընդհանուր առմամբ հետևյալներն են.

1. Կոոպերատիվի անդամները պիտի ազատ կերպով ընտրեն իրենց վարչական մարմինների մեջ այն անձանց, վորոնց ճանաչում ու հավատում են:

2. Կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովները (կամ լիազորների ժողովները) պիտի ամենալուրջ ուշադրությամբ վերաբերվեն իրենց պաշտոնատար անձանց ընտրության գործին՝ ընտրելով նրանց, վորոնք հայտնի յեն իրենց ազնվությամբ ու տնտեսավար լինելովը:

3. Կոոպերատիվում պիտի կանոնավոր տարվի հաշվապահությունը, պիտի փորձված հաշվապահ լինի, վորը միաժամանակ լինելու յե նաև ազնիվ մարդ, վորպեսզի յերբեք, անազնիվ վարչությանը հաճոյանալու համար՝ հանձն չառնի հաշվապահական գրքերում այս կամ այն վոչ ճշգրիտ գրանցումը կատարել:

4. Վարչությունը պիտի շարունակ հետևի կոոպերատիվի գործերի ընթացքին, ծառայողների ու առհաշիվ անձանց գործունեությանը, ոտուգելով նրանց հանձնած գրամներն, ապրանք-

ներն ու այլ արժեքները, ըստ վորում, այդ ծառայողների հետ պիտի կնքված լինեն պայմանագրեր, նրանց—իրենց գործի պարտականությունների վերաբերյալ—պիտի արվեն հրահանգներ. իսկ ծառայողներին հանձնված արժեքները պիտի ապահովված լինեն գրավականներով ու պարբերական հաշվետվություններով:

5. Դրամի յեւք ու մուտքի վերաբերմամբ պիտի պահպանվեն հետևյալ ընդհանուր կանոնները:

ա) Կոոպերատիվի կանխիկ գրամները պիտի միշտ պահվեն կոոպերատիվի գրամարկդի մեջ և վոչ յերբեք վարչության անդամների մոտ:

բ) Կոոպերատիվին հասանելիք գումարները պիտի ստացվեն կոոպերատիվի գանձարկղում, գրասենյակում կամ վարչության սենյակում: Ապրանքների վաճառքից դոյացած գումարը ամեն օր պիտի հանձնել գանձարկղին:

գ) Կոոպերատիվի բոլոր վճարումները պիտի կատարվեն գանձարկղից. միայն առանձին հանձնարարություններ կատարելիս՝ վարչության անդամները կամ ծառայողները՝ յիւր գործուղման մեջ են, կարող են ծախսեր կատարել կոոպերատիվի հաշվին, ստանալով դրա համար առհաշիվ գումարներ:

դ) Առհաշիվ գումարների ծախսելու վերաբերմամբ առհաշիվ գումարներ ստացող անձինք՝ գործուղումներից վերադառնալուց անմիջապէս հետո՝ պարտավոր են գրավոր հաշիվ ներկայացնել՝ կցելով հաշվին բոլոր արդարացուցիչ փաստաթղթերը:

յե) Դրամարկդից՝ առանց վարչության գրավոր կարգադրության և առանց հաշվապահական գրքերով անց կացնելու, վճարումներ կատարելը խիստ արգելվում է:

զ) Ի հաշիվ ոռձիկի (զեռ չծառայած ժամանակի համար) վարչության կամ ծառայողներին կանխույթներ (ավանսներ) տալը չպիտի թույլատրել:

է) Դրամարկդում մեծ գումարներ չպիտի պահել:

6. Ապրանքների (ու նյութերի) մուտքի ու յեւքի վերաբերմամբ պիտի պահպանվեն հետևյալ ընդհանուր կանոնները.

ա) Ապրանքի ընդունելն ու բաց թողնելը պիտի կատարվի հատկապէս դրա համար վորոշված տեղում (խանութ, պահեստ և այլն):

բ) Գնված ապրանքն ընդունելիս՝ վարչությունը պիտի գրավոր կերպով վավերացնի՝ թե արդյոք ապրանքը յուր քանակով, վորակով ու գնով համապատասխանում է գնման պայմաններին:

գ) Ապրանքների գնահատումը, ինչպէս նաև գների բարձրացումն ու իջեցումը պիտի հաստատվեն վարչության վորոշումներով:

դ) Ապրանքները պիտի վաճառվեն հաստատված գներով, ըստ վորում այդ գները պիտի կախված լինեն խանութում կամ պահեստում, վորտեղից ապրանքը բաց է թողնվում:

յե) Կոոպերատիվի կարիքների համար (կամ ապառիկ՝ առանձին անհատների) ապրանք բաց թողնել կարելի յե միայն վարչության գրավոր կարգադրության հիման վրա:

զ) Վարչության անդամներին, ծառայողներին կամ կողմնակի անձանց փոխարինարար ապրանքներ տալը չի թույլատրվում:

է) Ապրանքի փշանալու կամ անհետանալու դեպքում՝ վարչությունը պիտի անմիջապէս արձանագրություն կազմի:

7. Վերստուգիչ հանձնաժողովի անդամ պիտի ընտրել միայն այն մարդկանց, վորոնք քննության գործին ծանոթ են, լավ գրագետ ու հաշիվ հասկացող են, վորոնք կարող են հասկանալ, թե գրքերի միջ ինչ է գրված և վորոնց կարելի յե վստահել, թե նրանք իրենց շահերի համար վարչության չարաչահությունները չեն ծածկի:

8. Վերստուգիչ հանձնաժողովը չպիտի բավականանա միայն տարեհաշիվը քննելով. նա պիտի հաճախակի ստուգումներ կատարի կոոպերատիվի առանձին ձեռնարկների մեջ և ընդհանրապէս միշտ հսկողություն պիտի ունենա կոոպերատիվի գործունեության ընթացքի վրա:

9. Բացի վերստուգիչ հանձնաժողովի քննություններից՝ անհրաժեշտ է, վոր տարեկան առնվազը մի անգամ կոոպերատիվի գործերը քննության յենթարկվեն կոոպերատիվ կենտրոնի քննիչի կամ հրահանգչի կողմից\*):

Այս գիրքը կազմված է նրա համար, վոր վերստուգիչ հանձնաժողովները սովորեն իրենց պարտականությունները կատարել ավելի կանոնավոր ու բարեխիղճ, քան մինչև այժմ:

\* Ծանօթ. Անդրկովկասյան բարձր իշխանությունների կարգադրությամբ կոոպերատիվների քննությունը կենտրոնի կողմից—տարեկան առնվազը մի անգամ— պարտադիր է: Թարգմ.

# I ՔՆՆՈՒՅՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒՅՅՈՒՆԸ

Կոոպերատիվների համար քննությունը պարտադիր եւ Այդ պահանջում են թե կոոպերացիայի մասին գոյություն ունեցող որեւէ քննարկ, թե կոոպերատիվների կանոնադրությունները: Այդ անհրաժեշտ ե նաև իրեն, կոոպերատիվի համար:

Վերստուգելի հանձնաժողովը կոոպերատիվ կազմակերպությունների լիազոր մի մարմինն է, վոր ընտրվում է ընդհանուր ժողովի (կամ լիազորների ժողովի) կողմից: Նա ընդհանուր ժողովի աչքն է. նա պետք է դիտի այն բոլորը, ինչ վոր կատարվում է կոոպերատիվում. նա պիտի տեսնի — կոոպերատիվի գործերը լսվ կն ընթանում, թե կազում են:

Յեթե նույնիսկ որեւէ քն ու կանոնադրությունը չպահանջելին, վոր կոոպերատիվները վերստուգելի հանձնաժողովներ ընտրեն, կոոպերատիվներն իրենք պիտի անհրաժեշտությունը զգային և պիտի ստեղծելին վերստուգելի հանձնաժողովներ:

Ընկերական, հասարակական գործը անհրաժեշտորեն պահանջում է խիստ հաշվառում: Հասարակական յուրաքանչյուր կոպեկի հաշիվը պետք է մաքուր պահել: Առանց դրան, վոչ միայն գործի մեջ պարզություն չի լինի, այլ և ընկերություն մասնակցողների կողմից հավատ ու վստահություն չի լինի գործի ղեկավարների վերաբերմամբ: Ամեն մի զրույց, ամեն մի բարատանք այն մասին, վոր վարչությունը շիտակությունը չի տանում իրեն հանձնած գործը (թեկուզ այդ զրույցը, բարատանքը իզուր է և չապացուցված) կարող է «հալած յուզի տեղ անցնել», յեթե չի կարելի տեղն ու տեղը ստուգում կատարել և հասկանալն ապացուցել:

Այնպիսի մի հանձնաժողովի գոյությունը, վոր հսկում է վարչության գործերին, հավաս է ցեղեցում ընկերություն անդամներին այն մասին, թե ընկերություն մեջ չարաշահություններ չեն կատարվում, թե ընդհանուրի ունեցվածքը չի թալանվում և ընկերության գործերը տնտեսորեն են տարվում:

Բացի այդ՝ վերստուգելի հանձնաժողովի գոյությունը, վստահություն ու հավատ է ներշնչում նմանապես այն անձանց ու հիմնարկներին, վորոնց հետ կոոպերատիվը գործ է ունենում — ամենից առաջ յուր կենտրոնին: Իսկ առանց այդ հավատի, առանց այդ վստահության կոոպերատիվը հաշտությունը աշխատել չի կարող, վորովհետև անհրաժեշտ է, վոր նրան հավատան՝

նրան ապրտնքային կամ գրամական վարկեր տան և կոոպերատիվ կենտրոնները կամ պետական առևտրական կազմակերպությունները նրա վրա նայեն վորպես մի կազմակերպության վրա, վորի հետ կարելի չէ գործ ունենալ:

Բայց վերստուգելի հանձնաժողովը ընտրելը քիչ է: Կարևոր է, վոր այդ հանձնաժողովը կարողանա լավ հսկել կոոպերատիվի գործերին ու կարողանա քննել նրա գործունեությունը:

Հինց գրա համար՝ պետք է հանձնաժողովի մեջ այնպիսի մագիկ ընտրվեն, վորոնք ընտրվում են վոչ թե անձնական որուտից, շահից յեխնելով, այլ ընդհանուր, ընկերական գործին ոգնած լինելու համար և վորոնք վարչություն անդամներին մտտիկ կամ ազգական չեն ու վերջիններիս գործունեությունը կողմնապահությունը չեն գնատի:

# II ՎԵՐՍՏՈՒԳԵԼ ԶԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերստուգելի հանձնաժողովի անդամները շատ լավ պիտի գիտենան, թե ընկերություն կանոնադրությունը է թե ընդհանուր ժողովի կողմից հաստատված այն բոլոր կանոնները, վորոնց հիման վրա ընկերություն գործարքները կատարվում են: Յեթե վերստուգելի հանձնաժողովը այդ բոլորը չգիտե, նա անկարող կլինի ստուգել, թե ընկերություն գործերը վերջան կանոնավոր են գնում:

Յեթե վերստուգելի հանձնաժողովի վոչ բոլոր անդամները, գոնե նրանցից յերկու հոգի պիտի կարողանան հասկանալ հաշվապահական գրքերն ու վստատիվները: Առանց դրան՝ անկարելի չէ կանոնավոր քննություն կատարել: Հանձնաժողովի անդամներն անպատճառ պիտի այնպես անեն, վոր նրանց համար անդամներն անպատճառ պիտի մեջ ինչ է կատարվում: Իսկ յեթե այդ չի կարողանում գլուխ հանել իրեն ներկայացված հաշիվներից ու վստատիվներից, ապա անհրաժեշտ է, վոր դիմի իմացող մարդկանց ոգնություն:

Վատ է այն վերստուգելի հանձնաժողովը, վորն ընկերություն տարեկան հաշիվներ ընտրության համար է միայն յերեան գալիս: Հանձնաժողովի այդպիսի աշխատանքն էլ կանոնավոր լինել չի կարող:

Վերստուգելի հանձնաժողովը պիտի մշակակն հսկողություն ունենա՝ թե ընկերություն գործերը ինչպիսի ընթացք ունեն:

Բացի ընկերութեան գործերի ընդհանուր քննութեանից, նա շարունակ պիտի ստուգուին կատարի: Միայն այս պայմանով նա յուր պարտականութեանները կատարած կլինի:

Յանկալի եւ վոր հանձնաժողովի անդամներն, ընկերութեան գործին լավ ծանոթ լինելու համար՝ շարունակ հաճախեն վարչութեան ու խորհրդի նիստերին: Սակայն, այս չի նշանակում, վոր նրանք ամեն ոք ընկերութեան գործերի մեջ խառնվելով վարչութեանը պիտի իսնագրեն:

Յեթե հանձնաժողովը՝ ղեկավարելով վարչութեան գործունեութեանը՝ գործերի մեջ նկատի վորեւէ անկանոնութեան — նա իրավունք չունի վոչ փոխելու վարչութեան վորոշումը, վոչ արգելելու նրան՝ յուր վորոշումներն իրականացնել: Այդպիսի դեպքերում նա կարող է միայն վարչութեանը հայտնել վերջինիս սխալ գործողութեան կամ կարգադրութեան մասին: Այդպիսի հայտարարութեաններն եւ պիտի արվեն ամբողջ վերստուգիչ հանձնաժողովի անունից՝ նրա վորոշման հիման վրա — հանձնաժողովի նիստում հարցը քննութեան առնելով: Հանձնաժողովի առանձին անդամներն իրավունք չունեն հանձնաժողովի անունից՝ առանց լիազորութեան, այս կամ այն հայտարարութեան անելու: Կուրջ դեպքերում հանձնաժողովը իրավունք ունի վարչութեանից պահանջելու ընդհանուր ժողովի հրավիրում, վորպեսզի այս կամ այն հարցը վերջինիս քննութեանը գնի: Սովորաբար, ըստ կանոնադրութեան, վերստուգիչ հանձնաժողովը եւ կարող է ընդհանուր ժողով հրավիրել, յեթե միայն վարչութեանը՝ հարկավոր դեպքում, վերստուգիչ հանձնաժողովի պահանջով չի հրավիրում այն:

Յեթե պատահում է, վոր վարչութեանը չի կատարում յուր պարտականութեանը եւ տարեհաշիվը ժամանակին չի կազմում, վերստուգիչ հանձնաժողովը ինքն է այդ անում, ըստ կանոնադրութեան, հրավիրելով զրա համար հարկավոր աշխատողներ:

Հանձնաժողովի անդամները պատասխանատու չեն՝ թե ամբողջ հանձնաժողովի գործունեութեան համար, թե նրա առանձին անդամների կարգադրութեանների համար: Յեթե հանձնաժողովի անդամներից մեկը համաձայն չի հանձնաժողովի այս կամ այն վորոշմանը՝ նա կարող է յուր առանձին կարծիքը մտցնել տվյալ նիստի արձանագրութեան մեջ եւ այս կերպ նա ազատվում է այդ վորոշումից ըղիտղ պատասխանատվութեանից:

Ահա ընդհանուր առմամբ հանձնաժողովի իրավունքներն ու պարտականութեանները:

Հանձնաժողովը պիտի աշխատի վոչ թե պատահաբար՝ դեպքից դեպք, այլ ծրագրված կերպով եւ պլանաչափ:

Հենց վոր հանձնաժողովը ընտրվում է՝ նա հավաքվում է յուր ապագա գործողութեանների ծրագիրը մշակելու համար: Նա յուր նիստերի համար ժամանակ է վորոշում եւ յուր անդամների մեջ բաժանում է առանձին պարտականութեանները: Մեկին հանձնարարում է ընկերութեան գործերի մի ճյուղին հետեւել մյուսին — մի այլ ճյուղին եւ այլն: Հանձնաժողովը պիտի ընտրի յուր նախագահն ու քարտուղարը: Ժամանակ առ ժամանակ՝ որինակ՝ ամիսը մի անգամ — հանձնաժողովը պիտի նիստեր ունենա: Այն ամենը, ինչ վոր նա վորոշում է, պիտի գրվի արձանագրութեանների գրքում, վորը պահվում է ընկերութեան ընդհանուր գործերի հետ:\*)

Ընտրվելուց հետո՝ հանձնաժողովը անմիջապես պիտի ծանոթանա նախկին վերստուգիչ հանձնաժողովների նիստերի արձանագրութեանների ու քննական գործողութեանների հետ: Այդ կերպ նա կիմանա, թե ընկերութեան գործերի վոր կողմերին պիտի նա հատուկ ուշադրութեան դարձնի: Յեթե նախկին հանձնաժողովները լավ են աշխատել, ապա հանձնաժողովի այդ ծանոթանալը միաժամանակ լավ աշխատանքի կսովորեցնի հանձնաժողովի անդամներին:

Նույնպես շատ անհրաժեշտ է, վոր վերստուգիչ հանձնաժողովը ծանոթանա կոոպերատիվ կենտրոնի\*\*)

հրահանգչի վերջին քննական արձանագրութեան հետ:

Ամեն մի քննութեան պիտի մանրակրկիտ լինի — այնպես վոր քննութեան վերջը կասկած չըմնա, թե ընկերութեան գործերը բոլորը չեն ստուգված, կամ մնացել են չընկատված անկանոնութեաններ ու չարաշահութեաններ: Յեթե վերստուգիչ

\*) Սպառողական ըագմանախնամ ընկերութեանները բացի վերստուգիչ հանձնաժողովներից ունենում են նաև խանութային հանձնաժողովներ: Հետեւելով առանձին բաժանմունքների գործերի ընթացքին՝ այդ հանձնաժողովները մասնակցում են ալրանքների ստուգումներին, գնահատմանը եւ այլ գործերին: Վերստուգիչ հանձնաժողովը իրեն ոժանդակութեան հրավիրելով այդ խանութային հանձնաժողովներին, վոչ մի դեպքում վերջինիս չի կարող տալ յուր իրավասութեաններն ու պատասխանատվութեանը:

(Փանքարքյուն) — Սանութային հանձնաժողովների մասին տես „Դն-նիսով“ — է կազմակերպեցեք խանութային հանձնաժողովները՝ բերուշուրը: Հրատարակութեան Հայկոպի. 1925 թիվ. Դարաբերիտե)

\*\*\*) Հայաստանում սպառողական կոոպերատիվների կենտրոնը „Հայկոպն“ է, իսկ գյուղատնտեսական կոոպերատիվների կենտրոնը „Հայգյուղկոպը“:

հանձնաժողովը ընկերություն գործերը թեթև և քննում և ընկերություն բացերն ու պակասները, վատնումներն ու չարաշահությունները չի նկատում, ապա այդպիսի քննությունը վոչ միայն գործին ոգուտ չի տալիս, այլ մեծ վնաս և տալիս, վորովհետև ընկերության վնաս հասցնող վարչական մարմինները կամ առանձին անհատները, տեսնելով վոր իրենց «գործերը» չբացվեցին՝ ավելի վատահումքամբ են շարունակում են ընկերության գործերն իրենց շահերին ծառայեցնել:

Վորպեսզի քննություն կատարվի և յեղրակացություններ հանվեն, թե ընկերություն գործերը վորքան կանոնավոր կամ անկախանոն են ընթանում, անհրաժեշտ և, վոր հանձնաժողովի անդամները գիտենան, թե ինչպես և կատարվում քննությունը: Դրա համար կարելի է, վոր վերստուգիչ հանձնաժողովի ձևերի տակ լինեն թե այս ձևանարկը և թե կոոպերատիվ ընկերությունների հաշվապահության ձևանարկներ, վորտեղ մանրամասն կերպով կարելի չի գտնել հաշվապահության ու քննության վերաբերյալ համապատասխան տեղեկանքներ<sup>\*)</sup>:

Այն ընկերությունները, վորտեղ միայն վարչություն կա, առանց խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովներ կարտականությունները միայն քննությունամբ չեն սահմանափակվում: Այս դեպքերում վերստուգիչ հանձնաժողովները փոխարինում են խորհրդին և վարչության կողմից հրավիրվում են ընկերության բոլոր կարևոր գործերի քննությանը: Խորհրդի փոխարեն, նրանք քննության են առնում այն հաշվետվություններն ու նախահաշիվները, վորոնք վարչության կողմից ընդհանուր ժողովին են ներկայացվելու: Դրանց վերաբերմամբ՝ ինչպես նաև բոլոր կարևոր հարցերի վերաբերմամբ՝ հանձնաժողովը յուր յեղրակացությունն և տալիս ընդհանուր ժողովին:

Գրքի հետագա գլուխներում ցուցումներ են տրվում հանձնաժողովների քննական գործողությունների վերաբերմամբ:

**Ծանոթություն.** — Հատկապես խորհուրդ ենք տալիս Գյուղատնտես. ու վարկային ընկերություններին ունենալ 1) «Справочную книжку для кредитных товариществ» հրատ. «Кoop. изд-во в Москве. 2) Ищенко «Очетоводство сель-хоз. «Кредит. товариществ» Հրատ. Նույնի: Իսկ Սպանոկոոպներին՝ ունենալ 1) Շալովի «Հաշվապահության ձևանարկը» և 2) «Գործակառարի հաշվառումը» — Հրատ. Հայկոոպի:

### III. ԻՆՉՊԻՍԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՍ

Քննությունները լինում են. ա) լրիվ կամ հիմնական և բ) մասնակի:

**Լրիվ ԲՃՆՈՒՐՈՒՄ** կոչվում է այն քննությունը, վորն ընդգրկում է ընկերության ամբողջ անտեսությունը և վարչական մարմինների բոլոր գործողությունները՝ ընկերության բոլոր գործերի վերաբերմամբ, ըստ վորում՝ հաշվվում են ընկերության բոլոր ունեցվածքները (գանձարկը, ապրանք, գույք), համեմատվում են այդ հաշվառման արդյունքները գրքերի ավյուրների հետ, համեմատվում են հաշվապահական գրանցումները փաստաթղթերի հետ, և միաժամանակ պարզվում է, թե վարչություն գործողություններն ինչքան են կանոնավոր յեղել այն ժամանակաշրջանում, վորի վերաբերմամբ քննություն և կատարվում:

**Փասնակի ԲՃՆՈՒՐՈՒՄ** և կոչվում նույն քննությունը, ըստ վոչ թե ընկերության ամբողջ անտեսության վերաբերմամբ, այլ այդ անտեսության առանձին ճյուղերի կամ ձևանարկների, նույն իսկ առանձին գործարքների (որինակ ապրանքների գնումների) վերաբերմամբ, վորոնք այս կամ այն պատճառով հանձնաժողովի ուշադրություն են գրավել:

Քննությունները, նայած թե ինչ ժամանակ են կատարվում, լինում են **հերթական** և **արակարգ**:

**Հերթական ԲՃՆՈՒՐՈՒՄ** կատարվում են նախորդ վորոշված ժամկետներին՝ տարեկան, կիսամյա և այլն: Մովորաբար, **արակարգ** մի **անգամ** կատարվում է ընկերությունների գործերի լրիվ քննություն՝ համաձայն վարչության հաշվետու ժամանակաշրջանի:

**Արակարգ ԲՃՆՈՒՐՈՒՄ** կատարվում են նախորդ վորոշված ժամկետային քննություններից: անկախ Արտակարգ քննությունները կարող են լինել թե լրիվ, թե մասնակի: Վերստուգիչ հանձնաժողովը նման արտակարգ քննություններ կատարում է բոլոր այն դեպքերում, յերբ վարչության գործունեությունը նրա մեջ կասկածներ և հարուցում: Ի հարկե, հանձնաժողովն արտակարգ քննություններ պիտի կատարի վոչ թե ամեն մի գանդակարգ կամ բողոքի հիման վրա, այլ միայն այն դեպքում, յերբ նա տեղի հիմքեր ունի կասկածելու վարչության գործունեությունը:

Հերթական ու արտակարգ քննությունները իրենց բնույթով իրարից տարբերվում են:

Հերթական քննությունը միացվում է վարչություն մի տարվա կամ կիսամյա հաշվետվության ստուգման հետ: Դեռ նախ քան այդ հաշվետվության կազմելը՝ վերստուգիչ հանձնաժողովը վարչության հետ միասին հաշվի յե առնում դրամարկղի փողը, ապրանքները, գույքը, հում նյութերը, ըստ վորում այդ հաշվառումը պիտի վերաբերվի հաշվական տարվա վերջին որին:

Այդ կարգի հերթական քննությունները սովորաբար կատարվում են՝ ճախոհոհ համաձայնության գալով վարչության հետ:

**Արտակարգ բնույթի վերստուգումները սովորաբար լինում են հանկարծակի և այն նպատակով, վոր ընկերության անդամներն ու կողմնակի անձինք հավատան, թե վոչ մի բան վերստուգիչ հանձնաժողովից չեր կարող նախորոք ծածկվել. նաև նրա համար՝ վոր վերստուգիչ հանձնաժողովի կասկածները ընկերության գործերի գրություն կամ վարչության այս ու այն անդամի գործունեության մասին տեղն ու տեղը ստուգվեն՝ առանց ժամանակ կամ հնարավորություն տալու՝ «գործը ծածկելու համար»:**

## VI. ԻՆՉԻՑ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԸ

Ընկերությունը կարող է վնասներ ունենալ այն դեպքերում, յերբ ընկերության վարչությունը կամ ծառայողները վաճառախառնողներ են կամ անգագնիվ են:

Վերստուգիչ հանձնաժողովը պիտի պարզի՝ թե մեկը, թե մյուսը, վորպեսզի ընկերության ընդհանուր ժողովը անպետք մարդկանց փոխարեն կարողանա այնպիսիներին ընտրել, վորոնք ընկերությանը վոչ միայն վնաս չեն տա, այլ ընդհակառակը՝ կբարեկազմեն, ոգտակար կգարձնեն նրա գործը:

Ընկերությունը վնասվում է, յերբ նրա վարչությունը կամ ծառայողները **Անհատիվ ծախսեր են անում** (ի գուր տեղը, կամ վոչ անհրաժեշտ չափերով):

**Ընկերության անհատությունը կամ նրա առանձին նյութերը չեն գնում պաճաճ հիմքերի վրա, (միջոցները բաշխում են գանազան ձևերով կերպի մեջ աննպատակահարմար կերպով, լավ չեն սգտագործվում վարկերը, անհաջող գնումներ կամ վաճառքներ են կատարվում):**

**Ձեռն կատարում կամ անփույթ են կատարում իրենց պատկանությունները, վորի հետևանքով ընկերության մեջ աշխատանքը վատ է ընթանում, — հսկողության պակասությունից վատնումներ են լինում — ապրանքները, նյութերը կամ գույքը վչանում են:**

**Ընկերության անգագնեի են անընկերակաճ վերաբերումներ են ցույց տալիս՝ նրանց հետ վարվելով անուշադրությամբ, կողմնակիցությամբ, հրամայողի նման: Դրա հետևանքով ընկերության անդամները ստոչում են, ընկերությանը չեն աջակցում և իրանց կարիքներին համար գերադասում են դիմել մասնավոր անձանց:**

**Անբարեխիղճ վերաբերումներ ունեն դեպի գործը, վորի հետևանքով ընկերությունը վնասվում է: (Վարչությունը կամ ծառայողները ոգտվում են ընկերության հիմնարկներով՝ գլխավորապես անձնական շահն ի նկատի առած՝ ի վնաս ընդհանուրի շահերին: Իրանց համար ապագիկ ապրանքներ են վերցնում, կողմնապահություն են անում իրենց ազգականների ու մտակիների, նկատմամբ, ընկերության գանձարկղը ժամանակին չեն մտցնում ընկերության պատկանող գումարները, վոչ անհրաժեշտ և յերկարատե գործուղողներ են ստանում, ոտճիկը ժամկետից առաջ են ստանում և այլն):**

**Անգագնիվ վերաբերումներ ունեն դեպի գործը (չարաշահություններ, վատնումներ, գողություններ, զեղծումներ, յուրացումներ կամ նման գործողությունների մասնակցություն):**

Քննության յենթարկելով ընկերության փաստաթղթերն ու հաշվապահությունը՝ վերստուգիչ հանձնաժողովները պիտի ի նկատի առնեն հետևյալ չարաճախությունների հնարավորությունը:

### Դրամի մուսբի գեպներում

Դրամական գումարները մուսբ չեն գրված կամ պակաս են գրված գրքերում:

Այդպիսի դեպքեր լինում են, յերբ վարչության անդամներից կամ ծառայողներից վոր և է մեկը ստանալով փոստից, անդամներից, կողմերատիվ կենտրոնից, բանկից, այլ հիմնարկներից կամ անձերից վոր և է գումար՝ ա) այն չի մտցրել գանձարկղը և գրքերով անց չի կացրել կամ, բ) մտցրել է գանձարկղը ու անց է կացրել հաշվական գրքերով վոչ ամբողջությամբ:

Այդ չարաշահությունը կարող է չպարզվել՝ ա) յերբ վոր փողն ստանալիս ընկերության կողմից որինական ստացական

չի տրված, բ) յերբ տրված ստացականի արմատում ցույց է տրված ավելի պակաս գումար՝ քան թե ստացված է և գ) յեթե զբաժանական մուտքերի անդորրագրերի գրքույկը հանձնաժողովին չի ներկայացված:

**Դրամի յելի գեպհերում**

Հաշվապահական գրքերով կարող են գրանցվել այնպիսի ծախսեր՝ ա) վորոնք բոլորովին չեն արվել, բ) վորոնք արվել ու գրանցվել են մի անգամ և գրանցվում են յերկրորդ անգամ, և գ) վորոնք ավելի մեծ գումարով են ցույց տրված՝ քան իսկապես յեղել են:

Այդ կարգի չարաշահությունները լինում են, յերբ կատարված ծախսի արդարացուցիչ փաստաթուղթը կամ՝ ա) չի ներկայացված կամ՝ բ) ներկայացված է կեղծ փաստաթուղթ կամ՝ գ) ներկայացված է կեղծ, ընկերության պաշտոնյայի հետ համաձայնեցրված փաստաթուղթ (որվանակ հաշիվ) և կամ՝ դ) յերբ մի և նույն ծախսի համար ստացված է յերկու փաստաթուղթ\*):

**Ապրանքի մուտքի գեպհերում**

Գնված ապրանքը կամ՝ ա) պահեստը չի մտել ու հաշվապահական գրքերով չի գրանցված կամ՝ բ) միայն մասամբ է մտած ու գրքերով անց կացված:

Այս կարգի չարաշահությունները կարող են յերևան չբերվել՝ ա) յեթե ապրանքն ընդունվում է առանց փաստաթղթի, բ) յեթե փաստաթուղթը հանձնաժողովին չի ներկայացված և գ) յեթե ապրանքի ընդունման արձանագրություն չի կազմված կամ կազմված է կեղծ արձանագրություն:

**Ապրանքի յելի գեպհերում**

Հնարավոր են ապրանքների յեղքերի գրանցումի (ի հաշիվ փչացած ապրանքների կամ ընկերության կարիքների համար ծախսումների) գեպհեր վորոնք՝ ա) իրականում չեն յեղել, բ) յեղել ու գրանցվել են և յերկրորդ անգամ են գրանցվում

\* ) Բացի այդ՝ լինում են դեպքեր, յերբ չարաշահություն անողը ներկայացնում է ին գործերից վերցրած փաստաթուղթ: Դրա համար անհրաժեշտ է, վոր փաստաթղթերը քննելիս՝ ուշադրություն դարձվի վոչ միայն ստորագրությանը, այլ և թե յերբ է գրված այն:

և գ) գրանցված են ավելի մեծ գումարով, քան իրական յեղել են:

Այս կարգի չարաշահությունները կարող են յերևան չբերվել՝ ա) յերբ գրանցումները կատարվում են առանց որինական փաստաթղթի (վարչության զբաղոր կարգադրություն, ապրանքների փչացման մասին արձանագրությունները և այլն), բ) յերբ փաստաթուղթը հանձնաժողովին չի ներկայացրած, գ) յերբ կեղծ փաստաթուղթ է կազմված:

**Չարաշահություններից աջակցելը կամ նպաստելը**


Պատահում է, վոր ընկերության պաշտոնատար անձինք մասնավոր անձանց հետ զանազան գործարքները կատարելիս խոշոր վնասներ են պատճառում ընկերությանը՝ գնումների ժամանակ ավելի գումարներ վճարելով, իսկ վաճառքի ժամանակ պակաս ստանալով: Այս դեպքերում ընկերության պաշտոնյան կաշառք է ստանում (յերբեմն այդ կաշառքը կոմիսսիոն վարձատրություն է կոչվում) կամ հյուրասիրում է, իսկ զբա լիսարեն՝

1. Գնված ապրանքի համար կազմում է հաշիվ, վորի մեջ ցույց է տալիս քաշի և գների ավելի մեծ թվեր, քան իրական համաձայնությունն է յեղել:
2. Ապրանք է բաց թողնում ավելի եծան գնով, քան թե կարելի յեր:
3. Ընկերության համար անպետք ապրանքներ է ձեռք բերում:
4. Ընկերության համար անհրաժեշտ ապրանքներն ու գույքը ուրիշին և տալիս կամ բաց թողնում ուրիշին:

Այս կարգի չարաշահությունները կարող են չպարզվել՝ յեթե վարստուգիչ հանձնաժողովը մանրակրկիտ չի քննում այն բոլոր գործարքները (գնումներ, վաճառք, կապալով առնելը կամ տալը), վոր ընկերությունն ունեցել է մասնավոր անձնավորությունների հետ:

**Վ. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Վերստուգիչ հանձնաժողովը, քննության հավաքվելով՝ պիտի քննության առնի յուր գործողությունների կարգը և աշխատանքը պիտի բաժանի յուր անդամների միջև:



Յեթե հանձնաժողովը հաշվապահութիւն չգիտե՞ անհրաժեշտ է ժամանակին կոտակերատիվ Միութեան հրահանգչին հրավիրել: Վերջինս հանձնաժողովին կողմի քննութեան գործում: Յեթե հրահանգիչը չի կարող գալ՝ պիտի հրավիրել կողմնակի մի հաշվապահ (կամ հաշվետար) վորը քննութեան կատարել գիտե և ընկերութեան համար կողմնակի անձ է: Ուստի անհրաժեշտ է, վոր հանձնաժողովը յուր արամագրութեան տակ վորոշ միջոցներ ունենա՞ հրավիրված անձի աշխատանքը վարձատրելու համար: Ընդհանուր ժողովները չպիտի ժլատութեան անեն և հանձնաժողովին վորոշ գումար չարամագրեն: Այլապես՝ ընկերութեան անդամները չեն կարող վստահ լինել, թե քննութեանը կանոնավոր է կատարված ու ամեն ինչ պարզվել է:

Սխալ կլինեք, յեթե ամեն մի ստուգում հանձնաժողովի բոլոր անդամները խմբովին կատարելին: Ավելի հարմար է աշխատանքները բաժանել և ստուգումները միաժամանակ մի քանի տեղ կատարել: Այդպիսով քննութեան ընթացքը շատ արագանում է: Բայց անհրաժեշտ է, վոր հանձնաժողովը չմոռանա մի հիմնական որոշում—այն, վոր քննական բոլոր գլխավոր գործողութեաններին պիտի մասնակցեն առնվազն յերկու հոգի: Այսպես ուրիշակ՝ ապրանքների ստուգումը (յեթե նրանք քանակով ու տեսակներով շատ են) և հաշվապահութեան հետադրութեանը անպատճառ պիտի յերկու հոգով կատարել:

Սովորաբար լրիվ քննութեանը մի որում վերջացնելը անհնարին է՝ յեթե նույն իսկ ընկերութեան հաշվապահութեանն ու գործավարութեանը կանոնավոր են դրված: Նույն իսկ այս դեպքում՝ անհրաժեշտ է մի քանի որովա աշխատանք՝ մասնավանդ այն ընկերութեաններում, վորոնք մեծ անտեսութեան ունեն. իսկ այն դեպքում, յերբ հաշվապահութեանն ու գործավարութեանը խճճված են՝ քննութեան համար շատ ժամանակ է պահանջվում: Յերբեմն վերստուգիչ հանձնաժողովը՝ մի քանի գործողութեաններ կատարելուց հետո՝ ստիպված է լինում յուր աշխատանքն ընդհատել: Այսպիսի դեպքերում անհրաժեշտ է ապահովութեան ունենալ, վոր կատարված չարաչափութեանների հետքերը չեն ծածկվի: Հանձնարարելով վարչութեանը կարգի բերել հաշվապահութեանն ու գործավարութեանը, հանձնաժողովը քննութեան համար նոր ժամկետ է նշանակում:

Աշխատանքների բաշխումից հետո՝ քննական գործողութեաններ ընթացքում վերստուգիչ հանձնաժողովը պարտա-

վոր է մի քանի նիստեր ունենալ՝ քննելու ու վորոշելու համար այն հարցերը, վորոնք քննութեան ժամանակ են առաջանում:

Անհրաժեշտ է, վոր վերստուգիչ հանձնաժողովը յուր աշխատանքները տանի քննութեան յենթարկվողների հետ՝ վարչութեան ու ծառայողների մասնակցութեամբ՝ ստանալով վերջիններիցս կարևոր տեղեկանքներ, բացատրութեաններ ու փաստաթղթեր: Ընկերութեան գործերի առանձին ճյուղերի վարիչների ներկայութեանը քննութեան ժամանակ նույնպես կարևոր է, վոր այդ վարիչները քննութեան վերջում չասեն, թե նրանք քննութեանը ներկա չեն յեղիկ քննութեան արդյունքների հետ համաձայն չեն: Այսպիսի հայտարարութեանների առաջն առնելու համար՝ անհրաժեշտ է, վոր հանձնաժողովի բոլոր արձանագրութեանները (ղրամարկղի կամ ձեռնարկների ստուգում, հաշվապահութեան հետադրութեան և այլն) շահագրգռված պաշտոնյաների կողմից ստորագրված լինեն: Ինքն ըստ ինքեան հասկանալի յե, վոր յեթե վերջիններս համաձայն չեն հանձնաժողովի յեղրակացութեաններին՝ նրանք իրավունք ունեն, արձանագրութեաններն ստորագրելիս՝ այդ անհամաձայնութեանները մտցնելու արձանագրութեան մեջ՝ ստորագրելուց առաջ:

Վերստուգիչ հանձնաժողովին հատկապես անհրաժեշտ է հաշվապահի ոգնութեանը: Բացի հաշվական գրանցումներնի մասին այս կամ այն բացատրութեանը տալուց՝ հաշվապահին է հանձնարարվում—հանձնաժողովի հակողութեամբ՝ հանձնաժողովի համար շրջանառութեաններ տեղեկագրեր ու հաշվեկշիռներ կազմել:

Յերբեմն կարևոր է լինում վորոշ հարցեր կազմել՝ հարց ու փորձի յենթարկելով ընկերութեան անդամներին, կամ մասնավոր անձանց, վորոնց հետ ընկերութեանը գործ է ունեցել:

Միաժամանակ՝ անհրաժեշտ է, վոր հանձնաժողովի նախագահը նախորդ հոգ տանի Միութեանից կամ այլ հիմնարկութեաններին—վորոնց հետ ընկերութեանը գործ է ունեցել— ընկերութեան ունեցած շրջանառութեաններն ու հաշիվների քաղվածքները ստանալ՝ համեմատելու: համար հաշվապահական գրքերի տվյալների հետ: Յերբեմն կարող է անհրաժեշտ լինել նաև անդամագրքույկներ հավաքել, վորպեսզի, ինչքան հնարավոր է՝ առանձին անդամների հաշիվները ևս համեմատութեան դրվեն՝ ընկերութեան հաշվապահութեան տվյալների հետ:

Բոլոր քննական գործողութեանները պիտի տեղի ունենան լարչութեան սենյակում և նրա ներկայացուցիչների ներկայու-

թյամբ: Հանձնաժողովի անդամները ընկերութեան գործերը, առանձին գրքերն ու փաստաթղթերը յերբեք իրենց հետ չպիտի վերցնեն՝ տանը ծանոթանալու նպատակով:

Հանձնաժողովի անդամները քննութեան ժամանակ պիտի ունենան մի տետր, վորի մեջ նշանակում են այն բոլոր հարցերը, վոր քննութեան ժամանակ ծագում են և հետագայում պիտի պարզվեն: Նույն տետրի մեջ նշանակվում են նաև այն յեզրակացութիւնները, վոր հետագայում հանձնաժողովի քննութեան ու հավանութեան պիտի տրվեն: Հանձնաժողովը յուր նիստերի արձանագրութիւններն և պահում, վորոնց մեջ գրվում են նրա բոլոր վորոշումները:

Ընկերութեան վարչութիւնը ամեն կերպ պիտի աջակցութիւն ցույց տա վերստուգիչ հանձնաժողովին՝ կատարելով վերջինիս բոլոր որինական պահանջները: Վարչութիւնը պիտի հանձնաժողովին տրամադրի ընկերութեան բոլոր գործերը: Հանձնաժողովի առաջ պիտի բաց լինեն ընկերութեան բոլոր փաստաթղթերը, գործավարութիւնը, հաշվապահական գրքերը, գանձարկը, պահեստները և այլն: Յետե պատահի, վոր վարչութիւնը մերժի հանձնաժողովին տրամադրել այս կամ այն դիւրքը, ֆաստաթուղթը, կամ ցույց չտա այս կամ այն պահեստը, խառնութիւն կամ ձեռնարկը՝ այս և նման դեպքերը պիտի քննական արձանագրութեան մեջ մտցվեն վորպէս սլաշտոնական գանցառութիւն և ընկերութեան ընդհանուր ժողովին պետք և սյս մասին գեկուցվի:

Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր և քննութեան յենթարկել ամեն տեսակի գանգաւաններ, վորոնք ընկերութեան գործերին կամ աշխատողներին են վերաբերվում: Հենց այդ պատճառով քննութեան առաջին նիստում բոլոր գանգաւանները (յետե այդպիսիները կան) պիտի հանձնաժողովի անդամներին մեջ բաժանվեն՝ համապատասխան հետազոտութեան համար:

## VI. ՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՍՐԳԸ

Քննական բոլոր դեպքերի համար անկարելի յե ընդհանուր ցուցմունքներ տալ: Քննութեան կարգը վորոշվում և՛ նայած թե սովյալ քննութիւնը ի՞նչպիսի քննութիւն և և ի՞նչ նպատակով և արվում: Բացի այդ՝ քննութեան կարգը կարող և փոխվել ընկե-

րութեան գործերի դրութեան այլև ուրիշ առանձնահատուկ պայմանների շնորհիվ:

**Հերթական ու լրիվ քննութիւններն սկսվում են սովորաբար այլ կերպ, քան արտակարգ քննութիւնները, վորոնք արվում են այս կան այն պատճառներից գրգռած:**

Վարչութեան տարեկան հաշվետուութեան հետ կապված քննութիւնը սովորաբար յերկու մասի յե բաժանվում. արտակարգ քննութիւնը կատարվում և միանգամից:

Քննական հաշվական տարին սովորաբար վերջանում և սեպտեմբերի 30-ին կամ դեկտեմբերի 31-ին: Վերստուգիչ հանձնաժողովը վարչութեան հետ միասին պիտի ստուգուցեն կատարի ու պարզի, թե ընկերութիւնն այդ տարեվերջին ի՞նչպիսի արժեքներ ունի — դրամ գույք, ապրանք և այլն: Վերստուգիչ հանձնաժողովի քննութեան արդիւնքները թվական տրվյալներով վարչութեան տարեկան հաշվետուութեան փաստական մնացորդներն են: Յեզ յերբ հաշվապահական բոլոր գրքերը փակված են, տարվա բոլոր հաշիւները գրանցված են գրքերով և համաձայն գրքերի սովյալների տարեհաշիւն և կազմվում, վերստուգիչ հանձնաժողովն ստուգում և, թե արդյոք բոլոր գրանցումները կանոնավոր են արված և տարեհաշիւը ճիշտ և կազմված: Սովորաբար գրքերի փակելը և տարեհաշիւի կազմելը մի ամիս, յերբեմն նույն իսկ յերկու-յերեք ամիս և տևում: Հենց այդ պատճառով տարեկան քննութիւնը յերկու մասի յե բաժանվում և կատարվում և հետեյալ կարգով: Նախ՝ հաշվառվում են առ 1-ն հոկտեմբերի կամ առ 1-ն հունվարի դրամարկղի, պահեստի ու խանութի ապրանքների, գույքի և այլ արժեքների փաստական մնացորդները, իսկ մի ամսից (գուցե և յերկու-յերեք ամսից) հետո, յերբ տարեհաշիւը սլատրաստ և, կատարվում և հաշվապահութեան ու նրա հետ կապված փաստաթղթերի ստուգումը, ըստ վորում, հասկանալի յե, վոր վերստուգիչ հանձնաժողովը յուր աշխատանքի թե առաջին մասում, թե յերկրորդ, նկատողութիւններ և անում ընկերութեան գործերում յուր կողմից յերեան բերած թերութիւններն ու բացերի վերաբերմամբ:

Արտակարգ ու հանկարծակի քննութիւնը անհրաժեշտորեն յուր մեջ պիտի միացնի վերև ցույց տված քննական բոլոր գործողութիւնները — թե գանձարկի, ապրանքների, գույքի փաստական հաշվառումը և թե գրքերի ու փաստաթղթերի ստուգումը: Այդ բոլոր գործողութիւնները պիտի միաժամանակ կատարվեն

և յեթե հաշվապահութիւնը քննութեան ժամկետից հետ ե մնացել (իսկ այդ շատ հաճախ ե պատահում), այդ հանգամանքը չի կարող քննութիւնը չկատարելու պատճառ դառնալ: Քննութիւնը պիտի ստուգի այն ամենը, ինչ վոր կարևոր ե՝ գործը պարզելու համար, թեև բոլոր հաշիվներն ու փաստաթղթերը գրանցված ել չլինեն: Իսկ յեթե այս կամ այն փաստաթուղթը չկա, կամ որինական չե, այդ արդեն ինքնին ցույց ե տալիս, վոր գործը անկանոն դրութեան մեջ ե և անկարգ ե տարվում:

**Մասնակի բնութագրում** կարգը վորոշվում ե նրանով, թե նայած՝ ինչն ե առիթ տվել այդ քննութեան:

Յեթե քննութեան ե յենթարկվում վորևե առանձին գործարք՝ որինակ ընկերութեան համար մեքենաների կամ վորևե պետական ու մասնավոր հիմնարկից ձեռք բերած ապրանքների գնումը և այդ գնումների մասին լուրեր են տարածվել, թե անկանոն են կատարված, այսպիսի դեպքերում, բացի գնված մեքենաների կամ ապրանքների քննութեանից, նրանց վորակը վորոշելուց, բացի այդ գնումների հետ կապված փաստաթղթերի ստուգումից, գուցե կարևոր լինի և առանձին հարցում անել այն հիմնարկին կամ անձին, վորից այդ գնումները կատարվել են: Կարող են պատահել դեպքեր, յերբ նույն իսկ կարևոր ե վերստուգիչ հանձնաժողովի անդամներից մեկի հատուկ գործողութիւնը նման գործերը տեղերում քննելու նպատակով:

Յեթե մասնակի քննութեան ժամանակ ոտուգման ե յենթարկվում ընկերութեան առանձին մի ձեռնարկը (որինակ սպառկողի մասվաճառանոցը կամ փուռը կամ նրա բաժանմունքներից մեկը կամ գյուղատնտեսական ընկերութեան ելեքտրադաշտը կամ պանրի գործարանը),—այս դեպքում վերստուգիչ հանձնաժողովը՝ տվյալ ձեռնարկի վերաբերմամբ հավաքելով բոլոր կարևոր տեղեկութիւնները և վարչութեան գրասենյակից ստանալով իրեն անհրաժեշտ տեղեկանքները, (յեթե կարելիոր ե նաև մասնավոր մարդկանցից ցուցումներ ու վկայութիւններ ընդունելով), գրանից հետո յե քննական գործողութիւնների ձեռնարկում՝ ըստ յուր նախորոշած ծրագրի: Յեթե կասկած կա, վոր կատարվող չարաշահութիւնը կարող են «պարտակել», (ծածկել) ապա՝ պիտի անմիջապէս փաստական ստուգումների ձեռնարկել՝ անսպասելի, հանկարծակի կերպով:

**Լրիվ ստուգում** սկսվում ե սովորաբար գանձարկից բնութագրից. գանձարկից հետո՝ պիտի ստուգման յենթարկել ընկերու-

թեան այլ արժեքները. հաշվառման պիտի յենթարկվեն ընկերութեան պատկանող բոլոր ապրանքները, հում նյութերը, գույքը, շարժական ու անշարժ կայքը, ըստ վորում, պիտի ցուցակագրում կատարվել և պարզել այդ բոլորի արժեքի ընդհանուր գումարը: Դրանից հետո՝ հանձնաժողովը ստուգում ե հաշվապահական գրքերն ու փաստաթղթերը և համեմատում ե փաստական հաշվառման տվյալները գրքերի մնացորդների հետ:

Բոլոր նկատված սխալների ու անկանոնութիւնների վերաբերմամբ վերստուգիչ հանձնաժողովը նկատողութիւններ ե անում, վորպէսզի քննութեան հետագա գործողութիւնների ժամանակ այդ բոլորը պարզի:

Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր ե տարվա ընթացքում ժամանակ առ ժամանակ հետազոտութեան յենթարկել ընկերութեան գրասենյակը, գործավարութիւնը և առանձին ձեռնարկները:

Բոլոր ստուգումների ու հաշվառումների վերջում վերստուգիչ հանձնաժողովը մանրամասն կերպով կանգ ե առնում ընկերութեան ամբողջ գործերի ու նրա առանձին ճյուղերի գործունեութեան վրա՝ ձեռքի տակ ունենալով յուր քննական գործողութիւնների ու տարվա ընթացքում կատարված հետազոտութիւնների և դիտողութիւնների արդյունքը:

Վորովհետև վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրենք ընկերութեան անդամներ են, նրանք շատ լավ գիտեն, թե վարչութեան վոր անդամին կամ վոր ծառայողին կարելի յե շատ հավատալ՝ վորին տվելի պակաս: Համաձայն դրա՝ նրանք պիտի իրենց քննական գործողութիւններին ուղղութիւն տան և ընկերութեան թույլ կողմերին հատուկ ուշադրութիւն դարձնեն:

## VII ԱՐԺԵՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

### I Դրամարկը

Յեթե վերստուգիչ հանձնաժողովը յենթադրում ե, վոր ընկերութեան գանձապահը վորևե չարաշահութիւն կամ կեղծիք ե արել, ապա նա պիտի հենց քննութեան սկզբից ընկերութեան դրամարկի մնացորդը ստուգման յենթարկի: Յեթե այդ հնարադրամարկի մնացորդը ստուգման յենթարկի: Յեթե այդ հնարադրամարկը կնքում ե, վոր չե անմիջապէս անել՝ հանձնաժողովը դրամարկը կնքում ե, կամ փակում ե այն սենյակը, վորտեղ դրամարկը ե պահվում:

Դրամարկղի քննութիւնը կատարվում է գանձապահի ներկայութեամբ: Յեթե վերջինս ժամանակավորապես բացակայում է՝ ստուգումը պիտի հետաձգել: Յեւ միայն այդ դեպքում, յետ վերստուգելի հանձնաժողովը նկատի, թե գանձապահը ստուգումից խուսափում է, նա վորոշում է դրամարկղը ստուգման յենթարկել՝ առանց գանձապահի մասնակցութեան:

Յեթե գանձապահը հանձնաժողովի պահանջով չի ներկայացնում դրամարկղի բանալիները, այդ ինքնին արդեն պաշտօնական հանցագործութիւն է և կարող է հանձնաժողովի համար հիմք ծառայել՝ հայտնելու միլիցիային կամ քրեյական բաժնին ուր յենթադրութիւնները գանձապահի վատնումների մասին՝ խնդրելով հիշյալ մարմիններին՝ դրամարկղը բանալ: Առանց իւրաքանչիւր գանձապահի բացակայութեամբ վոյ մի դեպքում չպիտի բացալ: Դրամարկղը բանալիս՝ անհրաժեշտ է հրավիրել նաև վարչութեան անդամներին և յերկու կողմնակի անձանց՝ վորպես վկաների: Դրամարկղը բանալուց հետո՝ արձանագրութիւն է կազմվում, վորի մեջ գրվում են այն բոլոր հանգամանքները, վորոնք առիթ են տվել դրամարկղը բանալուն, այլ և մեկ-մեկ թվում են այն բոլորը, ինչ վոր դրամարկղի մեջ յերևան է հանված: Այդ արձանագրութիւնը ստորագրվում է ներկա յերդների բոլորի կողմից՝ իշխանութեան, վարչութեան, այլ և վկաների: Յեթե դրամարկղի ստուգումը տեղի յե ունենում գանձապահի բացակայութեամբ, թեև վերջինս ուղարկած լինի բանալին, դրամարկղը ստուգվում է անպայման վարչութեան մի այլ անդամի ներկայութեամբ:

Դրամարկղը ստուգման յենթարկելու ժամանակ՝ անհրաժեշտ է (ամեն տեսակ թյուրիմացութիւններից ու վեճերից խուսափելու համար), վոր նրա մեջ գտնված դրամն ու այլ արժենքները հաշվի ինքը գանձապահը՝ վերստուգելի հանձնաժողովի հսկողութեան տակ: Հաշվելուց առաջ՝ հաշվառումն արագացնելու համար՝ անհրաժեշտ է, վոր բոլոր դրամները ըստ իրենց արժենքների բաժանվեն՝ ուր բլիանոցները ուր բլիանոցների հետ, անձաթյա դրամները (10, 15 և 20 կ.) ըստ իրենց արժենքների, ջուլ-ջուկ և այլն:

Կանխիկ դրամը հաշվելուց հետո՝ հանձնաժողովը հաշվում է նաև դրոշմանիշները և փոստային մարկանները, յետ հետոնց վրա ծախսված գումարները՝ վորպես ծախսված դրամ, գուրս չեն

գրված: Ապա՝ հաշվառման են յենթարկվում բոլոր տեսակի արժենքավոր թղթերը (խաղարկու փոխառութեան արլիգացյաները, գյուղացիական փայեր և այլն) — վորոնք պիտի դրամարկղում պահվեն — այդ թղթերի վրա նշանակված գումարները ի մի գումարելով:

Յերբեմն դրամարկղում բացի փողից, դրոշմանիշներից ու արժենքավոր թղթերից պահվում են նաև վարչութեան սնդակների կամ այս ու այն աշխատակցի ստացականները, ըստ վորում այդ ստացականները, իբրև յեւք, դեռ գրանցված չեն լինում: Վերստուգելի հանձնաժողովը նմանորինակ յերևույթը պիտի արձանագրի վորպես անկանոն ու անթույլատրելի յերևույթ, թեկուզ քննութեան ժամանակ այդ գումարները նույնիսկ հետ դարձնվելու լինին:

Դրամարկղի մեջ փաստորեն գտնված գումարը համեմատութեան պիտի դնել գանձարկղի կամ մայր մատյանի դրամարկղային հաշվի մնացորդի հետ: Այս մնացորդը (սալդո), — վոր ստացվում է հիշյալ գրքերի ձախ կողմի (դերեատի) գումարից աջ կողմի (կրեդիտ) գումարը հանելով, — պիտի համապատասխանի դրամարկղային մնացորդին:

Յեթե այդ յերկու թվերը (փոստական մնացորդը և գրքերով ստացված մնացորդը) իբար չեն համապատասխանում, ապա կարելի յե յենթադրել, վոր կամ դրամարկղը մտել է կամ դրամարկղից ծախսվել է վորևէ գումար, վորը գրքերով չի անցել: Այսպիսի դեպքում հաշվապահը պիտի իսկույն և յետ այդ գրանցումները կատարի:

Յեթե այդպիսի յենթադրութիւնը չի արդարանում և գուրս է գալիս, վոր բոլոր գրանցումները ժամանակին կատարված են, ապա վարչութեան վերստուգելի հանձնաժողովի գրավոր առաջարկութեամբ պիտի կարգադրի, վոր հաշվապահը՝ ա) դրամարկղում գտնված ավելցուկ գումարը մուտքի հաշվին անցկացնի, կամ բ) դրամարկղում յերևան հանված պակասորդը գրի գանձապահի հաշվի պարտքին:

Վերստուգելի հանձնաժողովը դրամարկղի ստուգման ժամանակ պիտի պարզի, թե արդյոք ընկերութեան դրամներն ու արժենքները անվտանգ են պահվում, դրամարկղում չեն պահվում ընկերութեան չպատկանող դրամներ, գանձապահը մտցնում է արդյոք բանկ դրամարկղում կուտակվող մեծ գումարները, վարչութիւնը յուր կողմից ամսական ստուգումներ կատարում է,

գանձապահը համեմատում է յուր դրամարկղային մնացորդները գրքերի հետ և վճիռքան հաճախ:

Քննելով դրամարկղը՝ հանձնաժողովը պարզում է, թե հետագա քննական աշխատանքների համար դրամարկղում ել լինչ փաստաթղթեր են պահվում (մուրհակներ, անդամների ստորագրություններ՝ պատասխանատվության մասին, չեկային գրքեր և այլն):

Դրամարկղի հաշվառման արձանագրությունը կազմվում է այս ձևով:

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ընկերության (գրել ընկերության լրիվ անունը) դրամարկղի ստուգման:

Առ \_\_\_\_\_ ամսի \_\_\_\_\_ -ը 192 թ.

Հաշվառումը կատարեցին վերստուգիչ հանձնաժողովի անդամներ

(թվել բոլորի անուն, հայրանուն, ազգանունները), վարչության անդամներ \_\_\_\_\_ -ի

(թվել բոլոր ներկա յեղողների անուն, հայրանուն, ազգանունները) ներկայությամբ:

Հաշվառումը դրամարկղում յերևան է հանել	
Կանխիկ դրամ	ոուր. կոպ.
Դրոշմանիչ ու ֆոստ. մարկ.	ոուր. կոպ.
Արժեքավոր թղթ. (թվել անուն և №№)	ոուր. կոպ.
Բացի այդ՝ դրամարկղում գտնված են	հատ (այսքան հատ)
Ժամանակավոր ստացականներ	ո. կ.

վորոնք դրամարկղի գրքերով չեն գրանցված:

Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներ (ստորագրություններ):

Վարչության անդամներ (ստորագրություններ):

### 2. Ապրանքներ ու նյութեր

Ընկերության պատկանող ապրանքներն ու նյութերը կորող են մի քանի տեղերում պահվել: Հանձնաժողովը պիտի նրանց հաշվառումը կատարի ջղի-ջողի և բոլորի համար առանձին ցուցակներ պետք է կազմի: Ցուցակների մեջ պիտի ցույց տրվեն ապրանքների ու նյութերի առանձին անունները, նրանց քանակը և արժեքը՝ այն գներով, ինչ գներով նրանք հաշվառման են

յնթարկվում հաշվապահության կողմից (ինքնարժեքով կամ վաճառքի գնով): Հետագայում արդեն այդ ցուցակները (տեղեկագրերը) խմբերի յեն բաժանվում՝ համաձայն մայր մատյանի առանձին հաշիվների (որինակ՝ կենտրոնական պահեստ, բաժանմունքներ, արդյունաբերական ձեռնարկներ, փուռ, ճաշարաններ, ջրաղաց և այլն և այլն):

Բացի այդ՝ կոմիսսիոն հիմունքներով վաճառելու համար ընդունված ապրանքների ցուցակը պիտի առանձին կազմել:

Ապրանքների ու նյութերի հաշվառումը պիտի կատարեն վերստուգիչ հանձնաժողովի անդամներից գոնե յերկու հոգի: Նրանցից մեկը կշռում, հաշվում, չափում է, իսկ մյուսը գրում է առանձին առանձին այն ապրանքներն ու նյութերը, նրանց վերաբերվող թվական տվյալներով, վոր թելագրում է առաջինը:

Ապրանքների և նյութերի ցուցակը անպայման կազմվում է պահեստապետի, պատասխանատու գործակատարի կամ տվյալ հաշվառման յենթարկվող ձեռնարկի վարիչի ներկայությամբ: Ըստ վորում՝ հաշվառման տվյալները գրում են վոչ միայն վերստուգիչ հանձնաժողովի անդամը, այլ և վերոհիշյալները: Յերկու ցուցակները վերջում համեմատվում են և յիթե այս կամ այն ապրանքի վերաբերմամբ տարբերություններ կան, յերկրորդ անգամ են կատարվում ստուգումներ՝ այդ տարբերությունների վերացման համար:

Յեթե պահեստապետը, պատասխանատու գործակատարը կամ առանձին ձեռնարկների վարիչները, խուսափում են քննությանը ներկա լինելուց՝ վերստուգիչ հանձնաժողովը այդպիսի դեպքերում ճիշտ նույնպես պետք է վերաբերվի, ինչպես նա վերաբերվում է դրամարկղի ստուգման ժամանակ՝ յիթե գանձապահը բացակա յի լինում:

Ստուգումների ժամանակ պահեստը, խանութը և առհասարակ բոլոր ձեռնարկները պիտի փակ լինեն և կողմնակի անձանց մուտքը պետք է արգելվի՝ աշխատանքները առանց խանգարումների տանելու նպատակով:

Նախ քան հաշվառումը՝ ապրանքները պիտի հարմար դասավորել՝ այնպես, վոր քաշով ապրանքները մի կողմ լինեն, հատով ապրանքները մի այլ կողմ և այլն: Այդ կերպ հաշվառման աշխատանքը շատ հեշտանում է:

Հաշվառման ժամանակ առանձնապես պիտի նկատել այն ապրանքներն ու նյութերը, վորոնք անպետք են կամ փչացած:

Այս մասին հատուկ արձանագրութիւն պիտի կազմել վերստու-  
գիչ հանձնաժողովի և հաշվառման յենթարկվող ձեռնարկի (պա-  
հետապետ, գործակատար) վարիչի ստորագրութիւններով:

Հաշվառման ցուցակները ևս պիտի ստորագրվեն վերստու-  
գիչ հանձնաժողովի անդամների և հաշվառման յենթարկվող ձեռ-  
նարկի վարիչի կողմից. յեթե ստուգումներին մասնակցում ե նաև  
վարչութիւնի ներկայացուցիչը (իսկ այդ անհրաժեշտ ե) վերջինս  
նույնպէս պիտի ստուգման արդյունքներին ստորագրի:

Յեթե ստուգումը վոր և ե ձեռնարկում մի որվա մեջ չի  
վերջանում, ապա աշխատանքն ընդհատվում ե մինչև հետևյալ  
օրը: Այս դեպքում տվյալ հիմնարկը փակվում ե յերկու կող-  
պէքներով, վորոնցից մեկի բանալին մնում ե վերստուգիչ  
հանձնաժողովի մոտ, իսկ մյուսը ստուգման յենթարկվող ձեռ-  
նարկի վարիչի մոտ:

Ստուգման փաստական մնացորդները համեմատուբայն ե  
գրվում հաշվապահական գրքերի մնացորդների հետ՝ նախորոք  
հավաստիանալով, վոր բոլոր ֆաստաթղթերն ու հաշիվները  
գրանցված են:

Այս համեմատութիւնի ժամանակ հանձնաժողովը կարող ե  
յերկու տեսակ դեպքերի պատահել:

**1-ին դեպք.** — Ընկերութիւնի հաշվապահութիւնը ապրանայ  
գիրք ե տանում, վորի մեջ հաշվառման ե յենթարկվում ամեն  
մի առանձին ապրանք (քանակով ու գումարով): Այդ գրքի հի-  
ման վրա կազմվում ե շրջանառութիւնի տեղեկագիր, վորի առան-  
ձին սյուեյակներում ցույց ե տրվում տվյալ ապրանքի շարժու-  
մը («մնացորդ», «մուտք», «յեկք», «մնացորդ»): Այս վերջին  
մնացորդը պիտի համապատասխանի վերստուգիչ հանձնաժողովի  
ցուցակագրման արդյունքներին՝ առանձին առանձին խանութնե-  
րի, ձեռնարկների, պահեստների վերաբերմամբ:

**2-րդ դեպք.** — Ընկերութիւնի մեջ հատուկ ապրանքային գիրք  
չի տարվում, այլ ապրանքները տրվում են առանձին հիմնարկի  
(պահեստ, խանութ, փուռ և այլն) վարիչներին՝ ըստ իրանց ար-  
ժեքի գումարի: Ստուգումների արդյունքները գումարներով պի-  
տի համապատասխանեն մայր մատյանի ապրանայ հաշիվի մնա-  
ցորդներին: Բացի այդ՝ հանձնաժողովը կարող ե ոգտվել նաև  
գործակատարի կամ պահեստապետի որական տեղեկագրերի տրվ-  
յալներով և ապրանքային յերուսուտի այլ փաստաթղթերով:

Բացի այս՝ ընկերութիւնի գործարքների համար կարող են

պահվել նաև այլ ոժանդակ գրքեր (ապրանքափոխանակութիւն,  
պատրաստումների և այլն): Հանձնաժողովը յոր քննական գոր-  
ծողութիւնների ժամանակ այդ բոլոր գրքերից պիտի ոգտվի  
յոր նպատակների համար:

Սովորաբար՝ յեթե նույն իսկ ընկերութիւնի հաշվապահու-  
թիւնը չալ ե տարվում և գործերը կանոնավոր են, գրքերի մնա-  
ցորդների և փաստական մնացորդների լիակատար համապատաս-  
խանութիւն հաճախ չի լինում: Ապրանքները չորանում են,  
փոշիանում են և այլ աննկատելի պակասորդներ են լինում\*):

Հանձնաժողովը՝ պարզելով պակասորդը, քննութիւնի պիտի  
յենթարկի այն հարցը, թե պակասորդն առաջացել ե բնական  
կերպով և նորմալ սահմաններում, թե նա այնքան մեծ ե, վոր  
կարելի յե յենթադրել վատնում, չարաշահութիւն կամ անփուլթ  
վերաբերմունք, վորի հետեանքով պակասորդ ե առաջացել:

Պակասորդի գումարը սովորաբար կախված ե նրանից, թե  
ինչքան ապրանք ե մտել ու դուրս յեկել տվյալ պատասխանա-  
տու գործակատարի կամ պահեստապետի ձեռքով: Հենց այդ  
պատճառով այդ պակասորդը շրջանառութիւնի վորոշ տոկոսն  
ե հաշվվում, սակայն այդ պակասորդը բոլոր ապրանքների հա-  
մար և առետրի բոլոր պայմաններում միևնույնը չի կարող լինել:

Յեթե ընկերութիւնը հատափաճառ ապրանք ե ծախում:  
(որինակ՝ մատիաներ, տետրակներ, կոշիկներ, պատրաստի շորեր,  
գութաններ, մանդաղներ և այլն) պարզ ե, վոր բնական կո-  
րուստներ կամ պակասորդներ այդ կարգի առետրի հետեանքով  
չպիտի լինեն: Իսկ յեթե ընկերութիւնը ծախում ե կշռովի ապ-  
րանքներ (որինակ՝ աղ, շաքար, նավթ, ալյուր և այլն), — պարզ  
ե՝ վոր նա պիտի ունենա և բնական պակասորդներ:

Միաժամանակ՝ յեթե ընկերութիւնը մեծաքանակ առետրով  
ե զբաղվում, նրա բնական պակասորդների տոկոսը շրջանառու-  
թիւնի չնչին մասը պիտի կազմի: Յեվ ընդհանրապէս՝ մանրա-  
ծախս առետրի հետեանքով՝ միշտ պակասորդի տոկոսն ավելի  
բարձր ե լինում:

Վերջապես՝ յեթե ընկերութիւնի պահեստը կամ խանութը  
չոր ե և արեի կոզմը՝ բնական պակասորդները ավելի շատ կլի-  
նեն, քան այն դեպքում, յեթե առետրը կատարվում ե խոնավ  
պահեստում կամ խանութում:

\*) Այս մասին տես «Գործակատարի հաշվառումը» բրոշյուրը, հրատա-  
րակ. «Հայկոպ»-ի, Յերևան 1925 թ.

Վերստուգիչ հանձնաժողովը պիտի ուշադրութեան առնի այս և նման բոլոր պայմանները և հետո միայն վորոշի պակասորդի բնական ու մոտարորապէս հավանական տակոսը: Համեմայն դեպս՝ այդ պակասորդը չի կարող ընդհանուր շրջանառութեան  $\frac{3}{4}$ -ից մինչև  $1^0$ -ից ասիլի լինել: Բացառիկ դեպքում միայն այդ տակոսը  $1\frac{1}{2}$ -ի կարող է հասնել:

Պակասորդները յերբեմն կարող են առաջ գալ հաշվապահական սխալ գրանցումներէց, որինակ՝ ա) կարող են պահեստի հաշվին մուտք գրված լինել այնպիսի ապրանքներ, վորոնք դեռ պահեստ չեն մտել, բ) կարող է պատահել վորեւէ փաստաթղթի կրկնակի գրանցում, գ) ապրանքը կարող է յուր տարայով ընդունված լինել (տակառ, արկղ, տոպրակ և այլն) և այդ բանը ժամանակին կարող է հաշվի չառնված լինել:

Վերստուգիչ հանձնաժողովը պակասորդների մասին պիտի ուշադրութեամբ լսի բոլոր բացատրութեանները, նա պիտի քննի, թե վորքան այդ բացատրութեանները պարզում են պակասորդի պատճառը: Յեթե չեն պարզում, ապա սով է պակասորդների պատասխանատուն և ինչո՞ւ է այն առաջացել:

Որինակ՝ կարող է պակասորդը բացատրվել նրանով, վոր պահեստում կամ խանութում շատ մկներ կան: Հանձնաժողովը պիտի պարզի, թե վորքան հավանական է այդ բացատրութեանը և թե ինչո՞ւ ժամանակին միջոցներ ձեռք չեն առնված մկների դեմ:

Յուր աշխատանքի հետեանքով վերստուգիչ հանձնաժողովը՝ պարզելով պակասորդների ընդհանուր քանակը, առաջարկում է նորմալ պակասորդները գրել վնասների հաշվին (դեղջ), ճիշտ այնպէս, ինչպէս նաև քննութեան ժամանակ յերեկան հանած փչացած ու անպետք ապրանքները: Իսկ այն պակասները, վորոնց հանձնաժողովը գտնում է ապորինի ու բնականից շատ, հանձնաժողովն առաջարկում է գրել պահեստի կամ խանութի պատասխանատու աշխատակցի հաշվին: Հանձնաժողովը նույն կերպ պիտի վարվի նաև այն դեպքում, յեթե յերեկան բերի փչացած կամ անպետք այնպիսի ապրանքներ, վորոնց համար պատասխանատու յե վարչութեանը կամ վորեւէ աշխատակից—անփույթ ու անուշադիր վերաբերմունք դեպի հասարակական ինչքը):

Լինում են դեպքեր, յերբ այս կամ այն պակասորդն առաջանում է, վորովհետև մոռացվել է ապրանքի մսխումի վորևէ

դեպք ժամանակին գրանցելը: Այսպիսի դեպքերում հաշվապահը պիտի անմիջապէս գտնի մոռացված փաստաթուղթը և գրանցման յենթարկի այն:

Պատահում են նաև դեպքեր, յերբ քննութեան արդյունքը ավելցուկ է լինում. այսինքն՝ այս կամ այն ձեռնարկում գրանվում է ավելի ապրանք, քան գրքերի մնացորդներն են ցույց տալիս: Ավելցուկների պատճառների ամենասովորականն այն է, վոր պահեստը մտել են այնպիսի ապրանքներ, վորոնց փաստաթուղթը ժամանակին չի գրանցվել: Հասկանալի յե, վոր այդպիսի դեպքերում մոռացված փաստաթուղթը պետք է անհապաղ գրքերի մեջ մտցնել:

Այս բոլորը պիտի կատարվի մինչև քննութեան արձանագրութեան և հաշվեկշռի կազմելը:

Ապրանքների ստուգման ժամանակ վերստուգիչ հանձնաժողովները պիտի պարզեն, թե ինչ պայմաններում են պահվում ապրանքները, վորքան ապահով են նրանք կրակից, գողութեաններից ու այլ պատահարներից, փչանում են նրանք անփութութեան հետեանքով և այլն: Հատուկ ուշք պիտի դարձնել՝ ա) թե վարչութեանից ապրանքներ ստանալիս պահեստապետը կամ պատասխանատու գործակատարը միշտ են ստորագրում բեռնագիրների կամ հաշիվների վրան այն մասին, վոր նրանք ընդունեցին այդ ապրանքներն առհաշիվ, բ) թե որվա առևարից գոյացած գումարները ժամանակին են մտցրվում վարչութեան դրամարկը և գ) թե որական տեղեկագրերը և այլ փաստաթղթերը ժամանակին են վարչութեանը ներկայացվում և ընդհանրապէս կատարվում են ընկերութեան բարձրագույն մարմինների հրահանգները և ներքին կանոնադրութեանները:

Ապրանքների հաշվառման հետ միաժամանակ և նույն կարգով հանձնաժողովը պիտի ցուցակագրի նաև ընկերութեան պատկանող այլ արժեքները, յեթե նույն իսկ նրանք ձեռք են բերված սեփական կարիքների համար (փայտ, անասունների կեր, շինարարական զանազան նյութեր և այլն):

Ապրանքների ու այլ նյութերի հաշվառման տեղեկագիրը կազմվում է հետևյալ ձևով:

### ՏԵՂԵԿԱԳԻՐ

..... ընկերութեան (գրել մանրամասն անունը)  
..... խանութի (կամ պահեստի կամ այլ ձեռնարկի անունը)  
..... ապրանքների ստուգման առ..... տմսի..... 192 -ին.

Մեջ ըստ կարգի	Ապրանքների մնացորդները		Վաճառքի* արժեքը		Ծանոթ.
	Հատ	Քաշ	Գին	Գուժար	
Ընդամենը	—	—	—	—	

Վերստուգիչ Հանձն. անդամներ (ստորագրություններ)  
 Վարչության անդամներ (ստորագրություններ):

Այս տեղեկագրով ապրանքները թե քանակով և թե արժեքով համապատասխանում են իրականին և գտնվում են իմ պատասխանատվության տակ:

Պահեստի վարիչ (կամ պատասխասատու գործակատար):

### 3. Գույք

Գույք կոչվում է ընկերություն աշխատանքի փոխ չի վաճառվում և վոր չի ծախսվում շարունակաբար ինչպես անասունների կերը, փայտը և այլն:

Հաշվառման ժամանակ պիտի ցուցակագրել առանձին ընկերության անշարժ գույքը (սեփական շենքեր, գործարաններ և այլն) և առանձին շարժական գույքի առանձին տեսակները (ձիեր, սայլեր, կահ կարասիներ, գրադարան, մեքենաներ և այլն):

Ստուգման համար պիտի վերցնել գույքի աշխատանքները, վոր վարչությունը պիտի ունենա և համաձայն վորի գույքը հաշվառման և յենթարկում հաշվապահական գրքերով: Ընտ այդ ցուցակների վերստուգիչ հանձնաժողովը նշանակում է, թե գույքի առանձին առարկաներից ի՞նչը կա և ի՞նչը կորած է, այլ և առանձին նշանակում է աշխատանք, թե ի՞նչն է անպետքացած, կորտրված կամ փչացած:

\* Յեթն ընկերության մեջ հաշվառումը կատարվում է ինքնարժեքով ապա այս սյունյակը համապատասխան փոփոխություն պիտի յենթարկել:

Ցուցակները փաստական մնացորդի հետ համեմատելիս՝ հանձնաժողովը պիտի պարզի նաև այն հարցը, թե գույքի արժեքը համապատասխանում է գրքերի մեջ ցույց տված արժեքին և այդ մասին ևս յուր արձանագրություն մեջ պետք է նշանակի:

Գույքի աշխատանքը, վոր բացակայում է, փչացած է, կամ անպետքացած է, պիտի հաշվառման յենթարկվի և վարչությունը պիտի աշխատանք գրի գրքերից ի հաշիվ ընկերություն մնացորդի: Յեթն գույքի գնհատումը գրքերով ավելի բարձր է ցույց տրված, քան նրանք իսկապես արժեն, գների այդ տարբերությունը ևս պիտի հաշվական գրքերով մնացորդի հաշիվին գրվեն:

Յեթն վերստուգիչ հանձնաժողովը պարզի, վոր գույքը պահվում է անխնամ ու անուշադիր և դրա հետևանքով ընկերությունը նյութական մնացորդ է ստանում, վերստուգիչ հանձնաժողովը պետք է հետաքրքրվի, թե ովքեր են մեղավոր այդ վնասների համար և այս մասին յուր քննական արձանագրություն մեջ մանրամասնորեն կանգ պետք է առնի:

Գույքի և ունեցվածքի ստուգման ժամանակ՝ հանձնաժողովը հատուկ ուշք պիտի դարձնի, թե՛ ա) վարչությունը ընկերության պատկանող շենքերն ու այլ գույքը ժամանակին նորոգում է, բ) լնվ և պահպանում գույքը, գ) նպատակահարմար կերպով է աշխատանք բերում ու սպասարկում, դ) ձեռք չեն բերվում անպետք ու թանկարժեք առարկաներ, յե) վորքան ընկերության գույքն ապահով է հրդեհի վտանգից կամ գողություններից:

Վերստուգիչ հանձնաժողովի կազմելիք գույքի ցուցակի համար առաջարկում ենք հետևյալ ձևը:\*)

\* Այսպիսի ցուցակներ կարելի է կազմել ամեն մի հիմնարկի կամ ձեռնարկի գույքի վերաբերմամբ:

Ընկերութեան (գրել մանրամասն անունը)  
 խանութի, (ձեռնարկի, պահեստի, գործարանի)  
 գույքի ստուգման  
 առ « ..... » 192 թ.

№ քաղաքի	Պուրջի (առարկաների) անունները	Քանակը		Արժեքը		Ծանոթ.
		Ըստ գույքի գրքի	Հաշվառման ժամանակ	Ըստ գույքի գրքի	ըստ հանձնաժող. գնատ.	
	Ընդամենը	—	—	—	—	

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ (ստորագրութեանը ներ)։

Վարչութեան անդամներ (ստորագրութեանը ներ)։

**VIII ՆԱԾՎԱՊԱՀՈՒՅՅԱՆ ՔՆՆՈՒՅՅՈՒՆԸ**

Հաշվապահութեան ստուգման ժամանակ հանձնաժողովը պարզում է. ա) ձեռնարկի նշանակութեան ունեցող խնդիրները և բ) ընկերութեան մեջ կատարվող գործարքների ելութեան հետ կապված խնդիրները։

Մենք ձեռնարկի նշանակութեան ունեցող խնդիրներ ենք համարում հետևյալ հարցերը — ա) կանոնավոր եւ տարվում հաշվապահութեանը, բ) համապատասխանում են հաշվապահութեան տվյալները հանձնաժողովի կատարած ապրանքի, գրամարկի ու գույքի ստուգումների արդյունքներին, գ) կանոնավոր են պահվում ընկերութեան գրքերն ու փաստաթղթերը։

Ըստ ելութեան հարցեր պարզելը մենք համարում ենք հանձնաժողովի կողմից կատարվող այն աշխատանքը, վոր պարզում

ե, թե ընկերութեան գործը յուր առանձին ձուգերով ինչպես եւ տարվում։

Այս գլխում մենք ցուցումներ ենք տալիս, թե գործավարութեանն ու հաշվապահութեանը ինչպես պիտի ձեռնարկվեն յենթարկելու եւ հաշվառման խնդիրներին մենք դառնալու յենք առանձին գլխում (տես գլուխ IV)։ Ճիշտ է՝ մենք ձեռնարկի ժամանակ ևս անցողակի շոշափում ենք այդ հարցերը, սակայն նրանց վրա մանրամասն կանգ առնելը հետաձգվում ենք հաշվապահութեան ընկերութեանը հետո։

Հետագայում մենք այս գլուխը յերեք մասի յենք բաժանում — ա) փաստաթղթերը, բ) մայր մատյանը և գ) ոժանդակ գրքերը։ Բայց այս չի նշանակում, վոր հանձնաժողովը յուր ընկերութեանը սկսում է փաստաթղթերից և մայր մատյանից ու վերջացնում է ոժանդակ գրքերով։ Փաստաթղթերն ընդհանրապես հետազոտվում են հաշվապահական գրքերի ընկերութեան ընթացքում — ճիշտ այնպես՝ ինչպես մայր մատյանի ընկերութեան դեպքում ևս հաճախ կարևոր է լինում դիմել ոժանդակ գրքերին։ Սակայն այս մասին մենք կխոսենք քիչ հետո։

**ա) Հաշվապահական փաստաթղթերը**

Հաշվապահութեան մեջ հիմնական կանոն պիտի համարել այն, վոր անթույլատրելի յե գրքերի մեջ վորեք գրանցում կատարել՝ առանց այդ գրանցումը հաստատող փաստաթղթի։ Հաշվապահական գրքերում հենց դրա համար հատուկ մի սյունյակ կա, վորի մեջ պիտի ցույց տալ այն փաստաթղթի №-ը և նրա անունը, վորի հիման վրա կատարված է տվյալ գրանցումը։

Դրա համար վերստուգիչ հանձնաժողովը պիտի ստուգի. ա) կանոն արդյոք բոլոր փաստաթղթերը, բ) կանոնավոր են նրանք կազմված և գ) համապատասխանում են արդյոք փաստաթղթերի գումարները հաշվապահական գրքերով անց կացրված գումարներին։

Ըստ վորում՝ փաստաթղթերը կազմելու յերկու կարգ կարող է գոյութեանն ունենալ։

1. Ավելի կանոնավոր է կարգն այն դեպքում, յերբ մայր մատյանի յուրաքանչյուր հոգվածի համար վարչութեան ստորագրութեամբ կազմվում է հատուկ օրգիւ (կարգադրութեան, հրաման), վորով հաշվապահին հրահանգվում է այս կամ այն հաշվական գրանցումը կատարել գրքերի մեջ։ Որդերները լինում են

գրամարկային (յեւթի և մուտքի) և վոչ գրամարկային (մեմորյալ որդերներ) վերջիններս գրվում են այն ժամանակ, յերբ ընկերութունը վորեւ շրջանառութուն և կատարում առանց գրամ վճարելու կամ ստանալու: Որինակ՝ բաց և թողնված խանութի կարիքների համար 20 գրվանքա նավթ—5-ական կոպեկով—1 ր. արժողությամբ:

2. Ավելի պակաս կանոնավոր և կարգն այն դեպքում, յերբ որդերներ չեն կազմվում, իսկ գործերում կան միայն փաստաթղթեր, վորոնք առաջին դեպքում կարվում կամ փակցվում են որդերներին: Այս յերկրորդ դեպքում անհրաժեշտ և, վոր յուրաքանչյուր փաստաթղթի վրա լինի վարչության անդամի մակագրութունը, վորով ավյալ փաստաթուղթը վավերացվում և:

Որդերներին փաստաթղթերը կարող են միշտ ել չկցվել սակայն հանձնաժողովը միշտ պարտավոր և պահանջել այդ փաստաթղթերը և նրանց համեմատել որդերներին հետ:

Գրամական մուտքի փաստաթուղթ են համարվում անգործազրեւի արմատները—վորոնցով սրինակ՝ փայտվճար և ընդունվում— ավանդի ընդունելության տոմսերի (կամ գրքերի) արմատները, բանկային ընթացիկ հաշվի չեկերի գրքի արմատները և այլն: Բայր դեպքերում այդ արմատներում պիտի ցույց տրվի ընդունված գումարը այն, թե ի՞նչ փաստաթուղթ և տրված այդ մուտքի դիմաց և գրամն ընդունողի ստորագրութունը: Այդ արմատներով կարելի յս ստուգել, թե արդյոք բոլոր ընդունված գումարները հաշվապահական գրքերով անց են կացրած թե վոչ:

Գրամական այնպիսի ծախսեր են լինում, վորոնց համար կամ փաստաթուղթ չկա, կամ փաստաթղթերը յեւթի որդերին չեն կարող կցվել: Որինակ՝ ընկերության գործերով կատարած ճանապարհորդության յերկաթուղային տոմսը, կամ կառուպանին քաղաղ դնալու համար վճարած ծախսը և այլն: Պիտի պահանջել, վոր նմանորինակ ծախսեր անողը յուր հաշվի մեջ մանրամասն թվի այն ծախսերը, կամ առանձին փաստաթղթեր կազմի նրանց մասին, վերստուգիչ հանձնաժողովը բոլոր այն ծախսերի մասին, վորոնց համար փաստաթղթեր չկան (մանավանդ խոշոր գումարների ծախսերի վերաբերմամբ), պիտի յուր արձանագրության մեջ մի առ մի թվի:

Այն ծախսերի փաստաթղթերը, վորոնք կցված չեն յեւթի որդերներին, պիտի վարչության կողմից ներկայացվեն վերստուգիչ հանձնաժողովին: Այդպիսի փաստաթղթեր կարող են

լինել բանկային չեկի գրքի արմատները, վորոնցով ընկերության անդամներին գրամ և տրված, բանկում ունեցած ընթացիկ հաշվից: Յեթե յեւթի որդերում չկա այդպիսի չեկ ստացողի ստորագրութունը, վերջինս անպայման պիտի լինի չեկերի գրքի արմատների մեջ:

Վերստուգիչ հանձնաժողովը պիտի ստուգի բոլոր որդերները և փաստաթղթերը՝ պարզելու համար, թե. ա) մայր-մատյանի բոլոր հոդվածների փաստաթղթերն ու որդերները կան, բ) որդերների գումարները համապատասխանում են արդյոք փաստաթղթերին, գ) փաստաթղթերի ու որդերների մեջ թվաբանական հաշիվները (գումարում, հանում և այլն) ճիշտ են կատարված, դ) փաստաթղթերի վրա կան արդյոք պատշաճ ստորագրութուններ և հատկապես՝ վճարված գումարների համար ստացականներ, յե) փաստաթղթերի վրա ջնջումներ ու քերումներ չկան՝ թվերը փոփոխելու նպատակով, չ) որդերները ժամանակին են կազմվում, թե շրջանառութունների կատարվելուց շատ ուշացած, և) ապահով են պահվում փաստաթղթերը գույության վտանգից և շահագրգռված անձնավորութունների կողմից փոփոխության յենթարկվելու վտանգից \*) և ը) բոլոր փաստաթղթերը գրոշմատուրքով վճարված են թե չե: \*\*)

Արդարացուցիչ փաստաթղթերը պիտի առանձին ուշադրությամբ հետազոտության յենթարկվեն՝ յերբ վարչության չարաշահութունների կամ կեղծիքների մասին կասկածներ կան: Այս դեպքերում հանձնաժողովը պիտի համոզվի, վոր փաստաթղթերը (որինակ՝ գրամական գումարների վճարման ստացականները) կեղծ չեն և վոր նրանց մեջ ցույց տրված ծախսերը կարող են արված լինել:

Լուծել այն հարցը, թե փաստաթուղթը կեղծ և թե վոչ, այնքան ել հեշտ չե: Այս նպատակով փաստաթղթի մեջ յեղած ստորագրութունը համեմատում են նույն անձնավորության մի այլ ստորագրության հետ (յեթե այդպիսին ընկերության գործերում կա և կասկածից դուրս և նրա իսկական լինելը): Ստորագրության իսկական լինելը ստուգելու մի այլ ավելի հասարակ

\*) Չեկերի գրքերը, մուրհակները, պայմանագրերը, փոխառութունների համար ստացված փաստաթղթերը պետք և պահվեն գրամի ու արժեքավոր թղթերի հետ միասին:

\*\*) Շատ կարևոր և ձեռքի տակ ունենալ „Гербовый сбор“-ի մասին որենքը կամ համանուն գիրքը «Կոոպերատիվների համար համառոտ ցուցմունքներ» Հրատար. „Кооперативное Изд-во“—գինը 20 կոպ.

միջոցն ել՝ ստորագրողին հարցում անելն եւ ճիշտ եւ այս միջոցը միշտ չի կիրառվում, քանի վոր հարցման յենթարկվելիք անձնավորութունը կարող եւ ներկա չլինել տվյալ քննութեանը, սակայն, յեթե այս կերպ ստուգումներ կատարելն անհատեշտ եւ հանձնաժողովը պիտի այն կատարի, հետաձգելով տվյալ փաստաթղթի քննութեանը՝ մինչև այդ անձնավորութեան ներկայանալը:

Բայց պետք եւ ասել, վոր հաճախ այս կարգի ստուգումները կարիք եւ չի լինում: Փաստաթուղթն ինքն եւ ցույց տալիս, թե կարելի՞ յե հավատալ նրա մեջ ցույց տված ծախսերին, նայած՝ թե գործերի ընդհանուր հանգամանքները արգտարացնում են այդ ծախսը—հավանական եւ ծախսի գումարը եւ այլն:

Շատ հաճախ՝ ձևականորեն կանոնավոր կազմված փաստաթղթերի մեջ եւ կարող են չարաշահութուններ ու կեղծիքներ ծածկված լինել: Լինում են, որինակ՝ դեպքեր, յերբ վարչութեան հանձնարարութեամբ գնումներ կատարողը հանցագործ կերպով համաձայնութեան եւ կայացնում անբարեխիղճ հիմնարկութեան (Ֆիրմայի) կամ մասնավոր անձի հետ, վորոնցից ապրանքներ եւ գնում: Այսպիսի դեպքերում, սովորաբար, գնումների համար գրվում են ձևականորեն կանոնավոր փաստաթղթեր, բայց ապրանքների գինն ու քաշը ցույց են տրվում իրական վճարումներից բարձր: Ձեղծարարները բաժանում են իրենց միջև հաշվի մեջ ցույց տվածի ու փաստորեն վճարածի տարբերութեանը:

Ճիշտ այդպես եւ կանոնավոր ստացականներ կարող են լինել տրված ծախսերի համար, սակայն նրանց մեջ ցույց տրված գումարը իրական վճարումներից բարձր եւ ցույց տրված լինում: Վերջապես՝ կարող են լինել այնպիսի ստացականներ, վորոնց մեջ ցույց տրված վճարումները բոլորովին չեն կատարվել:

Չենց այդ պատճառով կարևոր եւ, վոր վերաստուգել հանձնաժողովը անհնամեծ ուշադրութեամբ հետազոտի մասնավոր հիմնարկներից ու անձերից ստացված հաշիվներն ու այլ փաստաթղթերը—կանգ առնելով վոչ միայն նրանց ձևական կանոնավորութեան վրա, այլ եւ ըստ ելուցման քննելով այդ փաստաթղթերի մեջ ցույց տրված թվերը, ապրանքների քաշն ու արժեքը եւ այլն:

### Բ. Մայր Մասյան

Հաշվապահութեան քննութեանը պիտի սկսել Մայր Մատյանից: Հարկավոր եւ հաշվապահից պահանջել, վոր նա այդ գիր-

քը պատրաստի քննութեան համար, այսինքն անցկացնի մատյանի մեջ ընկերութեան բոլոր գործառնութեանները՝ մինչև քննութեան մոմենտը: Յեթե այս անհնարին եւ, մայր մատյանում պետք եւ քննութեան յենթարկել այն բոլոր գրանցումները, վորոնք արդեն կատարված են, իսկ այն շրջանառութեանները, վորոնք գրանցված չեն, պետք եւ ստուգվեն փաստաթղթերով,—այդ փաստաթղթերի յեւքն ու մուտքը առանձին գումարելով—միացնելով մայր մատյանի ընդհանուր գումարի հետ եւ ապա ստուգելով գրքերի տվյալները փաստական մնացորդների հետ:

Մայր մատյանը ստուգան պիտի յենթարկել այն ժամանակից, յերբ վերջին քննութեանն եւ կատարվել: Ստուգումը պիտի կատարեն վերստուգիչ հանձնաժողովի յերկու անդամները: Նրանցից մեկը ձեռքի տակ ունի ժամանակագրական կարգով դասավորված բոլոր փաստաթղթերը—այսինքն այնպես, ինչպես նրանք գրանցված են մայր մատյանում: Մյուսը յուր տրամագրութեան տակ ունի մայր մատյանը: Առաջինը կարող եւ փաստաթուղթը, յերկրորդը մատյանի մեջ մատիտով նշանակում եւ յուր նկատողութեանը, վոր տվյալ հոդվածը ստուգված եւ Միաժամանակ առաջինը ստուգում եւ փաստաթուղթն ըստ ելուցման, իսկ յերկրորդը—նայում եւ թե գրանցումը ճիշտ եւ կատարված եւ թվերը համապատասխան սյունյակներովն են անց կացրած: Այս կերպ պիտի հոդված հոդվածի հետևից ստուգել քննական ամբողջ ժամանակի փաստաթղթերը:

Յեթե քննութեանը կատարվում եւ գրքերի նոր բացման ժամանակաշրջանից՝ կամ հաշվական նոր տարուց, ապա անհրաժեշտ եւ, վոր վերստուգիչ հանձնաժողովը համեմատութեան յենթարկի սկզբնական հաշիվները անցյալ հաշվական տարվա մայր մատյանի մնացորդների կամ անցյալ տարեվերջի հաշիվներին հետ:

Ստուգումների ժամանակ՝ հարկավոր բացատրութեաններ տալու համար, անպայման պիտի ներկա լինեն հաշվետարը (հաշվապահը) եւ վարչութեան առնվազն մի անդամը:

Առանձին գրանցումներն ստուգելուց հետո՝ անհրաժեշտ եւ համրիչի վրա ստուգման յենթարկել նաև յերեսների գումարները եւ փոխանցումները: Այս ստուգումը կարելի յե կատարել վոչ թե մանրամասն, այլ ընտրովի, վորովհետեւ մայր մատյանի առանձին հաշիվների ճշտութեանը կրկին ստուգվելու յե ոժանգակ գրքերով եւ ամեն մի անձատութեան այսպես թե այնպես յերևան կհանվի քննութեան ընթացքում:

Մայր մատյանի բոլոր գրանցումներն ստուգելուց հետո, հանձնաժողովը ստուգում է նաև շրջանառության գումարային տվյալները — բոլոր հաշիվների ձախակողմյան թվերի (դերեա) ընդհանուր գումարը՝ համեմատելով նույն հաշիվների աջակողմյան թվերի (կրեդիտ) ընդհանուր գումարի հետ: Ըստ վորում, այդ յերկու գումարները պիտի հավասար լինեն: Այլապես՝ վոր է ե գրանցում սխալ է կատարվել և պետք է գոնեի այդ սխալը:

Քննության ժամանակ նկատված բոլոր սխալների ու անճշտությունների մասին վերստուգիչ հանձնաժողովը յուր առձեռն տեսքում նկատողություն է անում: Հետագայում՝ նրա առաջարկությամբ հաշվապահը կատարում է անհրաժեշտ ուղղումներ, իսկ բոլոր կասկածելի փաստաթղթերի ու գրանցումների վերաբերմամբ հանձնաժողովը շարունակում է յուր քննությունը:

Այս բոլոր աշխատանքները կատարելուց հետո՝ ընկերության հաշվետարը (հաշվապահը), Հանձնաժողովի հսկողության տակ՝ կազմում է հաշվեկշիռը, վոր քննական ախտի մեջ է մըտնում՝ հանձնաժողովի կողմից մանրամասն ստուգման յեթարկվելուց հետո:

Մայր մատյանի, գրամարկղի, ապրանքների, գույքի և այլ արժեքները համեմատելով նույն արժեքների փաստական մնացորդների հետ՝ քննության ձևական մասը կարելի յեր վերջացած համարել, սակայն մի շարք հարցեր, վոր քննության ընթացքում ծագում են, սուիթ են տալիս, վոր հանձնաժողովը ստուգումներ ու համեմատություններ կատարի նաև ընկերության ոժանգակ գրքերում:

Քննության արձանագրության մեջ չպիտի մոռացություն տրվեն, թե. ա) գրանցումները վճրքան ժամանակին են կատարվում կամ վճրքան են ուշացել, բ) գրանցումները կանոնավոր են կատարվում, գ) կանոնավոր են տարվում գրքերը և նրանց մեջ ջնջումներ, քերումներ չեն կատարվում և դ) լիվ են պահվում գրքերը:

#### գ. Ոժանգակ գրքեր

Սովորաբար մայր մատյանի յուրաքանչյուր հաշվին համապատասխան պահվում է ոժանգակ գիրք (կամ ոժանգակ գրքի մեջ մի մաս): Այս դեպքում մայր մատյանի հաշվի գումարները պիտի համապատասխանեն ոժանգակ գրքի գումարներին: Այս ստուգումը կատարելու համար՝ սովորաբար, ոժանգակ գրքերից կազմվում են ԵՐՉԱՆԱՊՈՒՐՅԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԵՐ:

Այդ տեղեկագրերը հանձնաժողովի համար կազմում է ընկերության հաշվետարը (հնշվապահը): Հանձնաժողովը այդ տեղեկագրերի տվյալները միայն ստուգման է յեթարկում ոժանգակ գրքերի հետ: Յեվ յեթե այդ ստուգումների վերջնական տվյալները համեմատելով մայր մատյանի առանձին հաշիվների հետ — համապատասխանում են վերջիններիս — այս դեպքում միայն քննության ձևական մասը վերջացած պիտի համարել:

Ոժանգակ գրքերի առանձին հաշիվների հետազոտությունը կարևոր է յերկու նպատակով. եախ՝ պարզելու համար ընկերության փոխադարձ հաշիվները գանազան անձանց և հիմնարկների հետ և յեկուրդ՝ պարզելու համար թե ի՞նչ հիմքերի վրա յեն դրված ընկերության առանձին ձեռնարկները կամ գործի առանձին մասերը:

Առանձին անձանց հաշիվները պահվում են «գանազան անձանց և հիմնարկների» գրքերում. վորի վրա հանձնաժողովը հատուկ ուշադրություն պիտի դարձնի:

#### ա. «Ջանգակ անձինք յեվ հիմնարկներ»-ի ոժանգակ գիրք

Այս գրքում գրանցվում են. ա) այն բոլոր անձանց ու հիմնարկների հաշիվները, վորոնց հետ ընկերությունը գործ ունի (գլխավորապես առևտրական), բ) հիմնարկությունների հետ ունեցած փոխառությունների ու ապրանքային վարկավորման հաշիվները, գ) վարչության անդամների կամ ծառայողների հաշիվները (առհաշիվ գումարներ կամ ի հաշիվ ոտճիկի տրվող գումարներ) և դ) փոխանցու գումարների հաշիվները:

ա) Կողմնակի անձանց հաշիվները հետազոտելիս պետք է հետազոտել առանձին առանձին բոլոր անձնական հաշիվները՝ հատկապես ընկերության պարտապանների հաշիվները: Այս հետազոտությունը պիտի պարզի հետևյալ հարցերը. Ի՞նչու յե տըրված այս կամ այն գումարը կամ ապրանքը: Որինավոր է կատարված այդ վճարումը և վորեք փաստաթուղթ (մուրհակ, ստացական) ապահովված է: Կանոնավոր է կազմված փաստաթուղթը և իսկապես ապահովում է նա ընկերության պարտքի վերադարձումը: Պարտքերը ժամանակին են վճարվում: Կան արգյոք կասկածելի կամ անհուսալի պարտքեր, ի՞նչ գումարի: Ի՞նչ միջոցներ է ձեռք առնում վարչությունը պարտքերը հետ գանձելու համար: Յեթե վարչությունը մասնավոր անձանց գանազան գումարներ է բաց թողել (պատրաստումներ անելու կամ այլ նպատակով) —

արդյոք պայմանագրեր կան և վերջին կանոնավոր են նրանք կազմված: Ժամանակին են արդյոք ընկերություն հայթայթողները (առհաշիվ անձինք) իրենց դրամական հաշիվները ներկայացնում, կանոնավոր են կազմված այդ հաշվետվությունները և կան արդյոք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Առհաշիվ գումարները շատ չեն «պառկում» մասնավոր անձանց մոտ: Խնչքան են համապատասխանում մասնավորներից գնած ապրանքների գները իրական գներին: Նույնը մասնավորներին վաճառած ապրանքների վերաբերմամբ:

**բ) Հիմնարկների հաշիվներ:** Փոխառությունների ու ապրանքային վարկավորման շրջանառությունները կարելի չե ստուգել այն փաստաթղթերով ու նամակներով, վոր ստացվում են հիմնարկություններից: Յեթե այդ փաստաթղթերն ու նամակները կցված չեն որդերներին՝ հանձնաժողովը պիտի պահանջի փաստաթղթեր: Շատ հաճախ՝ վոր և ե ստուգում կատարելու համար, անհրաժեշտ ե լինում քննության յենթարկել, վոչ միայն հաշվապահության փաստաթղթերը այլ և գործավարությունյան առանձին գրություններն ու փաստաթղթերը:

Ցանկալի չե, վոր հանձնաժողովը յերբեմն ձեռքի տակ ունենա ընկերության հետ գործեր ունեցող հիմնարկներից ու անձնավորություններից ստացած տեղեկանքներ ու քաղվածքներ՝ փոխադարձ դրամական հաշիվների գրություն մասին:

Ցանկալի չե նույնպես, վոր ընկերությունը յուր Միության հետ ունեցած բոլոր գործարքները՝ ապրանքի ու փողի ստացում, պարտքերի ու փայլվածքային հատկացումներ և այլն, գրի Միությանից ստացած հատուկ գրքում՝ համապատասխան այն բոլոր գրանցումների, վորոնք կատարվում են Միության հաշվական գրքերում:

Յեթե պարզվի, վոր Միության կամ մի այլ հիմնարկի հաշվապահության տվյալները չեն համապատասխանում ընկերությունյան գրքերի տվյալներին, վերստուգել հանձնաժողովը մանրամասն քննության պիտի յենթարկի այդ տարբերությունյան պատճառները:

**գ) Առհաշիվ գումարներ յեզ կախույթներ:** Վարչությունյան անդամներին կամ ծառայողներին առհաշիվ գումարներ տալը— գանազան ծախսերի ու գնումների համար— պիտի քննության յենթարկվի առանձին մանրակրկիտությունյամբ, վորովհետև չարաչառությունների ու զեղծումների մեծ մասը և ամենից հաճախ

այդ գումարների շուրջն ե կատարվում: Հանձնաժողովը պիտի ստուգի, թե ինչ գումարներ, ուն և յեբր են տրված, ժամանակին հաշվետվություն ներկայացված ե: Յեթե վոչ՝ ինչո՞ւ չե ներկայացված: Հանձնաժողովն այս դեպքերում հաշիվ ե պահանջում: Հաշիվը ժամանակին չներկայացնելը պիտի դիտվի վորպես լուրջ գանցառություն, այս մասին քննական արձնագրություն մեջ պիտի գրվի՝ ընդհանուր ժողովին զեկուցելու համար:

Առհաշիվ գումարների ու նրանց մասին յեղած հաշվետվություններին քննության ժամանակ՝ հանձնաժողովը պարզում ե հետևյալ հարցերը. ա) վարչությունյան վորոշմամբ ձևակերպված ե արդյոք տվյալ առհաշիվ գումարի բաց թողնելը և ընկերությունյան մեջ գոյություն ունեցող կանոններին համապատասխան ե այդ գործողությունը, բ) առհաշիվ տրված գումարները շատ մեծ չեն, գ) որպահանջներին համար դուրս գրված գումարները չափազանց բաժ չեն (որինակ՝ վարչությունյան անդամը յերբեմն 3—4 որ ե բացակայում, բայց որպահանջ ե դուրս գրում 7—8 որվա համար), դ) անհրաժեշտ ե յեղել հաշիվների մեջ ցույց տրված ժամանակ գործողման մեջ լինելը, յե) ինչ ծախսերի համար արդարացուցիչ փաստաթղթեր չկան և ինչո՞ւ (գուցե անհնարին ե յեղել այնպիսիները ձեռք բերելը կամ գուցե այդ փաստաթուղթը չներկայացնելը պիտի դիտվի իբրև անթույլատրելի գանցառություն), զ) արդարացուցիչ փաստաթղթերը կանոնավոր են կազմված, ե) վարչությունյան հանձնարարությունը ճշտությունյամբ կատարված ե, ը) վարչությունը ստուգում ե առհաշիվ գումարների վերաբերմամբ ներկայացրած հաշիվները նախ քան այն հաշվապահին հանձնելը՝ գրքերով գրանցելու համար, թ) առանց ստորագրությունների դրամական վճարումների տոմսակներ վրա կան արդյոք վարչությունյան անդամի վավերացումները:

Վարչությունյան անդամներին ու ծառայողներին ի հաշիվ ուճիկի կանխույթներ (ավանսներ) տալը պիտի թույլատրել ծայրահեղ ու բացառիկ դեպքերում, այն ել վոչ ավելի, քան մի ամսվա չափով: Դրա համար հանձնաժողովը պիտի այդ վճարումները մեկ-մեկ քննի ու պարզի, թե վորքան նրանք անհրաժեշտ են յեղել: Պիտի ստուգել նաև, թե այդ վճարումները ինչպե՞ս են ծածկվում («հանդգնում») հետագայում: Մի քանի ամիսներ ռոճիկը առաջուց վճարելը կամ յերկար ժամանակով նրանց չը հազցնելը հանձնաժողովին կողմից պիտի դիտվի վորպես չարաչառություն և քննական արձնագրություն մեջ պիտի մտցվի:

**դ) Փոխացու գումարների հաշիվներ:** վոր սովորաբար տարվում են «գանազան անձանց և հիմնարկների» գրքում, պի-

տի ուշադրութեամբ քննութեան յենթարկվին: Շատ անգամ այս հաշվում գրանցվում են այնպիսի գումարներ, վորոնք պիտի այլ հաշիվներին մեջ անց կացվին. դրա հետեանքով՝ սովորաբար ընկերութեան հաշիվեկշիռը յուր պարզութեանը կորցնում է: Որինակ՝ պատահում է, վոր ընկերութեանը փոստով ստանում է մի գումար, վորի մասին հաշվապահութեանը տեղեկութեանը չունի, թե այդ գումարն ինչո՞ւ յե ուղարկված ընկերութեանը: Գումարը գրանցվում է «փոխանցու գումարների» հաշվով: Հետագայում՝ պարզվում է, վոր այդ գումարը ընկերութեանը ուղարկված է վորպես **ավանգ կամ պարսֆի վճարում**, իսկ հաշվապահը ժամանակին համապատասխան գրանցում կատարելը մոռացել է:

Յուր այս կարգի դիտողութեանները վերաստուգիչ հանձնաժողովը պիտի վարչութեանը հաղորդի:

Չանազան անձանց ու հիմնարկների հաշիվը քննելուց հետո՝ անպայման պիտի կազմել **երջանառության տեղեկագիր**՝ նախքան հաշիվեկշիռի փակումը: Այդ անհրաժեշտ է այն պատճառով, վոր մայր մատյանի հիշյալ հաշվում պիտի դուրս բերել վոչ թե այդ ընդհանուր հաշիվի մնացորդը, այլ յերկու թիվ—նախ, թե ընկերութեանը զանազան անձինք ու հիմնարկներ ինչքան են պարտ (զերխտորներ) և ապա՝ թե ընկերութեանն ինքը զանազան անձանց ու հիմնարկների ինչքան է պարտ (կրեդիտորներ):

Շրջանառութեան տեղեկագիրը կազմվում է մայր մատյանի հաշիվների թվի համեմատ: Յեթե մայր մատյանում տարվում են Միութեան գնորդների, առ հաշիվ անձանց և այլն զանազան հաշիվներն առանձին-առանձին, ապա պիտի նրանց համապատասխան կազմվեն նույն բանակութեամբ շրջանառութեան տեղեկագրեր:

Հիշյալ տեղեկագրերը պիտի կազմել հետևյալ ձևով:

**Զանազան անձանց ու հիմնարկների հաշիվի երջանառության տեղեկագիր**

№ ըստ կարգի	Հիմնարկի կամ անձի անունները	Մնացորդ առ		Շրջանառութեան		Մնացորդ առ		Ծանոթություն
		Պարտ ընկերութեանը	Պարտ ընկերութեանը	Վճարված է	Ստացված է	Պարտ ընկերութեանը	Պարտ ընկերութեանը	

**բ) Ա.վանգների գիրք**

Այս գիրքը կամ գրքերը (կարող են պահվել ժամկետային ավանդների գիրք, ցախահանջ ավանդների գիրք) կազմված են առանձին ավանդատուների անձնական հաշիվներից: Գրքի մեջ պիտի ստուգման յենթարկել թե վճարման կանոնավոր են պահվում ավանդների հաշիվները. ճիշտ են հաշվվում 0/0/0-ները և ժամանակին են վերադաժվում ավանդները:

Մինժամանակ, վերաստուգիչ հանձնաժողովը քննութեան է առնում այն հարցը, թե վճարման կանոնավոր և զրկված ավանդների ընդունելութեան գործը: Ազգաբնակչութեանը տեղյակ է արդյոք ընկերութեան ավանդներ ընդունելու պայմանների մասին: Ի՞նչ միջոցներ են ձեռք առնված վոր ավանդների մասին ընկերութեան բոլոր գործարքները գաղտնի պահվեն: Վարչութեանն ու ծառայողները գիտակցում են գաղտնապահութեան անհրաժեշտութեանը և չեն խախտում այն: Ավանդները ընդունելու և հետ դարձնելու պայմանները հարմար են արդյոք ավանդատուների համար: Ավանդների ընդունելութեան ու հետ դարձնելու համար ի՞նչ փաստաթղթեր են կազմվում, վարչութեանն ավանդների ընդունելութեան գործում կիրառում է ընդհանուր ժողովի վորոշումները: Ավանդների վերաբերմամբ ընդունված պարտավորութեանները վարչութեան կողմից կատարվում են:

Շրջանառութեան տեղեկագիրը՝ ավանդների գրքի հիման վրա կազմվում է այսպես:

**Ա.վանգների հաշիվի երջանառության տեղեկագիր**

№ ըստ կարգի * ավանդատուների	Մնացորդ առ	Շրջանառութեան		Մնացորդ առ	Ծանոթություն
		Ստացված է	Վճարված է		

\*) Շրջանառութեան տեղեկագրում ցույց չեն տրվում ավանդատուի անունն ու ազգանունը, այլ միայն №-ը այդպես և արվում ավանդները գաղտնի պահելու համար:

**գ) Հաշիվներ ընկերության անգամների հետ**

Սովորաբար այս գրքում (անդամակցական գիրք) գրվում են միայն ընկերության անդամների հետ կատարած այն գնումների ու վաճառքների հաշիվները, վորոնց դրամական հաշիվը վերջացված չէ և վորոնց վերաբերմամբ կամ ընկերությունն է պարտք մնացել այս կամ այն անդամին կամ ընդհակառակը:\*)

Այս գրքով վերստուգել հանձնաժողովը քննում է, թե վճարման ճիշտ են պահվել առանձին անդամների հաշիվները: Չըկան արդյոք այնպիսի վճարումներ, վորոնք արդարացուցիչ փաստաթուղթ չունեն: Հաշիվները չէ՞ն ձգձգվում: Այդ հաշիվներին համապատասխան գրանցումները անդամագրույկների մեջ ժամանակին արվո՞ւմ են թե չե: Վարկավորման ձևերն ու չափը չէ՞ն հակասում ընկերության ընդհանուր ժողովի վորոշումներին:

Ցանկալի չէ այս ստուգումը կատարել՝ անդամագրույկների հնարավոր քանակությունը ձեռքի տակ ունենալով: Շատ անգամ կարևոր է լինում այս կամ այն անդամին յուր հաշիվ վերաբերմամբ ծագած թյուրիմացությունների մասին հարց ու փորձի յենթարկել:

Անդամների ընկերություն պարտքերի ու փոխադարձ հաշիվների վերաբերյալ կազմվում են նույնպես շրջանառության տեղեկագրեր՝ վերև ցույց տված որինակով (զանազան անձիք ու հիմնարկություններ), ըստ վորում՝ հաշվեկշռի մեջ ցույց է տրվում, թե ընկերության պարտքը յուր անդամներին և թե ընդհակառակը:

**գ) Անգամավճարների հաշվառման գիրք**

Այս գիրքը հետադոտելիս հանձնաժողովը պարզում է, թե արդյոք ընկերության բոլոր անդամները իրենց փայերը մուծել են ամբողջությամբ, թե մի մասը: Ինչքան է մուծած դրամագլխի ընդհանուր գումարից, ինչքան է մնում ընկերության անդամների վրա: Չքավորների անդամագրության արտոնությունները պահպանվում են, թե չե:

Միաժամանակ հանձնաժողովը պարզում է, թե ի՞նչ միջոց-

\*) Նույն գրքում՝ անկախ դրանից՝ ընկերություններում պահվում է անդամավճարների հաշվառման գիրք, վորի մեջ յուրաքանչյուր անդամին հատկացված յերեսում պահվում են այդ անդամի փայավճարային մուծումները նրան հասանելիք 0/00,0-ը և այն պարզևը (պրեմյան) վոր հասնում է ընկերության անդամին, տարեկան ոգուտների բաշխումից: **ԹԱՐԳՄ**

ներ են ձեռք առնվում վարչության կողմից. փայավճարները գանձելու համար: Ոգտակար է, վոր այս հաշիվները ևս հնարավորություն դեպքում համեմատվեն անդամագրույկների հետ:

Շրջանառության տեղեկագիրը փայավճարների վերաբերմամբ կազմվում է հետևյալ ձևով:

**Փայագրամագլխի հաշվի շրջանառության տեղեկագիր**

№/ը լստ կարգի	Ընկերության անդամների անուն ազգանունները	Մուծել է	չե ստացել	Մնում է չմուծված	Մանրու- թյուն

**յե) Փոխառությունների գիրք**

Յեթե ընկերությունը դրամով փոխատվություններ է կատարում՝ կարևոր է, վոր նա, բացի մայր մատյանից՝ պահի նաև փոխատվությունների անձնական հաշիվների ոժանդակ գիրք: Փոխատվությունները լինում են կարճ ժամկետային և յերկարատև: Ընթացիկ հաշվով վարկավորելն ընկերություններում սովորաբար չի կիրառվում:

Հանձնաժողովը ստուգումներ է կատարում բոլոր անձնական հաշիվների վերաբերմամբ և կազմում է շրջանառության տեղեկագրեր՝ կարճատև ու յերկարատև փոխատվությունների (վարկավորումների) մասին: Յեթե հանձնաժողովը կարևոր է գտնում՝ կարելի չէ կազմել առանձին տեղեկագրեր նաև առանձին գյուղերի ու առանձին նպատակային վարկավորումների վերաբերմամբ:

Փոխատվությունների շրջանառության տեղեկագիրը կազմվում է հետևյալ ձևով:



Վարչութիւնը, թի նրա առանձին անդամը: Ապրանքները վորոշված գներովն են ծախվում. չեն լինում դեպքեր, յերբ հավելումներ են արվում վաճառքի գներին. յեթե լինում են, ինչպես են հաշվառման յինթարկվում այդ հավելումները: Գնորդների համար գների ցուցակը կախվում է ընկերութայն խանութներում ու պահեստում: Գնահատման ու վերադիրների համար ինչ հիմունքներ են ընդունված: Տսկոսային հավելումների քանակը ինչքան է: Ի՞նչ ծախսեր մտնում են ապրանքի ինքնարժեքի մեջ: Յեթե կան անպետքացած ու փչացած ապրանքներ՝ ժամանակին կազմվել են արձանագրութիւններ նրանց վնասի հաշվով գրանցելու համար: Ի՞նչ գումարի յի այդ անպետքացած ապրանքների ընդհանուր արժեքը, ինչո՞ւ յին ապրանքները փչանում: Պահեստի ու խանութի վարիչները ինչպես են հաշվառման յինթարկվում: Ստուգումներն ու հետևանքները ինչպիսի են:

5. Ընկերութայն գները վորքան են համապատասխանում շուկայի ու պետական առևտրի գներին:

6. Ի՞նչպես են պահվում ապրանքները պահեստներում ու խանութներում: Մաքուր են վերջիններս: Կանոնավոր են կշռքները, կշարարերը և չափերը: Ապրանքների վաճառման ժամանակ քաշի մեջ կեղծիքներ չեն կատարվում: Ապահովագրված են ապրանքները կրակից և ընդհանրապես հրդեհի վտանգ կամ խանութում ու պահեստներում:

7. Ազգաբնակչութայնն ինչպես են հայտնվում ընկերութայն խանութներից ծախվող ապրանքների գների տեղեկանքները: Յեթե հանձնաժողովին հայտնի յի, վոր ընկերութայն անդամները գնումներ են կատարում մասնավորներից՝ պիտի պարզել այդ յերևույթի պատճառները:

8. Վարչութիւնը միջոցներ է ձեռք առել, վոր գնորդները ընկերութայն գրամարկը մացեն կանխույթներ (ավանսներ): Յեթե ընկերութիւնը վարկավորում է յուր անդամներին բաց հաշվով (վոչ թի փոխառութայն կամ վաճառահանման գործարքների կարգով), պարզել թի ինչ գումարներ են հաշվվում գնորդների վրա և ինչքան կանոնավոր են նրանք հետ գանձվում: Չկան արդյոք անհուսալի պարտքեր:

9. Ի՞նչպես են ձևակերպվում ապրանքով ապառիկ վարկավորումները: Յուրաքանչյուր դեպքի համար վարչութայն գրավոր կարգադրութիւնները կան արդյոք. ապրանք գնողներից ստորագրութիւններ են առնվում: Ովքեր են վարկավորվողները: Վարկավորումը անհրաժեշտութիւնն է:

10. Ընկերութայն անդամներին անհրաժեշտ ապրանքները արդյոք մասնավոր առևտրականներին չեն ծախվում:

11. Ընկերութայն ընդհանուր ժողովների վորոշումները վարչութայն կողմից կիրառվում են թե վոչ:

## 2. Վաճառահանում յեզ պատասուումներ

Այս գործարքների ձևական ստուգումը կատարելիս (ապրանքների հաշվառումը և գրքերի համեմատութիւնը փաստաթղթերի հետ)՝ հանձնաժողովը, ստուգելու համար, թի վարչութիւնը վորքան կանոնավոր է տանում այդ գործարքները, պարզում է հետևյալ հարցերը.

1. Ընկերութայն անդամներից մթերքները կանոնավոր են ընդունվում—ընդհանուր ժողովների կողմից հաստատված կանոնները կիրառվում են: Ի՞նչպես են ընդունվում մթերքները և ինչպես են գնահատվում: Արդյոք այս կամ այն անդամների վերաբերմամբ նկատելի չեն կողմապահութիւններ (դեպի վորմանց ճնշում ու խստութիւն—դեպի ուրիշները հովանավորող վերաբերմունք):

2. Ընկերութայն բոլոր անդամներն են իրենց մթերքները ընկերութայն միջոցով վաճառքի հանում, թե հաճախ նրանք դիմում են մասնավոր առևտրականների: Ընկերութայն ու մասնավորների մոտ նույն մթերքների գները ինչ տարբերութիւն ունեն: Ընկերութայն վաճառահանման շրջանառութիւնը քանի գնում մեծանում է, թե փոքրանում:

3. Ապրանքները մինչև վաճառքի հանելը լավ են պահվում: Վարչութիւնը նրանց տեսակների բաժանելու վրա լավ է ուշք դարձնում: Ապրանքները ապահով են կրակից, գողութիւնից և այլ պատահարներից: Ապահովագրված են ապրանքները:

4. Ընկերութիւնը ինչպես է վաճառահանում ընդունված ապրանքները. ընկերութայն անդամների համար այդ բանը ապահով կերպով յի կատարվում: Վաճառահանումը կոոպերատիվ ձևանա՞նք կիրառվում է կատարվում և յեթե վոչ՝ ինչո՞ւ: Կենտրոնի միջոցով է կատարվում և յեթե վոչ՝ ինչո՞ւ:

5. Ի՞նչ գներով է վարչութիւնը ընկերութայն անդամներից մթերքները ընդունում և քանիով է նույն մթերքները վաճառում: Այդ յերկու գների տարբերութիւնից վարչութիւնը ինչ ունի: Այդ յերկու գները շատ չեն և յեթե շատ են՝ ինչո՞ւ: Կարելի է յի կրճատել այն: Վաճառահանման բոլոր գործը պես կարելի յի կրճատել այն:

վերջանցնելուց հետո՝ ընկերութեան անդամներին ստացված ու գուտից լրացուցիչ վճարումներ արվում են թե չե:

6. Վաճառահանման գործառքները կարելի՛ յե փոփոխել և դնել այն կոմիտսիոն հիմունքների վրա, այսինքն—վոր ընկերութեանը յուր անդամներից ընդունած միջերքները վաճառքի հանի վորոշ տոկոս ստանալու պայմանով և նրանց հետ հաշիվները վերջացնի ապրանքների վաճառումից հետո:

7. Յեթե ընկերութեանը վոր և ե հիմնարկի համար միջերումներ (պատրաստումներ) ե կատարել՝ հանձնաժողովը պիտի հետաքրքրվի՝ թե ի՞նչ պայմանագրեր են յեղել կնքված այս մասին և վորքան նրանք ձեռնտու յեն ընկերութեան համար:

8. Անհրաժեշտ ե նույնպես պարզել, թե ո՞ւմ միջոցով են կատարվում այդ միջերումները՝ այլ և անհրաժեշտ ե պարզել այն բոլոր հարցերը, վորոնք ցույց են տրված վերևում՝ զանազան անձանց ու հիմնարկների գրքի քննութեան ժամանակ՝ ընկերութեան մատակարարողների վերաբերմամբ:

### Յ. Փոխառություններ

Հանձնաժողովը պիտի քննութեան յենթարկի, թե վորքան կանոնավոր են տարվում այս գործարքները, ի՞նչ անձաշտութեաններ ու շեղումներ պիտի քննական արձանագրութեան մեջ մըտցնել: Այս բոլորի հետ կապված են հետևյալ կարգի հարցեր.

1. Ընկերութեան կանոնագրութեան և ընդհանուր ժողովների վորոշումները փոխառութեանների վերաբերմամբ ճշտութեամբ են կիրառվում:

2. Ընկերութեան մեջ փոխառութեան սահմանները նախորդ են վորոշվում և այդ կարգի աշխատանքներին ընկերութեան խորհուրդը մասնակցում ե: Ընկերութեան բոլոր անդամներն են վարկավորվում: Ի՞նչպես են գրանցվում վերոհիշյալ վորոշումները: Հատուկ գիրք այս նպատակի համար պահվում ե թե ընդհանուր արձանագրութեանների գիրքն ե ոգտագործվում այդ նպատակով: Կանոնավոր ե պահվում այդ գիրքը. վորոշումները ստորագրվում են: Վարկավորման չափը փոփոխելու դեպքում կամ վարկերը փակելիս՝ նույնպես հատուկ վորոշումներ հանվում են և ի՞նչպես են նրանք գրանցվում: Փոխ արվող գումարները արտադրական նպատակների համար բավականաչափ ժամկետով են մնում ընկերութեան անդամների մոտ և հնարավոր ե այդ գումարների ճիշտ ժամկետին վերադարձնելը:

3. Ընկերութեան անդամները վարչութեանը դիմելիս պահանջաթուղթ են ներկայացնում: Այդ «պահանջների» համար հատուկ գիրք կա, թե առանձին բլանկներ: Փոխառութեանները հերթով են կատարվում և չի՛ նկատվում կողմապահութեան դեպի մեկը ի վնաս մյուսի:

4. Ի՞նչ գլխավոր նպատակների համար են գումարներ արվում ընկերութեան անդամներին: Վորքան այդ գումարները բավարարում են ընկերութեան անդամների տնտեսութեան ամենաանհրաժեշտ պահանջներին: Ընկերութեանը վարկավորող հիմնարկներից ստացած գումարները գործադրվում են նախորոշած նպատակներով և ընկերութեան անդամներն իրենց հերթին ստացած գումարները գործադրել են այն նպատակի համար, վորի համար պահանջաթուղթ են ներկայացրել:

5. Փոխ ստացած գումարները ինչո՞վ են ապահովված: Յերաշխավորողների կողմից չեն նկատվում չարաշահութեաններ: Յերաշխավորողներն իրենց յերաշխավորութեան համար ընկերութեան անդամներից դրամական հատուցումներ չեն ստանում:

6. Փոխ տված գումարների համար գրավականներ ընդունվում են—ի՞նչ գրավականներ, ինչպե՞ս են պահվում նրանք, ապահովագրված են:

7. Վորքան հաճախ են ժամկետներից ուշ վերադարձվում փոխ տրված գումարները: Ի՞նչպես ե վարչութեանը հետևում ժամկետների ճիշտ պահպանմանը: Ընկերութեան անդամներին հիշեցնող ծանուցագրեր ուղարկվում են՝ նրանց վճարումների ժամկետների մասին: Պահվում ե արդյոք «ժամկետների գիրք»:  
Վարչութեանը ի՞նչ միջոցների յե դիմում ժամկետները անց կացնողների վերաբերմամբ: Հաճախ են փոխ տված գումարները նորից տրվել՝ մուրհակի կամ ստացականի նոր ժամկետի նշանակումով արտագրելով:

8. Փոխ տված գումարների համար տոկոսներ ստացվում են, ի՞նչքան կանոնավոր են հաշվվում այդ տոկոսները\*):

9. Վարչութեանը հոգ ե տանում, վոր տնտեսական նպատակների համար վարկավորվեն գյուղի չքավորները: Յեղել են դեպքեր, յերբ խմբեր են վարկավորվել՝ մեկ-մեկու յերաշխա-

\*) Ամեն կարգի տոկոսները հաշվելու համար ձեռքի տակ պիտի ունենալ Трошенков-ի „Таблицы для вычисления процентов“ գրքույկը, հրատարակություն „Кооперативное издательство“ ընկերութեան: Այդ աղյուսակների ոգտութեամբ շատ հեշտ ե հաշվել որերի, ամիսների և տարիների տոկոսները:

վորությամբ: Չքափոր տնտեսությունների վարկավորման համար տեղական փոխոգկոմները յերաշխավորություններ տվել են:

#### 4. Արտադրություն

Յեթե ընկերությունը վորևե արտադրական ձեռնարկ ունի՝ որինակ՝ փուռ, ճաշարան, ջրաղաց և այլն, կամ գյուղական տընտեսական ձեռնարկ, ապա վերստուգելի հանձնաժողովը պիտի պարզի հետևյալ հարցերը, վորոնցից կարելի չի յեղրակացնել, թե վարչությունը ի՞նչքան կանոնավոր և աշխատանք տանում:

1. Ի՞նչ պահասություններ ունի ձեռնարկի սարգ ու կարգը: Վճրքան հաջողությամբ և նա աշխատում յուր մոտերքում գործող նման ձեռնարկների համեմատությամբ:

3. Ձեռնարկը լավ և ոգտագործվում: Գործը կանգ չի առնում: Վճրքան հաճախ են տեղի ունենում և ինչով են բացաարվում այլպիսի ընդհատումները:

3. Ոգտագործվող գիրծիքները, մեքենաներն ու գույքը լավ են պահվում. չեն խախտվում արդյոք տեխնիքական ու սանիտարական պարտադիր կանոնները:

4. Վճրքան ապահով և հիմնարկը հում նյութերով, վառելիքով: Չափազանց շատ չեն ծախսվում նրանք: Ձեռնարկության պատասխանատու վարիչը նյութեր ու մթերքներ ընդունելիս ստորագրություն և տալիս և ի՞նչ ձևի, ի՞նչպես և հաշվառվում՝ հում նյութերի, վառելիքի և այլ մթերքները ծախսումը: Աշխատանքի հաշվառումը ի՞նչպես և կատարվում: Ձեռնարկության արտադրությունը ի՞նչպես և հաշվառվում\*):

5. Ի՞նչպես են գնահատվում ընկերության արտադրած ապրանքները: Ընկերության գները շուկայի գների համեմատությամբ բարձր են, թե՞ ցածր:

6. Ընկերության ծախսերի պատճառով արտադրությունը թանգ չէ նման այլ հիմնարկների արտադրությունից: Ձեռնարկությունը ոգիւտ և բերում, թե՞ վնաս:

7. Հեշտությամբ են ծախսվում ընկերության արտադրած ապրանքները:

8. Վճրքան տեղին են ընկերության անդամների դժգոհու-

\* ) Բացի մայր մատյանից՝ արտադրական ձեռնարկները համար պիտի պահել անմիջապես յերեք ոժճանդակ զբքեր. ա) հում նյութերի գերք, բ) վարիչի ամենօրյա որագիր և գ) արտադրության հաշվառման գերք:

թյունները իրենց մթերքների վերամշակման վերաբերմամբ: Այդ դժգոհությունները պիտի ստուգման յենթարկել:

9. Վարչությունը մասնագետները ցուցմունքներով ոգտվում և գործը լավացնելու համար ել ի՞նչ միջոցներ են ձեռք առնվում:

10. Գյուղատնտեսական ձեռնարկը ապահովված և անասունների կերով, սերմացվով և այլն: Կանոնավոր ու ծրագրված են տնտեսության աշխատանքները: Ի՞նչ բացեր կան: Տնտեսության բարելավման համար ի՞նչ և հարկավոր անել: Տնտեսության հաշվառումը կանոնավոր և զբված:

#### 5. Գյուղատնտեսական գործունեություն

1. Բացի վարկավորումից ու առևտրական գործունեյությունից՝ վարչությունը ընկերության անդամների տնտեսություններին ել ի՞նչ ոգնություն և աալիս:

2. Յեթե ընկերությունը ունի գյուղատնտեսական վորևե ձեռնարկ, վերջինս ընկերության անդամների համար որինակելի՞ չի: Յեթե վոչ՝ ի՞նչ և անհրաժեշտ անել, վոր ընկերության տընտեսությունը որինակելի դառնա:

3. Ի՞նչ գրության մեջ են ընկերության մեքենաների ու գործիքների վարձակաջանները— ի՞նչպես են պահվում այնտեղ մեքենաներն ու գործիքները: Վարձակաջանից վերցրված մեքենաներն ու գործիքները ժամանակին վերադարձվում են: Ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոնները կիրառվում են:

4. Ի՞նչ գրության մեջ են ընդմնավորման կայանները: Ի՞նչ գրության մեջ են այնտեղ պահվող կենդանիները: Վերջիններս շատ են ոգտագործված թե՞ վոչ:

#### 6. Կուլս-կրթական գործունեություն

1. Վարչությունը հոգ և տանում, վոր ընկերության անդամները ալելի գիտակից վերաբերմունք ունենան դեպի ընկերության գործը: Ինչով և այդ արտահայտվում և ել ի՞նչ պիտի արվի այդ ոգղությամբ:

2. Ընկերությունը գրադարան կամ ընթերցարան ունի՞, ինչպե՞ս են ոգտվում գրանցից ընկերության անդամները: Լավ ինչպե՞ս են պահվում ընկերության պատկանող գրքերը. յերկար ժամանակ չեն մնում նրանք ընկերության անդամների մոտ:

3. Պարզել ընկերության կուլս-կրթական գործունեության ալ արտահայտությունները (կոոպերացիան իրճիթ ընթերցարանում, գրավաճառման գործը, դասախոսությունները և այլն):

## ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆՈՒՅՅՈՒՆԸ

### 1. Վարչութիւնը յեզ խորհուրդը.

Յերևան բերելով գործի մեջ՝ այս կամ այն անկանոնութիւնը՝ վերստուգելի հանձնաժողովը պիտի պարզի, թե ինչից են նրանք առաջանում:

1. Արդյոք վարչութիւնն է մեղավոր, — նա յուր պարտականութիւնները լավ չի կատարել: Այս դեպքում հանձնաժողովը պիտի պարզի, — վարչութիւնը ամբողջ կազմով է մեղավոր, թե նրա առանձին անդամները. վերջին դեպքում՝ ովքեր:

2. Արդյոք այն պատճառով են անկանոնութիւններ, վոր ընկերութիւնի գործունեութիւնն ընթացել է այնպիսի պայմաններում, յերբ հանձնաժողովը արդարացնում է յերևան բերված բացերն ու պակասութիւնները՝ վկայելով, թե վարչութիւնը չէր կարող այդ անկանոնութիւնների առաջն առնել և այս վերջինները վոչ թե վարչութիւնի մեղքն են, այլ նրա դժբաղդութիւնը:

Ընկերութիւնի գործերի գրութիւնն ուսումնասիրելով, ստուգելով նրա բոլոր գործունեութիւնը՝ վերստուգելի հանձնաժողովը պիտի քննի այն հարցը, թե գործի շահերի տեսակետից վարչութիւնի տմբողջ կազմը և նրա առանձին անդամները վորքան են իրենց կոչմանը համապատասխանում:

1. Վարչութիւնը ամեն ինչ նախատեսել է գործի լավ ընթացքի համար. լավ է վարել ընկերութիւնի տնտեսութիւնը. կատարել է կանոնադրութիւնի բոլոր պահանջները. թե՛, գուցե, վարչութիւնը յեզել է վատ տնտեսավար և գործին վնաս է հասցրել:

2. Ունի՞ արդյոք վարչութիւնը ընկերութիւնի գործի բազմազան ճյուղերը վարելու անհրաժեշտ փորձնականութիւնն ու գիտութիւնն: Վարչութիւնի բոլոր անդամներն են աշխատում ընկերութիւնի համար:

3. Վարչութիւնի անդամները վայելո՞ւմ են ընկերութիւնի անդամների հարգանքը և ունե՞ն հեղինակութիւն:

4. Վարչութիւնը ոգտվո՞ւմ է յուր կողմերատիվ կենտրոնի, վարկավորող հիմնարկների, պետական առևտրի ու այլ մարմինների վստահութիւնը:

5. Վարչութիւնը կատարո՞ւմ է ընկերութիւնի ընդհանուր ժողովի, միութիւնական կենտրոնների վորոշումները, հրահանգներն ու ցուցումները:

6. Վարչութիւնը ընկերութիւնի գործերը խմբովե՞ն է վարում. չի՞ նկատվում նախագահի կողմից միահեծանութիւն: Վարչութիւնի անդամները վորքան կանոնավոր են հաճախում նիստերին: Վորքան հաճախ են տեղի ունենում վարչութիւնի նիստերը:

7. Վարչութիւնը ո՞ւմ է, ինչո՞ւ համար է հավատարմագրեր տվել (լրի՞վ թե մասնավոր), ի՞նչ պայմանագրեր ու պարտավորութիւններ է ստորագրել. վարչութիւնի հավատարմագրով վոչ մի չարաշահութիւն չի՞ կատարվել — ինչո՞ւմ են նրանք արտահայտվել: Վարչութիւնը հաճախ է ստուգում յուր հավատարմատարները գործողութիւնները:

8. Վորքան հաճախ է հավաքվում ընկերութիւնի խորհուրդը: Համաձայն կանոնադրութիւնի նա յուր պարտականութիւնները վորքան բարեխիղճ է կատարել, մասնավորապես՝ նա մասնակցե՞լ է ընկերութիւնի անդամների վարկավորմանը և այդ խնդիրների քննութիւնը: Խորհրդի բոլոր անդամները հաճախում են նրա նիստերին: Վարչութիւնը խորհրդի նիստերին յուր գործնեութիւնի լուրջ խնդիրները դնո՞ւմ է քննութիւն և յուր առաջարկները մտցնո՞ւմ է:

9. Վարչութիւնը լավ փոխհարաբերութիւններ ունի տեղի վարչական ու հասարակական կազմակերպութիւնների հետ:

Բացի այս բոլոր հարցերը պարզեց՞ով վերստուգելի հանձնաժողովը ընկերութիւնի տնտեսական գործարքները և առանձին հաշիվները ստուգման յենթարկելով՝ նպատակ պիտի դնի պարզել նաև այն, թե վարչութիւնն ու խորհրդի անդամները ընկերութիւնի անդամների համեմատութիւնը չեն՞ ոգտվել վորոշ արտոնութիւններով (որինակ՝ վարկի, ապրանքների գնման, մթերքների վաճառահանման, փոխառութիւնի, վարձակալանից ոգտվելու և այլն) ընկերութիւնի ծառայութիւններից ոգտվելիս:

### 2. Մասնաշրջաններ

Վերստուգելի հանձնաժողովը քննութիւնի ժամանակ պիտի յուր յեզրակացութիւնը հանի նաև այն մասին, թե ընկերութիւնի ծառայողները վորքան կանոնավոր են կատարում իրենց պարտականութիւնները և ընդհանրապես վորքան են նրանք պիտանի իրենց հանձնարարված գործի համար:

Հանձնաժողովը միաժամանակ հավաստիանում է, թե վորքան կարգին են նրանց աշխատանքային պայմանները —

1. Վո՞րքան ժամանակին ե նրանց աշխատավարձը տրվում: Աշխատանքի որենտդրքի պահանջները վո՞րքան ճշտությամբ են կատարվում: Ի՞նչպիսիք ծառայողներն են հաշվեգրքույկներ ունենում: Ծառայողների ապահովագրման տոկոսները վճարվո՞ւմ են և վո՞րքան կանոնավոր:

2. Պատասխանատու ծառայողների հետ կնքվա՞ծ են համապատասխան պայմանագրեր. վո՞րքան կանոնավոր են այդ պայմանագրերը կազմված: Պատասխանատու ծառայողներից գըրավականներ վերցնո՞ւմ են և ի՞նչպիսի գրավականներ:

3. Ծառայողները վո՞րքան բարեխիղճ են կատարում ընդհանուր ժողովներից հաստատված հրահանգներն ու վորոշումները:

4. Վո՞րքան կանոնավոր են ծառայողների ու վարչության փոխհարաբերությունները: Ընդհարումներ ու թուրքիմացություններ ծառայողների ու վարչության մեջ տեղի չե՞ն ունցել, ի՞նչ հոգի վրա, ո՞վ ե մեղավորն ու արդարը այդ ընդհարումների մեջ:

### 3. Ֆինանսական միջոցներ

Ապահովել ընկերությունը միջոցներով՝ դա վարչության առաջին պարտականությունն է, իսկ ստացված միջոցները կանոնավոր ու նպատակահարմար գործադրելը՝ յերկրորդ պարտականությունը պիտի համարել: Այդ յերկու ընդհանուր հարցերը պարզելիս՝ վերատուգիչ հանձնաժողովը կանգ պիտի առնի հետևյալ առանձին հարցերի վրա:

1. Վարչությունը հարկավոր ֆինանսական միջոցներով ընկերությունը ապահովելու համար ձեռք ե առել համապատասխան միջոցներ: Անդամների սեփական միջոցները բավականաչափ արձգ են հավաքվում (փայտվճար, մուտքի վճար, ավանդներ և այլն): Մասնավորապես՝ ավանդներ ընդունելու գործը տեղական պայմաններում ի՞նչ հետևանքներ ե տալիս: Վարչությունը դիմե՞լ և բոլոր այն հիմնարկներին, վորոնցից կարելի յե միջոցներ ստանալ. ուրիշ իրոքով ասած՝ վարչությունը ոգտագործե՞լ ե բոլոր ֆինանսական աղբյուրները ընկերության նպատակների համար:

Հեվաքելով ֆինանսական միջոցները և ծախսելով այն՝ վարչությունը ծրագրային աշխատանք ե տանում, թե՞ առանց ծրագրի յե աշխատում: Այդ ծրագրները համապատասխանում են ընդհանուր ժողովի վորոշումներին ու հաստատված նախահաշիվներին: Դրամական միջոցները չե՞ն ծախսվում աննպատա-

կահարմար, անհաշիվ ու նախահաշից դուրս նպատակների համար: Վարչությունը այնպիսի ծախսեր չի անում, վորոնցից ընկերությունն անտեսությունը վոչ մի ոգուտ չի կարող ստանալ: Ընկերության բացված վարկերը վարչության կողմից լիովին են ոգտագործված և յեթե վոչ՝ ինչո՞ւ:

3. Վարչությունը յուր փոխառած միջոցների համար մեծ տոկոսներ ե տալիս և հնարավորություն կա ուրիշ տեղերից աւելի եթան (ցածր) տոկոսներով նույն միջոցներն ստանալու:

4. Վարչությունը փոխառած միջոցները ժամանակին հետ դարձնելու համար միջոցներ ե ձեռք առնում: Մոտակա ժամկետներն ապահովված են վարչության կողմից: Վարչությունը յուր պարտականությունները կատարելու խնդրում ճշտապահ ե: Ընկերության մուրհակները չե՞ն բողոքարկվել (պրոտեստի չե՞ն գնացել): Յեվ յեթե բողոքարկվել են՝ ինչո՞ւ, ո՞վ ե մեղավորը: Վարչությունը յուր վճարումների ժամկետներին ուշադիր հետևում ե. պահվո՞ւմ ե «ժամկետային գիրք»:

5. Վարչությունը միջնորդե՞լ ե՝ ստանալու համար հատուկ «ապահովող» վարկ՝ ընդունված ավանդների վերագածը անկասկած դարձնելու համար:

6. Վարչությունը կարողանո՞ւմ ե կանոնավոր ոգտվել հատուկ ընթացիկ հաշիվ ունեցած վարկից: Ապահով ե պահվում բանկային (չեկերի) գրքուկը և վարչությունը գիտակցում ե, թե վո՞րքան վտանգավոր ե, յեթե այդ գրքուկը գողացվի կամ կորցնվի:

7. Վարչությունը յուր ընկերության անդամների վարկավորման գումարները նպատակին ե գործադրում և չի խառնում այդ միջոցները այն միջոցների հետ, վորոնք առևտրական շրջանառության համար են ծառայում:

8. Վարչությունը հոգ ե տանում, վոր ընկերության սեփական միջոցները շատանան. ի՞նչ ե յենթադրում անել, համաձայն կանոնադրության և ընդհանուր ժողովի վորոշումների՝ ժամանակին են տոկոսային հատկացումներ արվում և գըրքերում անցկացվո՞ւմ են այդ հատկացումները: Ընկերության դրամագլուխը մեծացե՞լ ե՝ թե՞ փոքրացել: Դրամագլուխների հաշվառման հատուկ գիրք պահվո՞ւմ ե, թե չե:

9. Վարչությունը ընկերության անդամներից ստորագրություններ ե առնում նրանց պատասխանատվության մասին՝ համաձայն կանոնադրության: Կանոնավոր են պահվում այդ

ստորագրութիւնները և բոլորից են առնվում: Վարչութիւնը պահում է այդ պատասխանատուութեան գումարների հաշիվը: Ի՞նչ գումար է ներկայացնում այն վերջին հաշիվեկշիւով:\*)

10. Վարչութիւնը վորևէ գործառնութիւն կնքելիս նախնական հաշվական յենթադրութիւններ առնում է՝ պարզելու համար, թե վորքան ձեռնառու յե այդ գործառնութիւնը ընկերութեան համար, վորքան սպասվող յեկամուար ծածկում է անհրաժեշտ ծախսերը: Կազմում են նախահաշիվներ:

11. Ընկերութեան ինչքան միջոցները մնում են անդամների ու կողմնակի անձանց մոտ: Վարչութիւնը ի՞նչ միջոցներ է ձեռք առնում այդ գումարները հետ ստանալու համար՝ յեթե նրանք ժամանակին չեն վերադարձնում: Վարչութեան պարտապանների ժամկետներն անցկացրած մուրհակները պահվում են, թե՛ նոտարին են ներկայացվում բողոքարկման համար:

12. Վարչութիւնը պարտատերերին ուղարկում է հաշիվներ. ժամանակին են ուղարկում այդ հաշիվները և կանոնավոր են նրանք կազմում:

13. Վարչութիւնը կոմմիսիոն հանձնարարութիւններ ընդունելով կարնոսնում է ուրիշների դրամական միջոցներ գրավել: Աշխատում է վարչութիւնը նույն հիմունքներով վաճառահանել ընկերութեան անդամների միջոցները: Կարողացել է վարչութիւնը ընկերութեան անդամներից կանխույթներ (ավանսներ) հավաքել՝ նրանց համար հարկավոր գործիքներ, նյութեր և մեքենաներ ձեռք բերելու համար:

14. Վարչութիւնը ժամանակին վճարում է պետական հարկերը, ձեռք է բերված իրավաթուղթ (պատենտ) և դրոշմատուրքային կանոնները պահպանվում են:

Վերստուգիչ հանձնաժողովը առանձին ուշադրութեամբ պիտի հետազոտի ընկերութեան յեկամուարները և մանավանդ ծախսերը:

\*) Ընկերութեանների մի ծ մասը պատասխանատուութեան մասին ստորագրութիւններ չեն վերցնում: Իրանց փոխարինում են ընկերութեան անգամագրվողների գրավոր հայտարարութիւնները: Վորնց մեջ ասվում է, թե՛ յայտարարութիւն տվող պարտավոր է հպատակվել ընկերութեան կանոնադրուտատված, կարիք չկա առանձին ստորագրութիւններ առնել պատասխանատուութեան մասին: Պիտի հետեւել, վոր բոլոր անգամագրվողները տան վերահիշյալ հայտարարութիւնը:

#### 4. Յեկամուարներ յեվ ծախսեր

Վերստուգիչ հանձնաժողովը առանձին ուշադրութեամբ պիտի հետազոտի ընկերութեան յեկամուարները և մանավանդ ծախսերը: Վարչութեան անշնորքութիւնը տնտեսութեան վարելու գործում համարյա թե միշտ արտահայտվում է անկանոն, իզուր ծախսերի մեջ, կամ չափից դուրս մեծ ծախսերի մեջ: Վարչութեան անբարեխիղճ լինելն էլ կարելի է տեսնել ծախսերի մեջ: Թե ի՞նչպես պետք է ստուգել առանձին յեկամուարներն ու ծախսերը, մենք արդեն վերևում խոսել ենք: Այժմ կարևոր է ավելացնել մի քանի խոսք ևս:

Մայր մատչանում պահվում է առանձին հաշիվ՝ «յեկամուարների ու ծախսերի»: Այն ընկերութիւններում, վորտեղ հաշվապահութիւնը կանոնավոր է դրված՝ պահվում է նույնպես մի ոժտանդակ գիրք կամ հավաքածու: Յեկամուարների ու ծախսերի գիրքը՝ Հանձնաժողովը կարող է այս գրքերով մանրամասն ծանոթանալ յեկամուարների ու ծախսերի հետ ու պարզել հետեյալը:

1. Ընկերութեան յեկամուարները ծածկում են նրա ծախսերը առանձին ձեռնարկներում և ընդհանուր առմամբ:

2. Վոչ անհրաժեշտ ծախսեր կան: Վորոնք են: Կան այնպիսի ծախսեր, վորոնք ավելի շատ են, քան անհրաժեշտ է: Ի՞նչ ծախսեր են դրանք: Ի՞նչպես անել, վոր ավելորդ ծախսերը վերացվին:

3. Չեն յեղել դեպքեր, յերբ վարչութեան անդամները կամ ծառայողները գործուղվել են՝ առանց գործի անհրաժեշտութեան՝ նյութական վնասներ տալով ընկերութեանը:

4. Ընկերութեան ծախսերը շրջանառութեան վոր տոկոսն են կազմում. Ընկերութեան առանձին ձեռնարկներում ապրանքների վրա ի՞նչ վերագրել ծախսեր են գալիս:

5. Ընկերութեան գործերով ճանապարհորդութիւն կատարելիս ծախսերը չափազանցված չեն: Ի՞նչ տոկոսով այդ ծախսերն ընկնում են գնվող կամ վաճառահանվող ապրանքների վրա:

6. Անկանոն կամ սխալ տուրքերի դեպքեր չեն յեղել—ի՞նչ միջոցներ են ձեռք առնվել այդ տուրքերից ընկերութիւնն ազատելու համար:

7. Փաստորեն արված ծախսերի գումարը վորքան է համապատասխանում նախահաշիվ հաստատված ծախսերին: Յեթե ծախսերն ավել են արվել, քան նախահաշիվում նախատեսվել է, ի՞նչն է այդ ավելորդ ծախսերի պատճառը և վորքան են նրանք անհրաժեշտ յեղել:

8. Բոլոր ծախսերն են արված փաստաթղթերով և յիժի վոչ բոլորը՝ ի՞նչն է դրա պատճառը: Անհնարին է յեղել նրանց ստանալը:

### 5. Գործավարությունը յեվ հաշվապահությունը

Գործավարության վերաբերմամբ հանձնաժողովին պիտի հետաքրքրեն հետևյալ հարցերը:

1. Ընկերության յելից և մտից գրությունները կարվճում են: Ինչքան ժամանակի վերաբերվող գրությունները դեռ ևս կարված չեն և ընդհանրապես ընկերության գրություններն ի՞նչ դրու- թյան մեջ են գտնվում: Գրությունները ժամանակին են կատար- վում, ստացվող հարցումներին պատասխանները ժամանակին են տրվում: Ընկերությանը յել ու մուտքի մատյաններ պահում է և ի՞նչքան կանոնավոր:

2. Ի՞նչպես է պահվում ընկերության հաստատված ու գրան- ցված կանոնադրությունը, այլ և պայմանագրերը: Ի՞նչ պահպա- թյուններ են նկատված պայմանագրի մեջ՝ ընկերության շահերը վոչ բավականաչափ պաշտպանված լինելու մտքով (պատասխա- նատու ծառայողների, մատակարարողների, պատրաստուների և այլ պայմանագրերում): Ընկերության անդամների ցուցակները պահվում են: Լճիկ են պահվում ընկերության անդամների պա- տասխանատվության մասին տված ստացականները:

3. Ընկերության վարչության, վերաստուգիչ հանձնաժողո- վի, խորհրդի նիստերի, այլ և ընդհանուր (կամ լիազորական) ժո- ղովների արձանագրությունների գիրք տարվում է: Բոլոր արձանագրությունները ստորագրված են և ժամանակին: Արձա- նագրությունների մեջ ի՞նչ անկանոնություններ են նկատված: Ընկերության կնիքը ինչպես է պահվում:

Հաշվապահության վերաբերմամբ, բացի վերջինիս քննու- թյան մասին տրված ցուցումներից՝ հանձնաժողովը պիտի հետե- յալ հարցերը պարզի:

1. Ընդհանրապես վճարան կանոնավոր է դրված հաշվապա- թյունը: Ի՞նչ փոփոխություններ պետք է մտցնել հաշվապահու- թյան մեջ: Մայր մատյանը և ոժանդակ գրքերը վճարան են հետ մնում:

2. Հաշվական տարին վերջացնելուց հետո հաշվապահը ի՞նչ- քան ժամանակից հետո է պատրաստել տարեհաշիվը:

3. Ամսական հաշվեկշիռները կազմվում են և վերջին ամս- վա հաշվեկշիռը պատրաստ է, թե՛ վոչ:

4. Վարչությունը հճգ է տանում, վոր ընդհանուր (կամ լիա- զորական) ժողովներից առաջ ընկերության անդամները ծանու- թանան տարեկան հաշվեկշիռի և հաշվետվության հետ և վոր վեր- ջիններս ընկերության անդամներին հասկանալի լինեն:

5. Հաշվապահությունն ավելի կանոնավոր հիմքերի վրա դնելու ի՞նչ արգելքներ կան:

### 6. Վերաբերմունք գեպի աճումները

1. Ընկերության անդամների թիվը պահպանում է, թե աճե- լանում: Շրջանի անտեսությունների վճար մասն է ընկերությանն անդամագրվել և ի՞նչն է խանգարում, վոր ֆնացածներն ել ան- դամագրվեն: Այս ուղղությամբ վարչու- թյունն ի՞նչ միջոցների յե դիմում: Պրոպագանդայի ի՞նչ միջոցներ են ձեռք առնվում:

2. Յեղեկ են անդամագրվել ցանկացողներին մերժելու գեպ- քեր: Ի՞նչ պատճառներով և վճարան հարգելի յեն այդ պատճառ- ները: Չքավոր անտեսություններն ընկերությանն անդամա- գրվելու համար դժվարություններ չե՞ն հարուցվել:

3. Ընկերության անդամները կատարում են կանոնադրու- թյան հիման վրա հանձն առած պարտավորությունները: Յեթե վոչ՝ ինչո՞ւ— ի՞նչ գեպքերում և ի՞նչպես: Նույնը ընդհանուր ժո- ղովների (կամ լիազորների) վորջումների վերաբերմամբ:

4. Վարչությունը նոր անդամներ ընտանելիս կանոնադրու- թյան բոլոր կետերը կատարում են ձևականորեն: Կատարում է թյան վարչու- թյունը կանոնադրության պահանջները՝ ընկերությանից վե- հեռացող, հեռացվող կամ ընկերության մեռած անդամների վե- րաբերմամբ:

5. Ընկերությանը յուր բոլոր անդամների շահերին հավա- սանք է ծառայում. վարչու- թյան անդամների կողմից չե՞ն նկատ- վում կողմնապահության գեպքեր՝ ընկերության վորոշ անդամ- ների վերաբերմամբ (ազգայնական կամ այլ հողի վրա)— ների վերաբերմամբ (ազգայնական կամ այլ հողի վրա) — վարչու- թյունն արտոնություններ՝ վարկավորման, սպ- նրանց ցույց չե՞ն տրվել արտոնություններ՝ ժամանակ: Հարուստ և բանքներ ծախելու և այլ գործարքների ժամանակ: Հարուստ և ունեւոր տարրերին գերադասու- թյուն չի՞ տրվել ի ֆրաս չքավոր, սղքատ կամ միջակ տարրերի: Ընկերու- թյունը հավասարու- թյամբ է սղքատ կամ միջակ տարրերի: Ընկերու- թյունը հարուստ և չքավոր յուր գործունեու- թյունը տարածում չըջանի բոլոր գյուղերի վրա: 6. Ընկերության բոլոր անդամներին են անդամագրքույկ- ներ տրված և նրանց մեջ, ըստ կանոնադրության ժամանակին գրանցվում են բոլոր այն գործարքները, վոր ընկերությանը

ունենում ե անդամագրքույկի տիրոջ հետ: Վարչութիւնը հիգ ե տանում, վոր ընկերութեան անդամների պարտքերը պակասեն:

7. Վարչութիւնը աշխատում ե ընկերութեան անդամներին զանազան խորհրդակցութիւնների հրավիրել: Կարողանում ե նա ընկերութեան անդամներին պարզել ընկերութեան գործերի դրութիւնը ե ուշադիր ե նա դեպի անդամների բոլոր կարիքներն ու պահանջները: Ընկերութեան անդամները բավականաչափ ծանօթ են, թե ի՞նչ ե կատարվում ընկերութեան մեջ:

8. Վարչութիւնը ընկերութեան անդամների ընդունելութեան համար նախորոշված տեղ ու ժամեր ունի: Չէն նկատվում վարչութեան անդամների ե ծառայողների կողմից ավելորդ ձևապաշտութիւններ ու «զինվորական» վերաբերմունք դեպի ընկերութեան անդամները:

9. Վճրքան հաճախ են հրավիրվում ընկերութեան ընդհանուր (կամ լիազորների) ժողովներ: Անդամների վճր մասն ե այդ ժողովներին մասնակցում ե ինչ՞ով ե բացատրվում ընկերութեան անդամների բացակայութիւնը (յեթե շատ մեծ ե բացակայողների թիվը): Այդ ժողովներին վարչութիւնը լծվ ու կանոնավճր ե նախապատրաստվում. ընկերութեան անդամներին այդ ժողովների տեղի, ժամանակի ու որակարգի մասին ի՞նչ ձեռք ե հայտնվում:

10. Ընկերութեան անդամները վարչութեան վերաբերմամբ ի՞նչ դժգոհութիւններ ունեն, վճրքան արդարացի յեն այդ դժգոհութիւնները: Հանձնաժողովը պիտի քննութեան առնի այն բոլոր գանգատները, վորոնք տրված են վարչութեան ու խորհրդի դեմ:

### 7. Վերաբերմունք դեպի միութիւնը

1. Ընկերութիւնը յուր կոոպերատիվ Միութեան (կենտրոնի) բոլոր ձեական պահանջները կատարել ե: Ընկերութիւնը անդամագրվել ե յուր Միութեանը: Մտքը ե նրան փայլաձայրը: Ընկերութեան վարչութեան ստորագրութիւններն ու կանոնադրութիւնը ժամանակին հայտնված են Միութեանը:

2. Ընկերութիւնը հաճախ ե դիմում յուր կենտրոնին՝ խնդրելով նրանից մասնագիտական ոգնութիւն (հաշվապահ գյուղատնտես ե այլն):

3. Վարչութիւնը (կամ այլ ընտրված լիազորները) մասնակցում ե Միութեան լիազորների ժողովներին, ծանոթանում ու հետևում են վերջինիս գործունեութեանը:

4. Վարչութիւնը յուր գնումների ու վաճառահանման գործերում հաճախ ե ոգստվում Միութեան ծառայութիւնից. յեթե վո՞չ ինչ՞ով: Ի՞նչ հաշիվներ ունի ընկերութիւնը յուր Միութեան հետ:

5. Միութիւնը ի՞նչ կարծիք ե կազմել ընկերութեան գործերի ու նրա վարչական մարմինների մասին, (այս մասին հանձնաժողովը պիտի դիմի Միութեանը՝ տեղեկանքներ ստանալու համար) վճրքան ե այդ կարծիքը բաժանում վերստուգիչ հանձնաժողովը:

6. Ընկերութիւնը յուր Միութեանը կանոնավոր կերպով ուղարկում ե հաշիվները, ընդհանուր ժողովների արձանագրութիւնները ե յուր ընդհանուր ժողովների ծանուցագրերն ու որակարգը:

### 8. Վերաբերմունք դեպի այլ կոոպերատիվներ

1. Վարչութիւնն անհրաժեշտ ե համարում շրջանի այլ կոոպերատիվների հետ սերտ կապ պահպանելը: Աշխատում ե, վոր բոլոր այդ կոոպերատիվները համերաշխ գործնեյութիւն ունենան՝ ընդհանուրի շահերն ե նկատի առած: Ինչ՞ով ե այդ արտահայտվում:

2. Ընկերութիւնը ի՞նչ գործնական հարաբերութեան մեջ ե յուր շրջանի այլ կոոպերատիվների հետ: Ամեն ինչ կանոնավճր ե արվել ե յեթե վո՞չ՝ ո՞վ ե մեղավոր ե ինչ՞ով կարելի յե բացարկել:

3. Շրջանի տարբեր կոոպերատիվների (գյուղատնտեսական, սպառողական, վարկային ե այլն) մեջ մրցում չի՞ նկատվում: Չէն պատահել դեպքեր՝ յերը նրանք նման գործերով են զբաղվում (որինակ՝ նման ապրանքներ են ծախում, նման մթերքներ են վաճառահանում ե այլն): Վարչութիւնը միջոցների՞ յե դիմել այդ մրցումին վերջ տալու համար ե յեթե անհետեանք են մնացել այդ միջոցները՝ ինչ՞ով:

4. Վարչութիւնը միջոցներ ե ձեռք առել միացնելու ընկերութեան անդամներին ընդհանուր վորակե ձեռնարկի շուրջը: (Որինակ՝ մեքենաների նորոգման արհեստանոց հիմնելը—շահագործոված մի խմբի համար, մեղվաբուծներին մի այլ խմբում միացնելը ե այլն): Ի՞նչ հետեանքների յե հասել վարչութիւնը այս աշխատանքները կատարելով:

XI. ԻՆՉՊԵՍ ՔՆՆՈՒՅՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ ՅԵՐԲ ՇԱՇՎԱՊԱՆՈՒ-  
ՅՅՈՒՆ ԶԻ ՏԱՐՎԵԼ ԿԱՄ ՇԱՇՎԱՊԱՆՈՒՅՅՈՒՆԸ

ԽՃՃՎԱԾ Ե

Յեթե վարչութիւնը կանոնաւոր հաշվապահութիւն չի տարել և ընկերութեան գործաքննները հաշվական գրքերով չեն գրանցուում—պարզ և, վոր նա մեղավոր և և այդ բանը նրան պիտի հայտարարել: Յեւ յեթե գրքերը չեն տարվել կամ գրանցումները կատարվել են այնպես, վոր վոչինչ չի կարելի հասկանալ, ապա վերստուգիչ հանձնաժողովի գործը շատ ծանրանում ու դժվարանում և: Այսպիսի դեպքերում ամեն մի հանձնաժողով կարող և գլուխ չհանել և կարելիոր կլինի ողնութեան կանչել վորևէ փորձված ու իմացող անձնավորութեան:

Նման դեպքերի համար մենք կարող ենք տալ հետեւյալ ընդհանուր ցուցմունքները:

Նկատելով վարչութեան անփութութիւնը հաշվապահութեան վերաբերմամբ՝ վերստուգիչ հանձնաժողովը անմիջապէս վարչութեանից պահանջում և հրավիրել մի փորձված հաշվապահ, վորն իսկույն և յետ պիտի ընկերութեան հաշվապահութիւնը կանոնաւոր հիմքերի վրա դնի, ընկերութեան գործունեութիւնը գրանցի և բոլոր գործերը պատրաստի հիմնական քննութեան համար: Մինչև հաշվապահի այս աշխատանքը վերջացնելը՝ հանձնաժողովը հետաձգում և յուր քննութիւնը:

Բայց լինում են դեպքեր, յերբ քննութիւնը հետաձգել չի կարելի և անհրաժեշտ և իսկույն պարզել ընկերութեան գործերի գրութիւնը:

Այսպիսի դեպքերում հանձնաժողովը, ողնութեան հրավիրելով վորևէ իմացող անձի (ցտնկալի յե հաշվապահ), փորձում և ընկերութեան գործերի գրութիւնը պարզել ընկերութեան գործերում յեղած փաստաթղթերով, հարց ու փորձի յենթարկելով ընկերութեան հետ գործ ունեցող հիմնարկներին ու անձնավորութիւններին, պահանջելով վերջիններից հաշվեկրքույկներ ու հաշիվների քաղվածքներ, այլ և պահանջելով ընկերութեան հաշիվ քաղվածքը յուր կոտակրատի միութիւնից:

Հանձնաժողովն այս դեպքում հետեւյալն և անում:

1. Հաշվառման և յենթարկում ընկերութեան բոլոր ունեց-

վածքը՝ գրամարկը, ապրանքները, հում նյութերը, գույքը և այլն—այնպես ինչպես ցույց և տրված այս գրքի նախընթաց գլուխներում:

2. Պարզում և, թե ընկերութեան գրամարկը ինչքան փող և մտել (փայարճար, մուտքի վճար, փոխառութիւններ բանկերից, ընկերութեան անդամներից, զանազան պատվերների կանխույթներ, ավանդներ, փոխառութիւնների վերադարձ ընկերութեան անդամներից և այլն): Այս բոլորը պարզում և ընկերութեան փաստաթղթերից ու գրքերից և ընկերութեան վարչութեան անդամների, ծառայողների ու այլ անձանց հարց ու փորձից:

3. Պարզում և, թե ընկերութեանը ինչ ծախսեր և արել՝ ապրանքների ու հում նյութերի գնման ծախսեր, փոխառութիւնների վերադարձ, փոխառութիւններ յուր անդամներին, ավանդների վերադարձ գույքերի ու այլ գործիքների գնում, գործող դումների ծախքեր, ծառայողների ուժիկ և այլն:

4. Ապրանքների, հում նյութերի ու գույքի վերաբերմամբ՝ պիտի պարզել նրանց քանակը ջոկ—ջոկ՝ ինչքան և մտել, ինչ դոււարի, ինչքան և ծախսվել, ինչ դոււարի:

5. Արտադրական ձեռնարկների վերաբերմամբ պարզում և, թե ինչ հում նյութեր, ինչ քանակով ու արժեքով, մտել են արտադրութեան մեջ՝ վերամշակվելու համար, և ինչքան և վերամշակվել, ինչ և ստացվել, ինչ մնացորդ կա թե հում նյութերից ու թե պատրաստած ապրանքներից:

Այս բոլորը պարզելով կողմնակի հարց ու փորձով—յեթե անհնարին և ընկերութեան փաստաթղթերից բոլոր հարկավոր տեղեկութիւնները հավաքել—հանձնաժողովը շատ զգուշութեամբ պիտի վերաբերվի առանձին անհատների ցուցմունքներին: Միայն վերջիններիս խոսքին հովատար անկարելի յե: Հանձնաժողովը պիտի այդ ցուցմունքները հնարավորին չափ ստուգման յենթարկի:

Հավաքած տեղեկութիւններից հանձնաժողովը կազմում և շրջանառութիւնների տեղեկագիր՝ թե առանձին գործառքների և թե բոլոր տեղեկագրերը համախմբելով մի տեղեկագրի մեջ:

Առանձին տեղեկագրերը պիտի կազմել՝ մի առ մի թվելով առանձին անձանց ու հիմնարկների անունները. ա) փոխառութիւնների, բ) ավանդների, գ) փայերի, դ) ընկերութեան անդամների այլ հաշիվների, յե) փոխառութիւնների, զ) այլ և այլ հաշիվների վերաբերմամբ: Շրջանառութեան տեղեկագրերի գու-

մարները (յեւթի ու մուտքի, շրջանառութեան ու մնացորդների) հավաքում են մի հավաքածու տեղեկագրի մեջ, վորի մեջ յեղած մնացորդները պիտի համապատասխանեն ընկերութեան ունեցած դրամի, ապրանքների, հում նյութերի, պարտապանների, պարտատերերի, և այլ հաշիվների մնացորդներին:

Այս դեպքում պարզվում են նաև պակասորդները, վորոնց գումարը գրվում է վարչութեան հաշիվին: Այդ պակասորդները պարզվում են հանձնաժողովի ձեռքի տակ գտնված յերկու շարք թվերի համեմատութեանից—ա) փաստական մնացորդների ցուցակագրումից և բ) ընկերութեան հաշիվների ու փաստաթղթերի գրանցման ընդհանուր յեզրակացութեաններին:

Այդ պակասորդները մտցնելով ընկերութեան ակտիվների (ունեցվածքների) շարքը, համեմատելով ստացված հաշիվեկշիռի ակտիվը պասսիվի հետ՝ հանձնաժողովը վորոշում է, թե ընկերութեանը վորքան ոգուտ կամ վնաս է ստացել (ոգուտ՝ յերբ ակտիվը գումարը պասսիվից շատ է, և վնաս—յերբ պասսիվն է ակտիվից ավելի):

Ինքն ըստ ինքեան պարզ է, վոր հանձնաժողովը յեթե յերևան բերի պակասորդներ, պիտի պարզի նաև թե ո՞վ է դրանց պատասխանատուն:

Ընկերութեան գործերի ընդհանուր գրութեանը պարզելու համար՝ հանձնաժողովը ոգտվում է վերը բերված ցուցումներով:

Յեթե հանձնաժողովը չի կարողանում պարզել քննական շրջանին վերաբերվող շրջանառութեանները, նա պիտի հոգ տանի, գոնե, քննութեան որվա վերաբերյալ հաշիվների գրութեանը պարզելու համար, վորպեսզի դրանից հետո կարելի լինի հաշվապահութեանը կանոնավոր տանել: Այս դեպքում ծախսերի ու յեկամուտների հաշիվ չի լինի, վորոշ հաշիվներ կպարզվեն փաստական հաշվառումով (այդ հաշիվները հաջորդ աղյուսակում նշանակված են աստղանիշով) իսկ մնացած հաշիվները կպարզվեն փաստաթղթերի, անդամագրքայիների ու զանազան տեղեկանքների միջոցով:

Այդ բոլոր աշխատանքների հետևանքը ամփոփվում է հետևյալ տեղեկագրի մեջ:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ \*)

Դիվիզիոնի №	ՀԱՇԻՎՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Մնացորդ առ		Շրջանառութեան		Մնացորդ առ	
		Ակտիվ	Պասսիվ	Դեբետ	Կրեդիտ	Ակտիվ	Պասսիվ
1	*) Դրամարկդ						
2	Ավանդներ ու ընթ. հաշիվներ						
3	Փոխ տված գումարներ						
4	*) Ապրանքներ սպառման համար						
5	*) Ապրանքներ վաճառահանման համար						
6	*) Արտադրական ձեռնարկներում						
7	*) Հում նյութեր						
8	*) Արժեքավոր թղթեր						
9	*) Ծարժական գույք						
10	*) Անշարժ գույք						
11	Փայեր այլ հիմնարկներում						
12	Ընկերութեան անդամները						
13	Միութեան						
14	Զանազան տնօրին. ու հիմնարկներ						
15	Փոխառութեան						
16	Ավանդներ (ընդունված)						
17	Դրամագլուխ (հիմնական և այլ)						
18	Յեկամուտներ ու ծախսեր						
Ընդամենը (հաշիվեկշիռ)							

\*) ԾԱՆՈԹ.— Պարզ է, վոր հաշիվների այս անվանացուցակը տարբեր կարգի հիմնարկներին համար տարբեր կլինի: Որինակ՝ շատ հաշիվներ սպառողական կոոպերացիան չունի և միաժամանակ նա կարող է ունենալ այնպիսի հաշիվներ, վորոնք այս անվանացուցակում չկան: Հենց այդ պատճառով հանձնաժողովը քննութեան յենթարկվող ընկերութեան հաշիվների անվանացուցակը մշակում է ինքը կամ վերցնում է քննութեան յենթարկվող կոոպերատիվից: ԹԱՐԳՄ.

XII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԼԵՏՈ

Յերբ հանձնաժողովը՝ քննութեանը վերջացնելուց հետո՝ յուր յեզրակացութեաններն է հանում վերստուգիչ հանձնաժողովի

հատուկ նիստում, ապա՝ նախ քան քննական արձանագրություն (ակտ) կազմելը, նա պիտի գումարի վարչության հետ խոսն նիստ, վորի ընթացքում պիտի պարզի յուր վերջին կասկածները: Միաժամանակ նա յուր առաջարկները պետք է անի վարչության այն վորոշումների մասին, վոր վարչությունը պիտի ընդունի քննության հետևանքով յերևան բերած թերություններին ու պակասների մասին: Որինակ՝

1. Վարչության այս կամ այն անդամի, կամ այս ինչ ծաղայողի հաշվին գրել այսքան պակասորդը:
  2. Վնասի հաշվին գրել այս ինչ ապրանքը, կամ գույքը, վոր անպետքացի է (յեթե, ի հարկե, այդ բանի համար վորեկ մեկի անփութությունը չի պատճառը):
  3. Դուրքի ընդհանուր գումարը իջեցնել այսքանով՝ այդ յերկու գումարների տարբերությունը գրելով վնասի հաշվին:
  4. Հանձնարարել հաշվապահին վիտեյալ գրանցումները կատարել հաշվապահական գրքերում, այլ և չգրանցված գործարքները գրքերով անց կացնել, վորից հետո՝ հանձնաժողովի հսկողությամբ կազմել ընկերության հաշվեկշիռը առ քննության օրը:
- Վերոհիշյալ խոսն նիստից հետո՝ հանձնաժողովին մնում է վորոշել, թե ինչ պիտի գրվի քննական արձանագրության մեջ և հանձնարարել հանձնաժողովի անդամներից մեկին այդ արձանագրության կազմելը, տալով նրան հավաքված բոլոր նյութերը: Յեթե այդ աշխատանքն իսկույն կատարել անկարելի չէ, հանձնաժողովը նորից և հավաքվում, արձանագրությունը կարգալու, հաստատելու և ստորագրելու համար:

Յերբ հաշվապահը բոլոր գրքերի մեջ պահանջվող գրանցումները կատարում է և դուրս է բերում առանձին հաշիվների մնացորդները, ապա հանձնաժողովին ստուգելով այդ աշխատանքների ճշտությունը՝ գրքի մեջ անում է հետևյալ մակագրությունը:

«Մայր մատյանի գրանցումները ստուգված են ու համեմատված փաստաթղթերի հետ 192 թ. ամսի ...-ից մինչև 192 թվի ... ամսի ...-ը»: Այս մակագրության տակ ոտորագրում են վերստուգիչ հանձնաժողովի ու վարչության անդամները, այլ և հաշվապահը:

Յեթե քննությունը յերևան է հանել յուրացում, վատնում կամ վորեկ այլ լուրջ չարաշահություն, ապա այդ մասին կազմելով արձանագրություն՝ գործի բոլոր մանրամասնություններով, հանձնաժողովը պիտի անհապաղ վորոշի, թե ինչպես պետք է վերաբնրվել մեղավոր անձանց հետ:

Հնարավոր են այսպիսի վորոշումներ, ա) զեկուցանել ընդհանուր (կամ լիազորական) ժողովին և նրան առաջագրել վորոշումների նախագիծ՝ հանձնաժողովի յեզրակացությամբ և բ) կատարվածի մասին անմիջապես տեղեկացնել դատախազին կամ ժողքնախիչին:

Յեթե մեղավոր է վոչ թե ամբողջ վարչությունը, այլ նրա առանձին անդամը կամ ծառայողներից վորեկ մեկը, ապա վերստուգիչ հանձնաժողովը վարչությանն և հանձնաժողովում յուր ընտանուգիչ հանձնաժողովը վարչությանն կամ քննիչին ուղարկեն թաղությունները՝ գործը դատախազին կամ քննիչին ուղարկելու մասին: Իսկ յեթե մեղավոր է ամբողջ վարչությունը և կելու մասին: Իսկ յեթե մեղավոր է ամբողջ վարչությունը ու հանձնավորչին պիտի յենթարկել պատասխանատվության ուղարկուած գտնում է, վոր գործի դատական մարմիններին ուղարկելը չի կարելի հետաձգել՝ ապա հանձնաժողովն ինքն է կատարում այդ՝ առանց ընդհանուր ժողովին սպասելու:

Լուրջ չարաշահությունների դեպքում հանձնաժողովն իսկույն ընդհանուր (կամ լիազորական) ժողով և հրավիրում՝ գործի մասին զեկուցելու համար \*):

Այն ընկերություններում, վորտեղ բացի վարչությունից ու վերստուգիչ հանձնաժողովից գործում է նաև խորհուրդը՝ բոլոր լուրջ խնդիրները, նախ քան ընդհարուր ժողովին գնելը՝ պիտի քննության յենթարկել խորհրդում: Հանձնաժողովը զժմարում է համապատասխան միջոցների գլմել, ապա նա պիտի բանում է համապատասխան կոտպերատիվների Միությանը՝ անհապաղ հաղորդի այս մասին կոտպերատիվներից մեկին: Խնդրելով վերջինից գործուղել յուր հրահանգիչներից մասին միշտ համեմայն դեպս՝ քննության հետևանքների մասին միշտ պիտի տեղեկացնել կոտպերատիվների Միությանը՝ ուղարկելով նրան նաև քննական արձանագրության պատճենը:

### XIII. ՔՆՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼԸ

Բոլոր տեսակի քննությունները պիտի վերջանան այդ մասին արձանագրություն կազմելով: Արձանագրության մեջ անհրաժեշտոբեն հետևյալ մասերը

\*) Վերևում արգեն առվել է, վոր վերստուգիչ հանձնաժողովը յուր պահանջը ընդհանուր ժողով հրավիրելու մասին հայտնում է վարչությանը և յեթե վերջինս յերկու շաբաթվա ընթացքում ժողով չհրավիրի՝ հանձնաժողովն ինքն է այդ ժողովը հրավիրում:

պիտի լինեն. ա) յե՛րը և ո՞վ է կատարել քննությունը, բ) ի՞նչն է առիթ տվել քննությանը, գ) ի՞նչն է քննության յենթարկվել, դ) քննության հետևանքն ի՞նչ է յերևան հասնել և յե) քննության յեզրակացությունները, վորոնց մասին զեկուցվելու յե ընդհանուր ժողովին:

Յեթե քննությունը մասնակի բնույթ է կրում՝ հանձնաժողովը արձանագրության մեջ նկարագրում է, թե ինչ գրության մեջ է գտնվում ընկերության այն ձեռնարկը, բաժանմունքը կամ ճյուղը, վորը քննության է յենթարկվել:

Յեթե քննությունը լրիվ է՝ արձանագրության մեջ մի առ մի գրվում է այն ամենը, ինչ վոր ընկերության բոլոր գործերում յերևան է հանված:

1. «Յե՞րը և ո՞վ է կատարել քննությունը» հարցի վերաբերմամբ՝ քննական արձանագրության մեջ անուն-անուն պիտի թվել՝ բացի վերստուգիչ հանձնաժողովի անդամների անուններից, նաև վարչության այն անդամների անունները, վորոնք քննությանը ներկա յեն յեղել, ինչպես հրահանգչի անունը, յեթե նա մասնակցել է քննական աշխատանքներին:

2. «Ի՞նչ առիթով է քննությունը կատարվում» հարցին այս կերպ պիտի պատասխանել քննական արձանագրության մեջ «այս ինչ Միության առաջարկությամբ», կամ «տարեկան հաշվետվության ստուգման առթիվ», կամ «հանձնաժողովի ստացած այս ինչ տեղեղությունների հիման վրա» և այլն:

3. «Ի՞նչն է քննության յենթարկվել» հարցի վերաբերմամբ՝ վերստուգիչ հանձնաժողովը արձանագրության մեջ պետք է մի առ մի թվի քննության յենթարկված բոլոր հիմնարկների ու ձեռնարկների մասին և վոչ միայն այն հիմնարկների ու ձեռնարկների մասին, վորոնց մեջ թերություններ ու չարաշահություններ են գտնված: Այդ անհրաժեշտ է նրա համար, վոր ընդհանուր ժողովը տեսնի, թե վերստուգումը լրիվ է կատարված, ընկերության վոչ մի ձեռնարկ աչքից չի թողնված և բոլորն են քննության յենթարկվել:

4. Քննական արձանագրության (ակտի) մեջ ամենամեծ տեղ է բռնում այն, ինչ վոր քննությունը պարզել է, ըստ վորում, այդ պիտի նկարագրվի շատ համառոտ խոսքերով, ճշգրիտ, վորպեսզի կարգացողի մեջ վոչ մի կասկած չլինի, թե հանձնաժողովն ի՞նչ է ուզում ասել:

Քննական արձանագրության միատեսակ ձև ցույց տալ բոլոր դեպքերի համար անհնարին է: Սովորաբար լրիվ քննության

ժամանակ արձանագրության մեջ գրվում են նախ, արժեքների քննության արդյունքները (դրամարկդի, ապրանքների, գույքի և այլն), ապա՝ առանձին գործարքների, բաժանմունքների, հիմնարկների քննությունը՝ այն հերթով, ինչ հերթ ցույց է տրված այս գրքում և վերջապես գրվում է վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությունը ընկերության գործերի գրության մասին:

Սակայն հանձնաժողովը կարող է այլ, յուր համար հարմար կարգով արձանագրություն կազմել:

Տարեհաշվի քննական արձանագրությունը պիտի կազմել այն կարգով, ինչ կարգով այդ տարեհաշվի առանձին մասերն են կազմված:

5. Հանձնաժողովի բոլոր առաջարկները պիտի արվին բոլորովին վորոշ ու պարզ, ըստ վորում՝ յեթե տարեհաշվին է վերաբերվում՝ քննական արձանագրության մեջ պիտի ընդհանուր (կամ լիազորների) ժողովին առաջարկություն արվի— «տարեհաշիվը հաստատել» կամ «տարեհաշիվը չհաստատել» կամ «տարեհաշիվը հաստատել այս ինչ (թվել) փոփոխություններով»:

Ստորև մենք բերում ենք քննական արձանագրությունների մի քանի որինակներ: Ինքն ըստ ինքյան հասկանալի յի, վոր այդ որինակները բոլորովին ել պարտադիր չեն: Անձանագրություն կազմելիս հանձնաժողովը պիտի մի բան լավ հիշի՝ այն, վոր արձանագրության մեջ պիտի պարզ լինի, թե ընկերության գործերը ի՞նչ գրության մեջ են. այս բոլորը պիտի պատմված լինի համառոտ, պարզորոշ: Առաջարկները պիտի լինեն նույնպես վորոշ:

Արձանագրությունների համար հանձնաժողովի ձեռքի տակ կարող են լինել վորոշ տեսակի պատրաստի բլանկներ: Այս դեպքում հանձնաժողովի աշխատանքները շատ թեթևանում են: Համաձայն բլանկի հարցերի կամ բաց թողած տողերի նախորդած բովանդակության՝ հանձնաժողովը լրացնում է բլանկը. բայց հանձնաժողովը զբանով բավականանալ ու աշխատանքին վերջ տալ չի կարող. նա պիտի շատ բան յուր կողմից ավելացնի և վորքան շատ ու մանրակրկիտ է գործի քննությունը ներկայացրված՝ այնքան լավ:

Քննական անձանագրությունը պիտի ստորագրվի հանձնաժողովի, վարչության անդամների ու հաշվապահի կողմից, ըստ վորում՝ յերբ վարչությունը հանձնաժողովի պրած արձանագրության հետ համաձայն չէ՝ նա կարող է յուր ստորագրությունից

ատաջ այս մասին արձանագրութեան մեջ համապատասխան հիշատակութիւնն անել:

#### XIV. ՔՆՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԻՆԱԿՆԵՐ

##### №1 ՈՐԻՆԱԿ. (մասնակի բճճութիւններ)

1926 թվի ապրիլի 16-ին Եջմիածնի գավառի Աշտարակ գյուղի սպառողական ընկերութեան վերստուգիչ հանձնաժողովը՝ վարչութեան գործունեութեան մասին յուր ունեցած տեղեկութիւնները հիման վրա, քննութիւն կատարեց ընկերութեան № 1-ին խանութը մտած մի պարտիա կաթնամթերքների գնման գործարքի, վոր կատարվել է մասնավոր միջնորդ Գուրգեն Կիրակոսյանի միջոցով:

Քննութիւնը կատարեցին վերստուգիչ հանձնաժողովի անդամներ Հ. Ավագյանը, Մ. Գրիգորյանը և Հ. Գևորգյանը առաջնի նախագահութեամբ: Քննութեանը ներկա էին վարչութեան նախագահ Մ. Դավթյանը և վարչութեան անդամ Ա. Ռուբինյանը:

Վարչութեան անդամների հարց ու փորձից, գնված կաթնամթերքների համար կազմված փաստաթղթերից, այլ և կաթնամթերքների հատկութեան հետ ծանոթանալով՝ հանձնաժողովը պարզեց հետևյալը:

Ապրիլ 12-ին ընկերութեան գրասենյակին և յեկել մասնավոր միջնորդ Գուրգեն Կիրակոսյանը՝ առաջարկելով վարչութեանը 12 փութ հալած յուղ և 26 1/2 փութ պանիր՝ շուկայի գներից 25 տոկոս պակաս գներով: Այդ առաջարկը քննութեան և գրվել վարչութեան նիստում (տես արձանագրութեանների գիրք № 13 արձանագրութեան 4-րդ կետը) և վարչութեանը՝ գտնելով ընկերութեան համար ձեռնտու այդ մթերքների գնումը, հանձնարարել է վարչութեան անդամ Ա. Ռուբինյանին ձեռկերպել այն, մթերքներն ընդունել և հանձնել № 1-ին խանութին:

Հանձնաժողովը համեմատելով այդ մթերքների վորակն ու գները թե շուկայում և թե այլ խանութներում վաճառվող նման մթերքների հետ՝ գտավ, վոր վարչութեան ձեռք բերած այդ պարտիա կաթնամթերքները ավելի լավ են ու ավելի էժան: (Այստեղ հանձնաժողովը կարող է ըրել նաև գների տարբերութիւնը՝ ցույց տալով մասնավորի ու կոոպերատիվի գները):

Այս հիման վրա հանձնաժողովը գտնում է.

1. Վարչութեան հասցեյին արվող մեղադրանքը, վոր նա այդ կաթնամթերքների գնման գործում ունեցել է անձնական շահ (կամ ոգուտ) համարել բոլորովին չհիմնավորված:

2. Տվյալ կաթնամթերքների գնումը մասնավոր միջնորդ Գուրգեն Կիրակոսյանից (այս գործարքի գների ու գնված ապրանքի վորակի համար) — համարել Սպառողական ընկերութեան շահերի ձամար նպատակահարմար:

3. Սակայն, ի նկատի առնելով, վոր նման գործարքներ կնքելիս վարչութեանը կարող է սխալներ կատարել և նրա սխալները կարող են բացատրել վորպես անձնական շահագրգռման հետեանք — հանձնաժողովը առաջարկում է վարչութեանն առաջիկայում խուչս ալ մասնավոր միջնորդների ծառայութեան և նման գնումներ ձեռնարկել պետական կամ կոոպերատիվ հիմնարկների միջոցով: Կաթնամթերքների գնումը վարչութեանը միշտ էլ կարող է կատարել Լոռի Փամբամկի գավառի Ղարաքիլիսայի կոոպերատիվի միջոցով, կամ Եջմիածնի գավառի կաթնատնտեսական արտկններից: 17 ապրիլի 1926 թիվ:

Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ (ստորագրութեանը)

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ (ստորագրութեանը)

Վարչութեան նախագահ և անդամներ: (ոտորագրութ.)

##### № 2 ՈՐԻՆԱԿ. (մասնակի բճճութիւններ)

1925 թվի սեպտեմբերի 12-ին Ղարաքիլիսայի գյուղատնտեսական «Յեռանդ» ընկերութեան (վոր գտնվում է Լոռի-Փամբակի Ղարաքիլիսա կայարանում) վերստուգիչ հանձնաժողովը բերն հասած տեղեկութիւնների հիման վրա՝ վոր իբր թե ընկերութեան պատկանող ջրաղացում կատարվում են զեղծումներ ու չարաշահութեաններ՝ ընկերութեան ջրաղացի գործերի քննութիւն կատարեց:

Քննութեան մասնակցում են հանձնաժողովի նախագահը Ա. Հովհաննիսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Գ. Հովսեփյանը և Խ. Ղուլյանը: Ներկա յեն վարչութեան նախագահ Ս. Հարութեանյանը և ջրաղացի կառավարիչ Զ. Զարչյանը:

Անսպասելիորեն ջրաղաց ժամանելով՝ հանձնաժողովը գրտավ ընկերութեան տասն անդամներին, վորոնք ցորեն էյին բերել աղալու, ըստ վորում՝ նրանցից յերկուսը — Հ. Թադևոսյանը և Մ. Մովսեսյանը — հանձնել են աղալու՝ առաջինը 10 փ. 13 գ.

իսկ յերրորդը 7 փուլ: Ըստ ջրաղացի սակագնի՝ յուրաքանչյուր փուլ աղացած ցորենից ընկերությունը պիտի ստանա յերեք գլրովանքա վարձատրություն: Դուրս գալով այդ նորմայով Հ. Թագեվոսյանի ցորենից 31 գր.՝ Թագեվոսյանը պիտի ստանար 9 փ. 22 գր. իսկ Մ. Մովսեսյանի ցորենից 21 գրովանքա դուրս գալով՝ Մովսեսյանը պիտի ստանար 6 փ. 19 գրովանքա: Հանձնաժողովը տեղն ու տեղը կըռելով Հ. Թագեվոսյանի և Մ. Մովսեսյանի ստացած ալյուրը՝ գտավ, վոր նրանցից առաջինը հետ և ստացել ջրաղացից 9 փ. 1 գրով, իսկ յերկրորդ՝ 6 փ. 6 գրով: Այսպիսով՝ ջրաղացը ցույց ե տվել պակասորդ ու փոշիացում Թագեվոսյանին՝ յուրաքանչյուր փթին  $2\frac{1}{2}$  գրով, իսկ Մովսեսյանին փթին 2 գրով: Մինչդեռ՝ ջրաղացի մասին հաստատված կանոնադրությունը նախատեսում ե միայն  $\frac{3}{4}$ -ից մինչև 1 գրովանքա պակասորդ, վորը հանձնաժողովը ևս նորմալ ե գտնում:

Ջրաղացի կառավարիչ Չ. Չարչյանի բացատրությունը, վոր իբր թե մեծ պակասորդի պատճառը ջրաղացի քարերի վատությունն ե՝ հանձնաժողովը բավարար չի գտնում:

Հանձնաժողովը հարց ու փորձի յենթարկեց ընկերության անդամներ՝ Հ. Թագեվոսյանին և Մ. Մովսեսյանին. վերջիններս ցույց տվին, վոր նախորդ անգամներում նրանք խնդրել են ջրաղացի կառավարչին իրենց ալյուրը կըռելով հանձնել և կառավարիչը մերժել ե նրանց խնդիրը: Նույնը հաստատեցին նաև ընկերության այլ անդամները՝ Հ. Ներսեսյանը, Գ. Չուբյանը և Ռ. Աղիզյանը, վորոնք ջրաղացումն եյին:

Հանձնաժողովի հարցումին, թե ինչո՞ւ կառավարիչը ընդհանուր ժողովի կողմից հաստատված ներքին կանոնադրությունը խախտում ե՝ ընկերության անդամների որինական պահանջները չկատարելով, ջրաղացի կառավարիչ Չ. Չարչյանը պատասխանեց, թե նա այդ անելու հնարավորություն չունի, քանի վոր առանց ոգնականի յե աշխատում:

Հանձնաժողովը հաստատում ե, վոր ընկերության ջրաղացի ներքին կանոնադրությունը՝ հակառակ վարչության կարգադրության, կախված չի ջրաղացի գրասենյակում:

Հանձնաժողովի կարգադրությամբ կանգնեցնելով ջրաղացի աշխատանքները — սկսվել ե ջրաղացի քննությունը, վորի միջոցով յերևան ե բերված հետևյալը:

Ջրաղացի քարերից մեկի կողքից յերևան ե հանված հատակի լայն ճեղքվածք, վորի սիջոցով աննկատելի կերպով ալ-

յուր եր թափվում հատակի տակ հարմարեցրած տուրակի մեջ: Վերջինիս մեջ հանձնաժողովը գտել ե  $35\frac{1}{2}$  գրով. ալյուր: Ջրաղացի կառավարիչը այս առթիվ վոչ մի բացատրություն չտվեց:

Ջրաղացը պահվում ե կեղտոտ: Ցորենի ու ալյուրի տուրակները խառն ի խուռ դարսված են ջրաղացի նախասենյակում, իսկ այդ բոլորին կից նաև կուպրի մեծ դույլը և լվացքի տաշտակը:

Անցնելով վարչության գրասենյակը՝ վերստուգել հանձնաժողովը ստուգման յենթարկեց ջրաղացին վերաբերյալ հաշիվները, ըստ վորում պարզեց. 1) ջրաղացի շարաթական տեղեկագրերը ժամանակին չեն ներկայացվում, 2) վերջին յերեք շաբաթվա հաշիվները բոլորովին բացակայում են, 3) անդորրագրերի արմատները համեմատելով հաշվական տվյալների մեջ գտնվող փաստաթղթերի հետ, գտնված ե, վոր արմատներն ու անդորրագրերը իրար համապատասխանում են. 4) ջրաղացի կառավարչի անձնական հաշվից յերևում ե, վոր վարչությունը նրան ի հաշիվ ուժիկի տվել ե մեծ կանխույթներ՝ նրա յերկու ամսվա ուժիկի չափով, չնայած՝ ընդհանուր ժողովի վորոշման հիման վրա վարչությունն այդպիսի իրավունք չունի:

Հանձնաժողովը յենթադրաբար հաշիվ առնելով ջրաղացի կառավարչի սխտեմատիկ յուրացումը՝ հետևյալ թվերն ե վորոշում:

2. Չարչյանը կառավարում ե ընկերության ջրաղացը 5 ամիս: Այդ ժամանակի ընթացքում ջրաղացում աղացվել ե մոտ 2500 փ. ցորեն, նրա վատնումը (գողությունը) հաշվելով  $1\frac{1}{2}$ -ական գրովանքա փուլից՝ պիտի յեզրակացնել, վոր նա ընկերության անդամներից յուրացրել ե 3750 գրով. կամ մոտավորապես 94 փուլ ալյուր. (2-ական ուրլով) — 188 ուրլի:

Այս բոլորի հիման վրա՝ հանձնաժողովը վորոշում ե.

1. Համարել 2. Չարչյանին անհամապատասխան ընկերության շահերին և առաջարկել վարչությանը՝ նրան անմիջապես հեռացնել պաշտոնից:

Առաջարկել վարչությանը՝ դատարանով պահանջել 2. Չարչյանից 188 ը. ընկերության անդամներին հասցրած վնասը և 60 ո. ի հաշիվ ուժիկի ստացված գումարը:

3. Առաջարկել վարչությանը ներկա արձանագրության պատճենը հաղորդել ժողքնիչին և կոոպ. Միությանը:

4. Գտնել, վոր վարչությունը անփուլ թ ե վերաբերվել ջրաղացի գործին՝ չը կազմակերպելով պատշաճ հսկողություն:

5. Անհրաժեշտ գտնել՝ առաջարկել ընդհանուր ժողովին 188 ը. գումարը (վոր դատարանով ստացվելու յե 2. Չարչյննից) հատկացնել կուլտուրիստական նպատակներին:

6. Ներկա արձանագրությունը կարգալ ընկերության անգամների ընդհանուր ժողովում:

### Պատճառ ստորագրութուններ

2. Չարչյանը հրաժարվեց արձանագրությունը ստորագրելուց: Ճիշտ ե: Վերստուգելի հանձնաժողովի նախագահ (ստորագրություն):

№ 3 Ռիցակ. (Խանկաբժակի կամ արհակաբզ լրիվ բնութայուն, )

1925 թվի հունիսի 12-ին Յելենովկայի գուղատնտեսական վարկային ընկերության վերստուգելի հանձնաժողովը՝ նախագահությամբ Ս. Մինասյանի, մասնակցությամբ հանձնաժողովի անգամներ Ս. Ռշտունու և Մ. Արեշյանի՝ ի նկատի առնելով հանձնաժողովի տեղեկությունները՝ ընկերության գործերի անկարգ ու խառն գրության մասին, հանկարծակի մտավ ընկերության գրասենյակը՝ սկսեց ընկերության գործերի լրիվ քննությունը, ըստ վորում հունիսի 12 և 13-ին հանձնաժողովը վարչության անգամներ Ս. Գրեգորյանի ու Մ. Ավագյանի ներկայությամբ ստուգման յենթարկեց ընկերության գրամարկղը, ապրանքները, նյութերը և բոլոր գույքը: Ի նկատի առնելով այն հանգամանքը, վոր ընկերության գործավարությունն ու հաշվապահությունը շատ եր հեռ մնացած ու խճճված՝ հանձնաժողովը առաջարկեց վարչությանը յուր բոլոր գործերը կարգի բերել և հաշիվները գրանցել մինչև հուլիսի 1-ը, վորից հետո նշանակվեց քննության շարունակությունը:

Հուլիսի 1-ին՝ կրկին հավաքվելով ընկերության գրասենյակում, հանձնաժողովը գտավ գործերն այնքան կարգի բերված, վոր քննությունը կարելի յեղավ շարունակել և վերջացնել հուլիսի 4-ին:

Հանձնաժողովը գտավ հետևյալը.

1. Հունիսի 12-ին գանձարկղի ստուգման ժամանակ նրա մեջ գտնված ե 286 ո. 50 կ. կանխիկ դրամ և 124 ո. ժամանակավոր ստացականներ, ըստ վորում, համաձայն մայր մատյանի ու գանձարկղի գրքի, գրամարկղում 12-ն հունիսի պիտի լիներ 410 ո. 50 կ.: Գանձարկղի պակասորդ 124 ո. անմիջապես լրացվեց վարչության ասղամներ Ս. Գրեգորյանի ու Մ. Ավագյանի կողմ:

մից, վորոնք չկարողացան բացատրել, թե ինչ նպատակով են այդ գումարը վերցրել գրամարկղից. հանձնաժողովը պարզեց, վոր հակառակ գոյություն ունեցող կանոններ՝ վարչությունը յերբեք գանձարկղի ստուգում չի կատարել:

2. Ապրանքների փաստական մնացորդը հունիսի 12-ի ստուգման հետևանքով 1885 ո. 25. կ. ընդհանուր արժեք ուներ (վաճառքի գնով), մինչդեռ, մայր մատյանը հավասար ե 1796 ուրբու: Այդ պակասորդը հանձնաժողովի կարծիքով կարելի յե բնական կորուստներ (չորացում, փոշիացում և այլն) համարել: Միաժամանակ հանձնաժողովը գտավ 6. ո. 75 կ. գանազան ապրանքներ (ցուցակն առանձին կցվում ե), վոր փչացած են և պիտի մնասի հաշվին գրել: Հանձնաժողովը գտնում ե, վոր այդ մնասը ընկերության պահեստապետ Ս. Սողոմոյանի անփութության հետևանքով չի առաջացել, այլ պահեստի վատ պայմաններից: Վարչությունը ընթացիկ տարվա ընթացքում վոչ մի անգամ ապրանքների ստուգում չի կատարել:

Ընկերության անգամների համար շատ անհրաժեշտ ապրանքներ պահեստում բոլորովին չըկային, մինչդեռ, այդպիսիները կարելի յե գտնել Յերևանի շուկայում, այլ և կոպերաները կարելի յե գտնել Սերևանի սերմացուներ, տիվ կեոտրոններում: Որինակ՝ չկան գանազան սերմացուներ, չկան զերանդիներ, մանրագներ և այլ: Վարչությունն այդ յերևիլթը բացատրում և միջոցների պակասությամբ, սակայն հանձնաժողովը յենթադրում ե, վոր այդ պատճառաբանությունը անհիմն ե: Ընդհակառակը՝ վարչությունը յուր միջոցները չի կարողացել նպատակահարմար կերպով գործադրել և, որինակ՝ գնել ե մեծ քանակությամբ այնպիսի ապրանքներ, վոր կարճ ժամանակում ծախսին անհնարին ե՝ շուկայի փոքրության պատճառով:

Ստուգման յենթարկելով ապրանքների գները՝ հանձնաժողովը պարզել ե, վոր վարչությունը միևնույն հավելումներն և անում բոլոր ապրանքների վրա՝ առանց ի նստի առնելու տարբեր ապրանքների շրջանառության արագությունը և նրանց անհրաժեշտության աստիճանը: Հանձնաժողովի կարծիքով ընկերության գները ավելի բարձր են, քան թե կարող եյին լինել կոպերատիվ կալմակերպության մեջ:

3. Ընկերության գույքի հունիսի 12-ի ստուգման հետևանքով (ցուցակը կցված ե ներկա արձանագրությանը) պարզվեց, վոր ընկերությունն ունի 1264 ո. գույք, մինչդեռ՝ գույքի

գրքի ու մայր մատյանի մնացորդը 125 ուրբիով ավելի յե: Այդ տարբերությունը առաջացել է նրանից, վոր ընկերություն ձևերից մեկը սատկել է և հաշվապահական գրքերով դուրս չի գրված:

Հանձնաժողովը միաժամանակ պարզել է, վոր 20 ուրբով շրջանում սայլակը և 45 ուրբով շրջանում յերկու պահարանները բոլորովին անպետքացել են:

Հանձնաժողովին հայտնի յե, վոր ընկերության ձին սատկել է, սակայն վարչությունը ժամանակին արձանագրություն չի ձեռագրել և ձիու արժեք 125 ուրբով հաշվից դուրս չի գրել:

Ընկերության պահեստում ապրանքները պահվում են անկարգ ու խառն դրություն մեջ. մեկ մեկու վրա թափված, փոշոտված: Պահեստը խոնավ է և դրանից շատ ապրանքներ փչանում են:

Հունիսի 12-ի քննության ժամանակ ընկերության գույքը ցուցակի մեջ չեը մտցված: Այդ աշխատանքը կատարված է հետագայում՝ հանձնաժողովի առաջարկությունից հետո:

Ընկերության ապրանքներն ու շենքը ապահովագրված չեն:

Ընկերության անդամների փոխատվությունների անձնական հաշիվներից առ 1-ն հուլիսի մնացորդը 4437 ուրբի յե, վորից 1640 ուրբով ժամկետներն անցած փոխ տված գումարներ են, վորոնք հաշվվում են ընկերության գանազան անդամների վրա — համաձայն այս արձանագրությանը կցած ցուցակի: Հանձնաժողովը պարզեց, վոր վարչությունը վոչ մի միջոցի չի դիմում ընկերության անդամներին սովորեցնելու ժամկետային ճշտապահություն՝ փոխ առած գումարները վերադարձնելու գործում:

Ստացականներից յերկուսը ընկերության անգրագետ անդամների փոխ տված գումարների համար պատշաճ կերպով վավերացված չեն. ստացականները պահվում են վոչ թե զրամարկում կամ փակվող պահարանում, այլ սովորական գրությունների ու նամակների թղթապանակի մեջ:

Հաշվապահական բոլոր գրքերը՝ փոխ տված գումարների վերաբերմամբ, պահվում են, սակայն գրանցումները կատարվում են շատ անփույթ կերպով և շատ ուշացած:

Ժամկետանց կացրած գումարներից անհուսալի պիտի համարել ընկերության հանդուցյալ անդամ Մ. Պառավյանին տված քսան (20) ուրբին, և Մ. Մենակյանին տված 35 ուրբով, Մ. Մենակյանի բնակատեղին անհայտ է:

5. Հանձնաժողովը նկատում է ընկերության անդամների հետ ունեցած հաշիվների հետևյալ անկանոնությունները.

ա) Բոլոր անդամներին բաժանված են անդամագրքույկներ, սակայն ընկերության բոլոր հաշիվները ժամանակին չեն գրվում անդամագրքույկների մեջ:

բ) Չնայած ընդհանուր ժողովի վորոշմանը՝ ապառիկ ապրանքներ չվաճառել, հանձնաժողովը պարզել է, վոր ընկերությունն ունի 15 զանազան պարտապաններ, վորոնցից 5 հոգի վարչության անդամների ազգականներ են, իսկ 2 հոգի նույն իսկ ընկերության անդամներ չեն: Բացի այդ՝ վարչության անդամներն իրենք էլ են ապառիկ ապրանքներ վերցրել և քննության ուր նրանք ունեն 37 ուրբով, իսկ բոլոր պարտապանների ապառիկ գումարների գումարը հավասար է 104 ուրբու:

6. Ստուգման յենթարկելով ընկերության 32 անդամներից հավաքած անդամագրքույկները՝ հանձնաժողովը գտավ, վոր ընկերության յերեք անդամների (Սերբյանի, Մանուկյանի և Գասպարյանի) գրքույկներում նշանակված 15 ուրբով փայտվճարը, վոր մուծված է դեռ ևս մարտ ամսին, գրքերով չի անցած և դրամարկի չի մտել: Այդ փայտվճարներն ընդունել է վարչության անդամ Մ. Ավագյանը վարչության գրասենյակից դուրս և «մոռացել» է մտցնել ընկերության դրամարկը: Այդ գումարը մուծելով դրամարկը, Մ. Ավագյանը մտցրեց էլի 5 ուրբով, վոր իր ասելով մարտ ամսին ընդունել է ընկերության անդամ Յեսայանից (վերջինիս գրքույկը հանձնաժողովին չհաջողվեց ստուգել):

Քննելով փայտվճարների գանձման ընթացիկ ու անցյալ աշխատանքները՝ հանձնաժողովը գտնում է, վոր վարչությունը յեռանդուն միջոցների չի դիմում ընկերության անդամներից փայտվճարներ հավաքելու համար: Այդ բանը հաստատվում է նրանով, վոր 7 հոգի թեև դեռ անցյալ տարի յեն ընկերության անդամագրվել, սակայն մինչև այժմ բոլորովին փայտվճար չեն մտցրել. 12 հոգի նույնպես անցյալ տարվանից մուծար չեն մտցրել. 12 հոգի՝ 2-ական ուրբի և 33 հոգի՝ 3-ական ուրբի: Ընկերության 150 անդամներից պիտի գանձված լինեը 750 ուրբով — փաստորեն գանձված է 457 ուրբով:

7. Ստուգելով ընկերության հաշիվները կոպեքատիվ Միության հետ՝ հանձնաժողովը չգտավ վորեև անկանոնություն, սակայն անհնարին յեղավ պարզել, թե վորքան այդ հաշիվը համապատասխանում է Միության հաշիվին, վորովհետև մինչև

քննութեան որը Միութեանից պահանջված հաշիվների քաղ-վածքը հանձնաժողովը չկարողացավ ստանալ:

8. Նույնպիսի ստուգման յենթարկվեց զանազան անձանց ու հիմնարկութեանների հաշիվները. առանձին աչքի ընկնող անկանոնութեաններ չեն նկատված, սակայն կարևոր է կանգ առնել հետևյալ մանրամասնութեանների վրա:

Վարչութեան անդամ Մ. Ավագյանը՝ դեռևս հունվարին, № 159 յեղքի որդերով ստացել է առհաշիվ 1700ռ., վորից նա 1500 ռ. պիտի մտցներ Համամիութենական Կոոպ. Բանկի Յերե-վանի բաժանմունքը, ընկերութեան մուրհակի դիմաց, իսկ 200ռ. նա պիտի զանազան ապրանքներ գներ: Այս գումարի դիմաց Մ. Ավագյանը ներկայացրել է միայն 26 ռ. 35 կ. ծախս, իսկ 1673ռ. 75կ. նրա գրպանից գողացել են անհայտ չարագործներ, յերբ Ավագյանը, նախքան փողը ըստ պատկանելույն հասցնելը՝ ան-ծանոթ շրջանում հարբել ու քնով է անցել: Մ. Ավագյանը հանձ-նաժողովին պատմեց այդ դեպքի մանրամասնութեանները և թեև հանձնաժողովը չի կասկածում այդ պատմութեան ճշտու-թեան մեջ, սակայն գտնում է, վոր վարչութեան անդամ Մ. Ավագյանը իրեն վստահացած հասարակական գումարների պահ-պանման գործում յերևան է բերել աններելի անփութութեան: Թե Մ. Ավագյանը և թե ամբողջ վարչութեանը այս դեպքում հետևյալ սխալներն են արել. ա) գողութեան մասին միլիցիա-յին չեն հայտնել, բ) վարչութեանը կատարված գողութեան մասին վերստուգվել հանձնաժողովին չի հայտնել և առհասարակ վոչ մի միջոցի չի ձեռնարկել: Իրա հետևանքն է յեղել վոչ մի-այն այն, վոր ընկերութեանը ստացել է նյութական խոշոր վնաս, այլ և այն, վոր գողութեան հետևանքով ընկերութեան մուրհակը բողոքարկվել է՝ ընկերութեան վարկերը փակվել են:

Ծանոթանալով առհաճիվ անձանց հաշիվների հետ՝ հանձ-նաժողովը պարզել է, վոր վարչութեան անդամները յերկար ժա-մանակով առհաշիվ գումարներն իրենց մոտ պահում են: Այսպես որինակ՝ վարչութեան անդամ Դուրգբերյանը, վոր քաղաք է գործ-ուղղվել ապրիլի 20-22-ին՝ 750 ռ. առհաշիվ գումար ստանալով՝ ներկայացրել է արդարացուցիչ փաստաթղթեր ու գնած ապ-րանքների հաշիվներ 522 ռ., իսկ 228 ռ. վերաբերմամբ մինչև այժմ վոչ մի հաշիվ չի ներկայացրված, այլ և ֆնացորդ գումա-րը զրամարկոյին չի հանձնված: Վարչութեան նախագահը, վորին հունվարի 7-ին 300 ռ. առհաշիվ գումար է տրված՝ հաշիվ է ներ-կայացրել միայն ապրիլի 12-ին:

Հանձնաժողովը ստուգեց ընկերութեան հաշիվը գյուղատն-տեսական բանկի հետ, ըստ վորում պարզվեց հետևյալը. ընկե-րութեան գրքերով վերջինս գյուղատնտեսական բանկին պարտ է 2000 ռ. յերկարատև վարկ, մինչդեռ՝ գյուղատնտեսական բանկի հաշիվի քաղվածքից յերևում է, վոր այդ վարկի դիմաց ընկերութեան անդամ Մ. Ավագյանը ապրիլի 27-ին մացրել է 200 ռ: Այս փաստաթուղթը ընկերութեան հաշվապահը նոր մի-այն ստացավ Մ. Ավագյանից և զրանցեց քննութեան ընթաց-քում: Մ. Ավագյանը պատճառաբանեց, վոր նա մոռացել է փաստաթուղթը ժամանակին հաշվապահին հանձնել:

Ընկերութեան հանձնարարութեամբ Հ. Հովհաննիսյանը և Կ. Սարգսյանը կաշվի գնումներ են կատարում «Կաշվի Տրեստի» հա-մար: Նրանք մայիսի 20-ին ներկայացրել են հաշիվ և թեև նը-րանք փետրվարի 25-ին վերջացրել են իրենց գործերն ընկերու-թեան հետ, սակայն մինչև մայիսի 20-ը նրանց վրա ֆնացել է 977 ռ.— կանխույթների գումարի ֆնացորդը: «Կաշվի Տրեստը» այս առթիվ ընկերութեանը մի շարք նամակներ է գրել՝ արտա-հայտելով յուր դժգոհութեանը:

Ինքնաստիքյան այս կաշվի գնումներից ընկերութեանը ոգուտ է ստացել:

9. Փոխառուերյուցեթի վերաբերմամբ հետևյալ նկատու-ղութեաններն են արված:

ա) 1500 ռ. մուրհակը բողոքարկված է (տես վերը):

բ) Շատ անգամ ընկերութեան ժամկետային վճարումները չեն կատարվել և թեև մուրհակները չեն բողոքարկվել, սակայն առիթ են տվել ընկերութեանը անվարկունակ համարելու, վար-կավորումը կրճատելու յեվ մուրհակները նորից արագբերու: Իրա հետևանքով՝ ընկերութեանը մեծ տոկոսներ է վճարել վար-կավորող հիմնարկներին (կարելի չե որինակներ բերել):

գ) Գյուղատնտեսական բանկում ունեցած հատուկ ընթա-ցիկ հաշվով ընկերութեանը չի կարողացել կանոնավոր ոգտվել: Չեկերի գրքույկը պահվում է նախագահի գրասենյանի չփակված արկղում, մինչդեռ կարևոր է այն պահել գրամարկղում:

դ) Ընկերութեանը դեռևս ներկա անտեսակոն տարվա սկզբին ոգտագործել էր իրեն բացված բոլոր վարկերը. գյուղա-տնտեսական բանկում 6000 ռ. և համակոոպրանկում 3000 բուր-լի: Հանձնաժողովն այդպիսի քաղաքականութեանը համարում է սխալ:

10. Հանձնաժողովը գտել է, վոր վարչությունը վոչ մի միջոցի չի դիմել՝ ավանդների ընդունելության գործը կազմակերպելու համար, թեև դրա համար նա ունեցել է բոլոր հնարավորությունները—նույնիսկ գործերի մեջ կան մի շարք դիմումներ այս մասին:

11. Ստուգման յենթարկելով ընկերության յեկամուսնեցու ծախսերը՝ հանձնաժողովը գտել է, վոր վարչության աշխատանքները քայքայել են ընկերության տնտեսական շահերը և մեծ վնասներ են հասցրել ընկերությանը: Մի քանի որինակներ այս բանը ակնհայտի կգործեն:

ա) Հայտնի չէ, թե ինչպե՞ս ընկերության անպահանջների գընման համար քաղաք են գործող դրամ վարչության յերկու անդամներ—դրա հետևանքով ընկերությունը կատարում է ավելորդ վերադիր ծախսեր: Այսպես է յեղել հունվարի 5—7-ին, մարտի 10-ին և այլն:

բ) Փոխանակ ձմեռվա փայտի գնումներն ամառը կատարելու—ավելի եժման գներով, —վարչությունն այդ գնումները կատարում է ձմեռը՝ գներով հարկավոր փայտի քանակը մաս-մաս և շատ թանկ գներով:

գ) Վարչությունը յուր ճանապարհորդությունների համար պահում է կառք, վոր ամսական ընդհանուր առմամբ նստում է 40-ից 60 ուրբի, մինչդեռ ընկերության գործերի համար վարչությունը կծախսեր ամենաշատը 20—25 ու, յեթե նա ոգտագործեր վարձու փոխադրական միջոցներ:

Վարչությունը յուր ծախսերը չի համաձայնեցնում ընդհանուր ժողովի կողմից հաստատված նախահաշվի հետ:

Ստուգելով ծախսերի արդարացուցիչ փաստաթղթերը՝ հանձնաժողովը գտավ, վոր 424 ու. դանազան ծախսեր փաստաթղթերով չեն արդարացված: Հանձնաժողովը գտնում է, վոր այդ քանակությամբ փաստաթղթերի բացակայությունն անխույժատրելի չէ:

12. Ընկերության հաճվապավորյաց վերաբերմամբ հանձնաժողովը մատնանշում է հետևյալը.

ա) Ընկերության հաշվապահ Գ. Պետրոսյանը անպայման յուր գործը գիտե և կարող է տանել այն՝ առանց այդ արձանագրության մեջ ցույց տված բացերի: Ինչպես վերևում հիշատակված է՝ գրքերը համարյա թե առանց բացառության հետ են մնում: Հանձնաժողովը յուր առաջին այցելությունից (հունիսի 12-ից) մինչև յերկրորդ այցելությունը (հունիսի 1-ը) արձա-

նագրում է հսկայական աշխատանք, վոր հաշվապահը կատարել է՝ առանց կողմնակի աշխատակցի ոգնության:

Նկատելի չէ, վոր հաշվապահության թերությունների մեծ մասն առաջանում է վարչության անդամների ձգձգումներից ու գործերը «տնավարի» տանելուց: Հաշվապահը յուր հերթին վարչության անդամներին չի հիշեցնում ընդհանուր ժողովների վորոշումներն ու կոոպերատիվ կենտրոնի հրահանգիչների ցուցումները: Այս բոլորը պիտի նկատել հաշվապահ Գ. Պետրոսյանին և պարտավորեցնել նրան՝ ավելի մեծ պատասխանատվություն և զգալ ընկերության հաշիվները կանոնավոր տանելու համար—քան մինչև այժմ է զգացել:

13. Ընկերության գործավարությունը, ինչպես և հաշվապահությունը յերկրորդ այցելության ժամանակ գտնված են համեմատաբար կարգին դրության մեջ: Հանձնաժողովը յենթադրում է, վոր վարչության նախագահի ավելի ուշադիր վերաբերվելու դեպքում՝ ընկերության գործավարությունը շարունակ կարելի չէ տանել կանոնավոր՝ նույնիսկ որինակելի:

14. Բացի բոլոր վերոհիշյալ նկատողություններից՝ հանձնաժողովն ընդգծում է, ա) վոր վարչությունը և ընկերության խորհուրդը ուշ-ուշ են հավաքվում, բ) ընկերության անդամների ակտիվացման համար միջոցներ չեն ձեռք առնված և գ) վարչությունը վոչ մի կուլտիլթական աշխատանք չի տարել:

15. Հանձնաժողովը հանձնարարությամբ հաշվապահական բոլոր լրացուցիչ գրանցումներն ու ուղղումներն անելուց հետո՝ ընկերության հաշվեկշռի պատկերը հուլիսի 1-ին հետևյալն է: (Տես աղուսյակ 86 յերեսում):

Քննելով այս հաշվեկշռը՝ մենք տեսնում ենք, վոր ընկերությունն աշխատում է վնասով: Յեթե մնացորդ անպահանջները հաշվենք ինքնարժեքով և անհուսալի պարտքերն ել դուրս գրենք, պարզ է, վոր ընկերության վնասն էլ ավելի մեծ կլինի:

Ընկերության սեփական միջոցները շատ չնչին են: Ընկերության տված պարտքերն անդամներին և զանազան անձանց ուրության տված պարտքերն անդամներն և զանազան անձանց ուրության հիմնարկություններին շատ զգալի գումար են կազմում և նրանց ժամանակին չզանձելը ընկերության համար ճակատագրական վնասնակությունն ունի: Ընկերության մոտիկ ժամկետային վճանումները շատ են (կարելի չէ մեկ-մեկ թվել): Իսկ ընկերության բոլոր գործերի վորությունն այնքան էլ միթիթարական չէ: Ապրանքագործերի վորությունը փոքր է, վորովհետև ընկերության պային շրջանառությունը փոքր է, վորովհետև ընկերության պահեստում հեշտ ծախվող անպահանջների մեծ պաշար չկա:

1925 թ. հունիսի 1-ի հազվեցիւք

ՊՍՍՍԻՎ

ԱՆՏԻՎ

Գրամորկի	Պ. Մ. Մ. Մ.	Գրամագուլիներ
Փոխառութիւններ	271 թ. 80 կ.	
ա) մի տարի ժամկետով	2020 »	ա) փոխադարձներ . . . . . 457 թ. —
բ) մի տար. ավելի ժամկ.	2237 »	բ) սեփական . . . . . 2050 »
Ապրանքներ	1683 » 25 կ.	Փոխառած միջոցներ
Գույք . . . . .	1074 »	ա) յերկարատև վարկ . . . . . 1825 »
Բնիկ. անդամն. պարտ են	104 »	բ) կարճատեւ . . . . . 5113 »
Զան. անձ. և հիմն. »	2325 » 65 կ.	Պարտ ընկ. անդամներին
Ծախսեր 1924 թ. 1/X-ից	1547 » 78 »	Ավանդներ . . . . . 537 »
Զվճարված ծախսեր . . . . .	127 » 12 »	Յեկամ. 1924 թ. 1/X-ից
Վճար . . . . .	164 » 65 »	1523 » 25 կ.
<b>Հազվեցիւք</b>	<b>11,555 » 25 »</b>	<b>Հազվեցիւք</b>
		<b>11,555 թ. 25 կ.</b>

Այս բոլորի հիման վրա՝ վերստուգելի հանձնաժողովը պահանջում է վարչութիւնից, յերկու շաբաթվա ընթացքում հրավերել ընդհանուր ժողով՝ այս մասին տեղեկացնելով Միութեանը և ի զրկով վերջինիս—գործուղել ընդհանուր ժողովին յուր հր. անգիչներին մեկին:

Վերստուգելի հանձնաժողովը ընդհանուր ժողովի հավանութեանն է դնում հետևյալ առաջարկները:

1. Վարչութեան անդամ Մ. Ավագյանից պահանջել 1673 ո. 65 կ., վորպիսի գումարի կորուստը առաջացել է նրա անփութութեան հետևանքով: Այդ գումարը պիտի մտցվի մինչև 1926 թվի հունիսի 1-ը հետևյալ ժամկետներով. 500 ո.,—1925 թվի հոկտեմբերի 1-ին, 500 ո.—1926 թվի հունվարի 1-ին, մնացորդ 673 ո. 65 կ.—հունիսի 1-ին: Յեթե Մ. Ավագյանը յուր այդ պարտավորութիւնները չկատարի՝ դիմել դատարանին. յեթե Մ. Ավագյանը անկարող է այդ գումարը վճարել՝ պահանջել այն վարչութեան ամբողջ կազմից:

2. Առաջարկել վարչութեանը պահեստից վոչ մի բան փոխ չվերցնել (ապահիկ ապրանքների անվան տակ): Առաջիկայում նման գործողութիւնը համարել հանցագործութիւն:

3. Պահանջել, վոր վարչութիւնը յուր առ հաշիվ վերցրած գումարների հաշվետվութիւնը ներկայացնի գործուղումից վերադառնալուց անմիջապէս հետո:

4. Զգուշացնել վարչութեանը, վոր առաջիկայում վերստուգելի հանձնաժողովի կողմից աննպատակահարմար, անտեղի կամ անխնա (անտնտես) արված ծախսերը վարչութեան անդամների կամ վարչութեան ամբողջ կազմի հաշվին են գրվելու:

5. Նախահաշվից ավելի արած ծախսերի համար վարչութեանը նկատողութիւն անել:

6. Պահանջել, վոր վարչութիւնը առաջիկայում կատարի ընդհանուր ժողովի բոլոր հրահանգներն ու վորոշումները:

7. Ստուգել թե արդյոք ընկերութեան անդամներին փոխ տված գումարները գործադրված են նախորդած նպատակների համար:

8. Ընկերութեան գործերի պատասխանատվութեան համար ստորագրութիւններ վերցնել ընկերութեան այն անդամներից, վորոնցից մինչև այժմ ստորագրութիւններ չեն վերցրած:

9. Ժամկետներն անց կացված պարտապաններից անհապաղ ստանալ բոլոր չվճարված գումարները՝ հակառակ դեպքում դիմել ժողդատարանին:

10. Անհապաղ ձեռք դարկել փայտվճարների գանձմանը:

11. Անհուսալի պարտքերը Մ. Պատվանից 20 ո. և Մ. Մեհակյանից 35 ո. գուրս գրել փաստների հաշվին:

12. 1924 թվի դեկտեմբերի ընդհանուր ժողովի վորոշումները կիրառել:

13. Փնտրել ու գտնել պահեստի համար համապատասխան շենք:

14. Ապահովագրել ընկերութեան գույքը, ու ապրանքները:

15. Ուշք դարձնել գործավարութեան ու հաշվապահութեան կանոնավորութեան վրա:

16. Հաշվապահ Գ. Պետրոսյանի ուժիկն ավելացնել մինչև 60 ու՛ այն պայմանով, վոր նա միայն ընկերութեանն է ծառայելու և կողմնակի աշխատանք չի տանելու այլ հիմնարկներում:

17. Ընկերութեան խորհրդին առաջարկել ավելի գործունյա լինել:

18. Փոխ տված գումարների դիմաց ստացականները, բանկային չեքերի գրքույկը, ընկերութեան կնիքը և այլ կարևոր փաստաթղթերը պահել դրամարկղում:

19. Միջոցներ ձեռք առնել ավանդային գործարքներին դարկ տալու համար:

20. Լիազորել վարչութեանն՝ անհապաղ դիմել գյուղատնտեսական բանկին ու համկոոպբանկին, խնդրելով առաջինից 8000 իսկ յերկրորդից 5000 վարկ:

21. Ընկերութեան բոլոր ապառիկները հավաքել:

22. Ընկերութեան գործունեութեան մտավոր ծրագիր առաջարկել, հանձնարարելով վարչութեանը թե ծրագիր մշակումը և թե նրա հաստատումը անցկացնել խորհրդի միջոցով:

23. Վարչութեան գործնիութեանը համարել անբավարար:

**Ներկա արձանագրությանը կցված են**

Քննութեան առանձին արձանագրութեանները—ապրանքների, գույքի և դրամարկղի ստուգման արդյունքները, այլ և (թվել մեկ-մեկ—այս ինչ փաստաթղթերը):

Ստորագրութեաններ	}	Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ	
		» » անդամներ	
		Վարչութեան անդամներ	1
			2
			3
		Հաշվապահ	

**№ 4 Որինակ (սարեկան հաշվի քննութեան)**

1925 թ. դեկտեմբերի 22-ին Լուսի-Փամբակի դավառի Գյուլաքարակ գուղի սպառողական ընկերութեան վերստուգիչ հանձնաժողովը՝ նախագահութեամբ Բ. Սուքասյանի և մասնակցութեամբ հանձնաժողովի անդամներ Զ. Գարբելյանի և Մ. Մամիկոնյանի, քննութեան յենթարկեց վարչութեան ներկայացրած հաշվետվութեանն առ 1-ն հոկտեմբերի 1925 թվի—տարեկան հաշվետվութեանն և ամբողջ ապրանքի, գույքի, դրամարկղի շրջանառութեանները և մնացորդները:

Հաշվեկշռի և մայր մատյանի մնացորդները համապատասխանում են ստուգման հետևանքով պարզված փաստական մնացորդներին: Մայր մատյանը և ոժանդակ գրքերը նույնպես համապատասխանում են իրար. բոլոր գրանցումները փաստաթղթերով հաստատված են:

(Հետո՛ ինչպես վերև բերված արտակարգ քննութեան որինակի մեջ է ցույց տրված, մեկ-մեկ պիտի թվել յերևան բերված թերութեանները, նկատողութեանները և այլ բացերը՝ հարմարեցնելով վերոհիշյալ որինակը տարեկան հաշվին)

1. Վարչութեան հաշվետվութեանը, վոր ընդգրկում է 1924 թվի հոկտեմբերի 1-ից մինչև 1925 թվի սեպտեմբերի 30 ժամանակաշրջանը—հաստատել՝

կամ

1. Վարչութեան հաշվետվութեանը՝ վոր ընդգրկում է 1924 թվի հոկտեմբերի 1-ից մինչև 1925 թվի սեպտեմբերի 30-ը ժամանակաշրջանը, հաստատել հետևյալ փոփոխութեաններով (թվել, թե ի՞նչ փոփոխութեաններ են առաջարկվում հանձնաժողովի կողմից):

(Այս արձանագրութեանը կցվում են դրամարկղի ապրանքների, գույքի և այլ ունեցվածքի ստուգման տեղեկագրերը այլ և ուրիշ նյութեր, վորոնք անհրաժեշտ են հանձնաժողովի կարծիքով):

Համապատասխան ստորագրութեաններ՝ ինչպես վերև է ցույց տրված:

# ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԵՋ ՎԱՏՆՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅԲԱ- ՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Միջկոոպերատիվ խորհրդի նախագահութեան 1925 թ. սեպտեմբերի վերջումը):

1. Վատնումներ ընդհանուր անվան տակ հասկացվում են կոոպերացիայի ունեցվածքի ամբողջութեան դեմ կատարվող հետեյալ հիմնական հանցագործութիւնները. ա) գողութիւնները, բ) վատնումները, գ) կանխույթների (առ հաշիվ գումարների) իսարը գործադրելը, դ) ապրանքների կամայական ցրումը պատահիւնների անվան տակ, յե) պաշտոնական դիրքի օգտագործումը շահասիրական նպատակով:

2. Այդ հանցագործութիւններն առաջանում են կոոպերացիայի կազմակերպչական պակասութիւններից և կոոպերացիայի անկախ պատճառներից:

3. Կոոպերացիայի մեջ հանցագործութիւններին աջակցող կազմակերպչական պակասութիւններին են վերաբերվում հետեյալները:

ա) Կոոպերացված մասսաների ակտիվութեան ու ինքնագործնեութեան թուլութիւնը:

բ) Վերստուգելի հանձնաժողովի վերակական կազմի ու աշխատանքների թուլութիւնը:

գ) Խանութային հանձնաժողովի համարյա թե լիակատար անգործնեութիւնը:

դ) Կոոպերատիվներից շատերի մեջ հաշվապահութեան անկանոն դրութիւնը:

յե) Վարչութիւնների ու պատասխանատու գործակատարների միջև կնքվող գրավոր պայմանագրերի բացակայութիւնը. այդ պայմաններով վերջված պիտի լինի վերջինների պատասխանատվութեան աստիճանը՝ նրանց հանձնարարված արժեքների ամբողջութեան համար, այլ և պատասխանատվութեան չափն ու ժամկետները:

զ) Արհեստակցական միութիւնների գանգաղկոսութեանը գործակատարների հետ նյութական պատասխանատվութեամբ պայմանագրեր կնքելու խնդրի լուծմանը (ավելի քան մի տարի) իրենց համաձայնութիւնը տալու հարցում:

է) Վերջ նորմաների բացակայութիւնը կամ ավելի շուտ, այդ նորմաների բազմազանութիւնը ապրանքների ու մթերքների բնական պակասորդների և զեղջերի վերաբերմամբ:

ը) Գործակատարների ու պահեստի վարիչների ստուգումների սակավութիւնն ու անփութութիւնը:

թ) սկզբնական կոոպերատիվներին հրահանգչական աշխատանքներով թույլ բավարարելը և առավել ևս հրահանգիչների քննական ու հետազոտական աշխատանքների քննական մեթոդներին ուշ անցնելը:

ժ) Կոոպերատիվների վարչութիւնների կամայական կամ յերեմն ստիպողական ապրանքային վարկավորումը, այլ և գյուղական կոոպերատիվների գործակատարների ապառիկ առևտուրը՝ առանց վարչութեան թուլութեան:

ճա) Վարչական կազմերի հաճախակի փոփոխութիւնները:

ճբ) Պատասխանատու աշխատողների ընտրութեան ու վարձելու խնդրում լուրջ մտեցման կատարյալ բացակայութիւնը՝ վորի հետեանքով շատ հաճախ իրենց վնասակար գործունեութեամբ վարկաբեկված անձինք վոչ միայն կրկին համարժեք պաշտոններ են ստանում կոոպերատիվ ցանցում, այլ և ավելի մեծ պաշտոնների յեն հրավիրվում:

ճգ) Աշխատավարձի չնչին չափը և

ճդ) Կոոպերատիվ դաստիարակչական աշխատանքի թուլութիւնը:

4. Կազմակերպչական պակասութիւններից այլ և կոոպերատիվ բարձր մարմինների կամքից անկախ գծով կատարվող վատմունքների պատճառները հետեյալներն են:

ա) Դատական մարմինների դանդաղ կոտորութիւնը. վորի հետեանքով հանցագործութեան մոմենտից մինչև դատավորութիւնը և դատարանի վճիռ հանելը յերկար ժամանակ են անցնում (հաճախ 1-ից 2 տարի):

բ) Դատարանական վճիռների թուլութիւնը՝ որինակ պայմանական դատապարտում, 2-3 ամիս ազատազրկմամբ՝ պատժի կիրառումը աշխատանքից ազատ ժամանակ. (Ռուսաստանի վերջ նահանգներում):

գ) Դատախազութեան ու դատական մարմինների կողմից վատնումների խնդրի հասարակական լուրջ նշանակութեան առթիվ ունենալիք համապատասխան և հատուկ ուղարկութեան պակասութիւնը:

դ) Չարամիտ հանցագործից կոոպերատիվ տնտեսութեան նյութական վնասների բռնագրավելու հատուկ օրենքի բացակայութիւնը, վորով կարելի կլիներ կոոպերատիվի տնտեսութիւնը վերականգնել՝ առանց յերկար ձգձգումների:

յե) Կոոպերատիվների ընդհանուր կամ լիազորական ժողովների ներողամիտ վերաբերմունքը՝ յերբ նրանց զեկուցվում է գործակատարների ու վարչութիւնի անդամների վատնումների չարաշահութիւնների ու այլ կարգի հանցագործութիւնների մասին:

զ) Վոչ կայուն փողային վալյուտայի ժամանակ հասարակական արժեքների հաշվետու ծայրահեղ դժվարութիւնը, վորի հետևանքով առևտրական հիմնարկութիւնների ծառայողների ճշող մեծամասնութիւնը սովորել է ամեն տեսակի չարաշահութիւններին նայել վորպես նորմալ ու թյուլատրելի մի յերևույթի:

կ) Անբերրութիւնը. այն տեղերում, վորտեղ անբերրութեուն է յեղել՝ կոոպերատիվների վատնումները զգալի չափով շատացել են:

5. Չարաշահութիւնների մեջ մեղադրվող անձինք յերկու կարգի յեն բաժանվում. առաջինը՝ վոր վատնումներ են կատարում պարզ շահագիտական նպատակներով, և յերկրորդները նըրանց աջակիցները (մասնակցողներ): Վատնումները, ինչպես թվական տվյալներն են ապացուցում, կատարում են գլխավորապես կոոպերատիվների ընտրովի մարմինները և պատասխանատու գործակատարները:

6. Չարաշահութիւնների ու վատնումների դեմ կովելու համար կարելի յէ ձեռք առնել յերկու կարգի միջոցներ՝ նախազգուշական ու պատժական նշանակութիւնով:

7. Նախազգուշական միջոցները կայանում են հետևյալում.

**Կոոպերատիվների ընտրովի մարմինների կազմի վերաբերյալ**

ա) Լիակատար կերպով իրականացնել կոոպերացված մասսաների ինքնագործունեութիւնը վարչական մարմինների իրական ընտրողականութիւնի ու հաշվետու լինելու մտքով՝ հաշվետու լինելն ու ընտրողականութիւնը համարելով այն ֆակտորները, վորոնք կոոպերացիայի իսկական ամրացման ու առողջացման զարկ կարող են տալ: Կոոպերատիվների ղեկավար մարմինների մեջ պիտի ընտրել գործնական, հասարակականորեն շիտակ ու ազնիվ աշխատողներ:

բ) Ուժեղացնել վերստուգիչ հանձնաժողովների գործնեութիւնը՝ հատկապես հաճախակի դարձնելով կոոպերատիվների փաստական ու հանկարծակի քննութիւնները:

գ) Ուժեղացնել կոոպերատիվ կենտրոնների հրահանգչական ու քննական աշխատանքները:

դ) Նանուխային (ու ստուգիչ) հանձնաժողովների աշխատանքները կանոնավորել ու ծրագրային դարձնել:

**Կոոպերատիվների սեխնիֆակաց աշխատանքների կազմի վերաբերմամբ**

յե) Հաշվապահութիւն կանոնավորումը: Փողային գործարքների ձևակերպումը հաշվապահութիւնի ձեռքով, հաշիվների ու փաստաթղթերի հաճախակի ստուգումները և վերջապես՝ հաշվապահական կազմի պատասխանատուութիւնը բոլոր գրանցումների ու փաստաթղթերի ճշտութիւնի վերաբերմամբ:

զ) Պատասխանատու աշխատակիցների (զանձապահ, պահեստապետ, գնորդ) հետ պայմանագրեր կազմելը՝ նրանց նյութական պատասխանատուութիւնով: Մեծ կոոպերատիվ կազմակերպութիւններին խորհուրդ տալը՝ ոգտագործել պատասխանատու արտելլիկներին:

կ) Բնական պակասորդների ու զեղջերի միատեսակ նորմաներ հաստատելը:

ը) Սկզբնական կոոպերատիվների դրամարկղի, ապրանքների ու պահեստների մնացորդների սովելի հաճախակի (առնվազը տարեկան 3—4 անգամ) և ուշադիր ստուգումները:

թ) Կոոպերատիվներում ապառիկ բաց թողնել միայն վարչութիւնի վորոշմամբ կամ նրա կազմից հաստատված կարգով. գործակատարի ինքնակամ ապառիկ բաց թողնելը համարել վատնոյմ:

ժ) Հաստատել առհաշիվ գումարներ բաց թողնելու և նրանց հաշիվավութիւնի ժամկետներին ու ձեռի մասին վորոշ կանոններ:

ժա) Ավելորդ գործողութիւնների դեմ կով մղել՝ համարելով այդ կողմնակի ճանապարհով աշխատավարձը բարձրացնելու միջոց:

ժբ) Արգելել ի հաշիվ ոռձիկների կանխույթներ տալը՝ բացի որենքով նախատեսված դեպքերից:

ժգ) Պարտադիր համարել, վոր կոոպերատիվներն իրենց կենտրոնի (միութիւնի) հետ ունեցած փոխադարձ հաշիվների հաշիվները ունենան, վորի մեջ զրվում են փոխադարձ բոլոր գործարքները:

ժդ) Ուշադիր ընտրութիւն կատարել պատասխանատու աշ-

խատակիցներ հրավիրելիս՝ ստուգելով նրանց անցյալ ստաժը: Միջոցներ ձեռք առնել, բարձրացնելու համար այդ աշխատակիցների հասարակական վորակը:

ժյե) Պարզևատրել աշխատակիցներին՝ ամենամեծ առևտրական շրջանառության ու ամենափոքր պակասորդների ու փչացումների համար: Ռոճիկների ավելացում միայն և գլխավորապես այնտեղ, վորտեղ վատնումներ չեն կատարվում և տնտեսական հնարավորությունն այդ թույլ և տալիս:

ժզ) Պարտադիր համարել բոլոր վատնումների ու այլ չարաշահությունների հաշվետուումը. այս մասին կոոպերատիվ կենտրոններին տեղյակ պահել՝ հաղորդելով մեղավորների աննունները՝ վորպեսզի կոոպերատիվ ցանցը զգուշացրվի այդ անձնավորություններից:

ժե) Վատնումներ կատարողների դեմ արհեստակցական գծով կռվի միջոցներ մշակել:

Տ. Պատժական միջոցները պիտի արտահայտվեն հետևյալում.

ա) Բոլոր վատնումների դեպքերում պարտադիր համարել հանցավորներին պատասխանատվության յենթարկելը:

բ) Արագ դատավարություն կատարելը (համաձայն Արդժողկոմի 1925 թվի հունիսի 22-ի № 121 շրջաբերականի) այլ և մանրակրկիտ քննություն վատնումին վերաբերյալ բոլոր պայմանների և բոլոր մասնակիցների վերաբերմամբ: Այդ շրջաբերականի տարածումը միությունական բոլոր հանրապետությունների վրա:

գ) Հանցագործները ունեցվածքի վրա մինչև դատավրություն արգելք դնել, այլ և դատարանի միջոցով բռնագրավել կոոպերատիվի նյութական բոլոր վնասները հանցավորներից:

դ) Իրականացնել ցուցադրական դատարանական պրոցեսների լայն կիրառումը:



## ԲՈՎՆԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

	ՃԵՐԵՍ
Հրատարակություններից . . . . .	3
Ներածություն . . . . .	5
I. ՔՆՆՈՒՐՅԱՆ ԱՅԻՆՆԱՐԱԾԵՏՈՒՐՅՈՒՆԸ . . . . .	8
II. ՎԵՐԱՍՈՒՂԻՅ ԷԱՆՃՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՂՄԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ . . . . .	9
III. ԻՆՅՊԻՍԻ ՔՆՆՈՒՐՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ . . . . .	13
IV. ԻՆՅԻՑ ԵՆ ԸՆԿԵՐՈՒՐՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎՃԱՏՆԵՐ ԱՈՐԱՉԱՆՈՒՄ . . . . .	14
V. ԻՆՅՊԵՍ ԿԱՂՄԱԿԵՐՊԵԼ ՔՆՆՈՒՐՅՈՒՆԸ . . . . .	17
VI. ՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒՐՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ . . . . .	20
VII. ՍՐԺԵՔՆԵՐԻ ՔՆՆՈՒՐՅՈՒՆԸ . . . . .	23
1. Իրամորկղ . . . . .	26
2. Ապրանքներ ու նյութեր . . . . .	32
3. Գույք . . . . .	34
VIII. ՀԱՇՎԱՊԱԽՈՒՐՅԱՆ ՔՆՆՈՒՐՅՈՒՆԸ . . . . .	35
1. Փաստաթղթերը . . . . .	38
2. Մայր մատյան . . . . .	40
3. Ոժանդակ գրքեր . . . . .	41
ա) զանազան անձինք յեւ՛ հիմնարկներ . . . . .	45
բ) ավանդների գիրք . . . . .	46
գ) հաշիվներ անդամների հետ . . . . .	46
դ) անդամավճարների հաշվառման գիրք . . . . .	47
ե) փոխատվությունների գիրք . . . . .	48
զ) այլ ոժանդակ գրքեր . . . . .	95

<b>IX. ԸՆԿերուքյան գործերի առանձին ճյուղերի</b>	
<b>ԲՆՆուքյունք</b>	49
1. Անդամների մատակարարման գործը	51
2. Վաճառահանում ու պատրաստումներ	52
3. Փոխառվություններ	54
4. Արտադրություն	55
5. Գյուղատնտեսական գործունեության	55
6. Կուլտուր-կրթական	56
<b>X. Վարչական մարմինների ընդհանուր բնույթներ</b>	56
1. Վարչություն յեվ խորհուրդ	57
2. Ծառայողներ	58
3. Ֆինանսական (դրամական) միջոցներ	61
4. Յեկամուտներն ու ծախսերը	62
5. Գործավարությունն ու հաշվապահությունը	63
6. Վերաբերմունք դեպի անդամները	64
7.       »       »       միությունը	64
8.       »       »       շրջանի այլ կոոպերատիվները	65
<b>XI. Ինչպես բնույթներ կասարել յերբ հաշվապահություն չի սարվել կամ հաշվապահությունք խճճված է</b>	66
<b>XII. Հանձնաժողովի աճելիքները բնույթներից հետո</b>	69
<b>XIII. Քճճական արձանագրուքյան կազմելը</b>	71
<b>XIV. Քճճական արձանագրուքյունների որինակներ</b>	74
Հավելված 1. Կոոպերացիայի վատնումները դեմ կռվելու մասին (միջ կոոպերատիվ խորհրդի նախագահության 1925 թվի սեպտեմբերի 12-ի վորոշումը)	90

« Ազգային գրադարան



NL0208055

ԳԻՆՆ Ե 70 ԿՈՊ.

ՍԽ-1

ՔՄ-0

ԳՄ